«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԿՄԿ կամ Կենտրոն) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (այսուհետ՝ ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԳԿՄԿ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 21

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 28

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 41

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 48

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 56

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 65

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 70

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 75

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 78

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 83

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 89

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 92

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 95

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 98

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԳԿՄԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 99

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 100

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի[1] կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԳԿՄԿ-ն ՀՀ ԳԱԱ համակարգի ինքնավար գիտակրթական հաստատություն է և ունի ՀՀ ԳԱԱ հիմնարկի կարգավիճակ: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունն է կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված, ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստումը՝ նորարարական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ:

Կենտրոնի հիմնական խնդիրներն են.

ա) բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, նրանց որակավորման բարձրացումը,

բ) գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը,

գ) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգերի մշակումը և արմատավորումը:

Առաջադրված խնդիրներին համապատասխան Կենտրոնն իրականացնում է հետբուհական մասնագիտական կրթություն՝ ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի և դոկտորանտի կրթական ծրագրերով, ինչպես նաև բարձրագույն մասնագիտական կրթություն, այդ թվում վճարովի հիմունքներով՝ մագիստրոսի կրթական ծրագրերով, կիրառելով առկա, հեռակա, հեռավար ուսուցման ձևերը:

Գիտակրթական միջազգային կենտրոնը 2016 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում 2017 թվականին կենտրոնին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով: ԳԿՄԿ-ն կազմել է թերությունների վերացման ծրագիր՝ հաշվի առնելով փորձագիտական զեկույցում առկա խորհրդատվությունները: Կենտրոնը 2018 թվականին ՈԱԱԿ է ներկայացրել վերհանված խնդիրների լուծմանն ու գործընթացների բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի կատարողականի միջնաժամկետ հաշվետվություն: ՈԱԱԿ-ի կողմից

1 Հավելված 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրականները

իրականացվել են թերությունների վերացման ծրագրի միջնաժամկետ մշտադիտարկումներ:

Նախորդ հավատարմագրումից հետո Կենտրոնը քայլեր է ձեռնարկել վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի մշակման ու ներդրման ուղղությամբ: Ամբիոնների կողմից վերանայվել և բարելավվել են ՄԿԾ-ները և դրանց ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Կրթական ծրագրերի նպատակները փոխկապակցված են ՀՀ ԳԱԱ առաջնահերթությունների և հետազոտական ուղղությունների հետ: Կրթական ծրագրերի արդիականացման և ուսանողների ու դասախոսների շարժունությանը նպաստելու նպատակով բենչմարքինգ է իրականացվել համագործակից միջազգային և տեղական բուհերի հետ: Այդուհանդերձ, լավագույն փորձի տարածման մեխանիզմների կիրառումը թույլ կտա նաև այդ փորձը դարձնել համակիրառելի ԳԿՄԿ բոլոր ամբիոնների դեպքում՝ ապահովելով ԳԿՄԿ ՌԾ-ով սահմանված բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Այստեղ ԳԿՄԿ-ը ուշադրության կենտրոնում պետք է պահի նաև բակալավրիատի տարբեր մասնագիտություններից Կենտրոնի մագիստրատուրա ընդունելությունը՝ ապահովելու կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքները:

Կրթական ծրագրերն իրականացվում են համապատասխան որակավորում, գիտամանկավարժական փորձառություն ունեցող դասախոսական կազմի կողմից՝ ներգրավելով նաև ՀՀ ԳԱԱ ինստիտուտների մարդկային և նյութական ռեսուրսները: Կենտրոնը կարիք ունի նաև համապատասխան ուշադրություն դարձնելու դասավանդող կազմի համար վերապատրաստման հնարավորությունների ընդլայնմանը՝ չսահմանափակվելով ԳԱԱ ինստիտուտների կողմից իրականացվող վերապատրաստումներով: ԳԿՄԿ-ն իր կրթական ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու համար ապահովված է նաև համապատասխան նյութատեխնիկական բազայով: Լրացուցիչ հնարավորություն է նաև ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների նյութատեխնիկական ռեսուրսների կիրառումը, այդ թվում նաև ԳԱԱ հիմնարար գրադարանից օգտվելու հնարավորությունը դասախոսական և ուսանողական համակազմի համար: Վերջին տարիներին ռեսուրսներն արդիականացվում և բարելավվում են նաև ԳԿՄԿ մասնակցությամբ միջազգային ծրագրերի միջոցով, ինչը լրացուցիչ հնարավորություն է ստեղծում ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորման համար:

Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ը քայլեր է իրականացրել ՄԿԾ վերջնարդյունքները բարելավելու ուղղությամբ, ներգրավում է համապատասխան մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ և շարունակաբար բարելավում է ենթակառուցվածքներն ու ռեսուրսները, կարելի է եզրակացնել, որ Կենտրոնը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհումը:

Կենտրոնի կանոնադրական նպատակների հիման վրա մշակվել է Կենտրոնի 2019-2023թթ. Ռազմավարական ծրագիրը, որտեղ ներկայացված են Կենտրոնի առաքելությունը, տեսլականը, գործունեության հիմնական ուղղությունները, հիմնարար արժեքներն ու առաջնահերթությունները: ԳԿՄԿ-ի ներքին ու արտաքին շահակիցների հետ իրականացվող հետադարձ կապի միջոցով ստացված տվյալները Կենտրոնը կիրառում է իր ռազմավարական պլանավորման գործընթացներում: Այդուհանդերձ, անհրաժեշտություն

կա տվյալները կիրառել նաև ռազմավարական ծրագրի գնահատման, վերլուծության և հետագա բարելավման գործընթացներում՝ օգտագործելով որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը: Նախորդ հավատարմագրումից հետո ԳԿՄԿ-ը հանձնառություն է վերցրել նաև վերլուծել ու գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետությանը, սակայն համալիր գնահատում իրականացնելու համար նախատեսված ցուցիչների անկատարությունը թույլ չեն տվել այն իրականացնել: Հաշվի առնելով կենտրոնի կազմակերպական կառուցվածքի առանձնահատկությունները՝ կենտրոնում անհրաժեշտություն կա կանոնակարգելու որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու գործընթացները՝ իրավիճակային կառավարումից խուսափելու համար: Սա կարող է խոչընդոտել նաև մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը, քանզի չնայած նրան, որ որակի ապահովման մեխանիզմները բազմազանեցվել են, դրանցում ներգրավվել է շահակիցների առավել լայն շրջանակ, այդուհանդերձ վերլուծական բաղադրիչը վերոնշյալ վերլուծություններում դեռևս թույլ է արտահայտված:

Այսպիսով, հարկ է նշել, որ նախորդ հավատարմագրումից հետո կանոնակարգվել են ռազմավարական պլանավորման գործընթացները, այդուհանդերձ առկա է կառավարման գործընթացների ինստիտուցիոնալացման և տարբեր ամբիոնների ու ինստիտուտների հետ միակերպ համագործակցության ու հաշվետվողականության մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն: Փորձագիտական խումբը կարևորում է նաև որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալների հիման վրա կառավարչական որոշումների կայացումը՝ նպաստելու կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ԳԿՄԿ-ը քայլեր է իրականացրել ուսանողներին մատուցվող ծառայությունների բարելավման նպատակով: Բազմազանեցրել է ընդունելության մեխանիզմները, ներդրել է ընդունելության իրականացման էլեկտրոնային համակարգ: Կենտրոնում գործում են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ (հարցումներ, ֆոկուս-խմբային քննարկումներ): Փորձագիտական այցի արդյունքներն էլ փաստում են, որ կենտրոնի մագիստրանտներն ընդհանուր առմամբ բավարարված են իրենց ստացած ծառայություններից, անհրաժեշտության դեպքում վարչական անձնակազմը ևս պատրաստ է աջակցելու ուսանողներին իրենց հուզող խնդիրները լուծելու համար:

Ուսանողները ներգրավվում են նաև հաստատության գիտահետազոտական աշխատանքներում՝ կատարելով մագիստրոսական թեզեր, իրականացնելով համատեղ հետազոտություններ դասախոսների հետ: ԳԿՄԿ-ը սահմանել է հետազոտական առաջնահերթություններ և գերակայություններ՝ փորձելով դրանք փոխկապակցել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ուղղությունների հետ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հետազոտություններում ուսանողների ներգրավվածության մակարդակը տարբերվում է՝ ըստ ամբիոնների: ԳԿՄԿ առանձին ամբիոններ համագործակցում են եվրոպական համալսարանների հետ, իրականացնում հետազոտական ծրագրեր, սակայն սա դեռևս համատարած բնույթ չի կրում:

ԳԿՄԿ-ը, նպատակ ունենալով զարգացնել իր արտաքին կապերը և ներգրավված լինել միջազգային ծրագրերում, զգալի աշխատանք է իրականացրել արտաքին կապերի

ընդլայնման, զարգացման ու միջազգայնացման ուղղությամբ: ԳԿՄԿ-ն միջազգային համագործակցությունն ընդլայնել է 2016թ.-ին՝ մեկնարկելով ուսանողների, ՊԴ և վարչական կազմերի փոխանակում Էրազմուս+ KA1 ծրագրի շրջանակներում: Այժմ գործում է փոխանակման 8 ծրագիր, իսկ տարբեր ծրագրերի շրջանակներում ԳԿՄԿ-ն համագործակցել և համագործակցում է առավել քան 40 օտարերկրյա բուհերի և գիտակրթական հաստատությունների հետ: Կրթական ծրագրերի բենչմարքինգը ևս լրացուցիչ խթան է եղել շարժունության ծրագրերի իրականացման համար, սակայն այս պարագայում ևս այս գործընթացները ինստիտուցիոնալ մակարդակի բերելու և լավագույն փորձի մեխազնիզմների կիրարկման կարիք կա: ԳԿՄԿ-ը շարունակական ջանքեր է իրականացնում նաև ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացությունը խթանելու ուղղությամբ՝ կազմակերպելով տարաբնույթ դասընթացներ դասախոսների և ուսանողների համար:

Հաստատությունը, հաշվի առնելով նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունները, բարելավել է նաև հաշվետվողականության մեխանիզմները, առավել թափանիցիկ է փորձել դարձնել իր գործընթացները՝ կայքի տարբեր բաժիններում տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Միջազգայնացման միտումները հաշվի առնելով՝ կենտրոնը պետք է կարևորի նաև կրթական ծրագրերի և ընթացիկ գործընթացների թափանցիկ կերպով միջազգային օտարալեզու շահակիցներին հասանելի դարձնելու հանգամանքը:

Այսպիսով, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳԿՄԿ-ը քայլեր է ձեռնարկում իր երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար՝ շարունակաբար բարելավելով ուսանողներին մատուցվող ծառայությունները, նոր համագործակցություններ հաստատելով և զարգացնելով հաշվետվողականության և թափանցիկության ապահովման մեխանիզմները:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ռազմավարական պլանավորման մեխանիզմների առկայությունը և այդ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը,
2. վերջնարդյունքահենք ՄԿԾ-ների մշակմանն ուղղված գործիքների ներդրումը, բենչմարքինգի իրականացման լավ փորձի առկայությունը որոշ ամբիոնների պարագայում,
3. ՄԿԾ մշտադիտարկման իրականացման ընթացակարգերի առկայությունը և դրա ազդեցությունը շարժունության իրականացման վրա,
4. ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
5. կրթության և հետազոտության կապերի հաստատմանն ուղղված ԳԿՄԿ ջանքերը,
6. մասնագիտական համապատասխան որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը,
7. հետազոտական միջավայրի առկայությունը,
8. ԳԱԱ ռեսուրսների համատեղ օգտագործումը ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորման նպատակով,
9. հաշվետվողականության ապահովմանն ուղղված մեխանիզմների կիրարկումը,

10. ՀՀ և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շարունակական աճը,
11. որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մեխանիզմների, կարիքների վերհանման գործիքակազմի բազմազանությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ՌԾ գնահատման և վերանայման գործիքակազմի անկատարությունը,
2. ռազմավարական ծրագրի և միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանավորման միջև առկա խզումը,
3. որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք կիրառումը կառավարման գործընթացներում,
4. մարդկային ռեսուրսների կառավարման, մրցունակ կադրերի ներգրավման և պահպանման մեխանիզմների ոչ լիարժեք լինելը,
5. ֆինանսական երկարաժամկետ պլանավորման և իրականացված ծախսերի արդյունավետության գնահատման պակասը,
6. պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմների ներդրված չլինելը,
7. պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումների արդյունքում մասնագիտական վերապատրաստումների իրականացման պակասը,
8. միջազգային համագործակցության արդյունքում դուրս բերված լավ փորձի տարածման մեխանիզմների անկատարությունը ԳԿՄԿ բոլոր ամբիոնների մակարդակով,
9. ԳԿՄԿ հաշվետվությունների նկարագրողական բնույթը,
10. որակի ապահովման համակարգի հավաքագրած տվյալների հիմք չհանդիսանալը կառավարչական որոշումների կայացման համար:

Խորհրդատվություններ

Առաքելությունը և նպատակները

1. Կենտրոնի հավակնությունների մի մասը վերանայել և դրանք վերաձևակերպել՝ հիմքում ունենալով Կենտրոնի համեմատական առավելությունների, առկա մարդկային կապիտալի ու նյութական ռեսուրսների վերլուծությունը:

2. Ռազմավարական պլանավորման հիմքում դնել պետական առաջնահերթությունների, աշխատաշուկայի, ՈԱՇ-ի բնութագրիչների իրական, փաստաթղթավորված վերլուծությունը:

3. Ռազմավարական պլանավորման արդյունքի գնահատման ցուցիչները դարձնել առավել իրատեսական ու չափելի և դրանք տեսանելիորեն կապակցել նպատակներին, խնդիրներին ու գործողություններին:

4. Առաքելության ու նպատակների գնահատմանն ուղղված հաշվետվություններին հաղորդել վերլուծական բնույթ:

Կառավարումն ու վարչարարությունը

5. Իրականացնել կենտրոնի կառավարման համակարգի մասնագիտական վերլուծություն՝ համեմատական ուսումնասիրության ենթարկելով արդյունավետ կառավարման համակարգ ունեցող տեղական կամ արտասահմանյան բուհերի փորձը, վերհանելով կառավարման ոլորտի խնդիրներն ու բացերը:

6. Իրականացնել մարդկային ռեսուրսների հրապուրման, ներգրավման, պահպանման ու զարգացման համալիր քաղաքականություն:

7. Մշակել և իրականացնել բուհի ներսում լավագույն փորձի տարածման միջոցառումներ:

8. Իրականացնել երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման գործընթացներ ԳԿՄԿ-ի ինչպես կենտրոնական կառավարման, այնպես էլ ստորաբաժանումների մակարդակով:

9. Զարգացնել տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգը՝ դնելով այն որոշումների կայացման հիմքում:

10. Կայքէջում և տեղեկատվական այլ հարթակներում զետեղել կրթական ծրագրերն ավարտած ուսանողների կարիերային, առաջխաղացմանը վերաբերող տեղեկությունները:

Մասնագիտության կրթական ծրագրերը

11. Խթանել արտաքին շահակիցների ներգրավվածությունը՝ ՄԿԾ-ների մշակման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներում:

12. Բարելավել ՄԿԾ-ները՝ ներառելով առարկայական ծրագրերի մակարդակով մանրամասն և չափելի վերջնարդյունքներ, ուսումնառության և դասավանդման մեթոդներ, ինչպես նաև ուսանողներին տրվող հանձնարարությունները:

13. Վերանայել տարբեր բուհերի տարբեր մասնագիտությունների շրջանավարտների (հատկապես բնագիտական, տեխնիկական մասնագիտությունների դեպքում) ԳԿՄԿ մագիստրատուրա ընդունվելու ընթացակարգեր:

14. Կամընտրական կամ լրացական առանձին առարկաների միջոցով լրացնել մագիստրոսական կրթության համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների պակասը՝ նպաստելով բոլոր ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորմանը:

15. Գնահատել բենչմարքինգի և կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքում կատարված փոփոխությունների արդյունավետությունը և տարածել լավ փորձը բոլոր ուղղություններով:

Ուսանողները

16. Դիտարկել ՀՀ ԳԱԱ և ԳԿՄԿ համատեղ ռեսուրսների օգտագործման հնարավարությունները ուսանողներին բոլոր կրթական ծրագրերի մակարդակով հետազոտական գործունեության մեջ ներգրավելու տեսակետից:

17. Բարելավել կարիերային նպաստող ծառայությունները՝ գործատուների առավել լայն շրջանակի ներգրավվման և բուհ-գործատու կապերի ամրապնդման տեսակետից ԳԿՄԿ բոլոր ուղղություններում:

18. Լավարկել ՈՒԽ աշխատանքները առավել շատ ուսանողներ ներգրավելու և ուսանողների իրավունքների պաշտպանության ու ուսանողների կարիքների բացահայտման աշխատանքներ իրականացնելու տեսանկյունից:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

19. ՄԿԾ-ներում սահմանել դասախոսների մասնագիտական գիտելիքների, հմտությունների կարողությունների պահանջներ:

20. Ուսանողների և շրջանավարտների կողմից դասախոսների գնահատման գործընթացն իրականացնել ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական շղթայով և փաստաթղթավորված կերպով:

21. Վերհանել դասախոսների ինքնագնահատման ու գործընկերային գնահատման (Օտար լեզուների ամբիոն), դասախոսների մասնագիտական առաջընթացի, շարժունության կազմակերպման (Բնապահպանության և բնօգտագործման ամբիոն) որոշ դրական դեպքերը և տեղայնացնել մյուս ամբիոններում:

22. Դասախոսների ընտրության և որակավորման բարձրացման գործընթացներում ներդնել դասախոսների ելքային բնույթի կարողություններ ենթադրող չափանիշներ:

Հետազոտությունը և զարգացումը

23. Գիտական հրապարակումների համար լրավճարները դարձնել մրցունակ՝ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների կողմից վճավող լրավճարների համեմատ, որպեսզի դասախոսները շահագրգռված լինեն ներկայանալ որպես Կենտրոնի դասախոս:

24. Դասախոսների և ուսանողների համատեղ գիտական հրապարակումները խթանելու համար արդյունավետ մեխանիզմներ մշակել, մասնավորապես՝ կազմակերպել միջամբիոնային սեմինարներ և կոնֆերանսներ՝ ուսանողների և դասախոսների համատեղ զեկույցների ներգրավմամբ:

25. Միջազգային հետազոտական ծրագրերի խթանմանն ուղղված լրացուցիչ քայլեր ձեռնարկել և տարբեր ամբիոններում առկա լավագույն փորձի տարածման մեխանիզմներ իրականացնել:

26. Խթանել ուսանողների կողմից իրականացվող խմբային հետազոտությունները:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

27. Իրականացնել ֆոնդահայթթման աշխատանքներ՝ այդ թվում տարբեր ծրագրերի և պատվերով հետազոտությունները ակտիվացնելու միջոցով:

28. Բարելավել ֆինանսների բաշխման քաղաքականությունը՝ նպատակուղղելով ըստ ՌԾ և ՄԿԾ նպատակների իրականացմանը:

Հասարակական պատասխանատվությունը

29. Բարելավել հաշվետվությունները՝ առավել թիրախավորելով առաջընթացի վերլուծությունը՝ ըստ ռազմավարական նպատակների:

30. Բարելավել ՄՈՒՀ-ի կայքը՝ միջազգային ուսանողների նեգրավումը ապահովելու նպատակով:

31. Իրականացնել սոց-ցանցերում ՄԿԾ-ների գրավչության ներկայացմանն ուղղված միջոցառումներ:

32. Լավարկել տեղեկատվության տարածման մեխանիզմները՝ հասարակությանը գիտելիքների փոխանցման նպատակով կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ հասանելիությունն ապահովելու նպատակով:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

33. Կենտրոնացված կերպով զարգացնել արտաքին կապերը և խրախուսել քիչ ակտիվ ամբիոններին օրինակ վերցնել միջազգայնացման ոլորտում ամենաակտիվ ամբիոններից:

34. Հատկացնել ֆինանսական խրախուսում այն ամբիոններին, որոնք ամենաշատն են ուսանողներ և դասախոսներ ներգրավում միջազգային փոխանակման ծրագրերում:

35. Ակտիվացնել Երևանում գործող ոչ Հայաստանյան համալսարանների հետ համատեղ որակավորումների շնորհման գործընթացի մեկնարկը (Ֆրանսիական, Սլավոնական, Ամերիկյան համալսարաններ) և ընդլայնել միջազգային կապերի զարգացման իրական հնարավորությունները:

36. Մշակել մեկ ամբողջական ծրագիր օտար լեզվով (ոչ միայն փաստաթղթերի մշակում, այլև դասընթացների իրականացում)՝ բարձրացնելով ԳԿՄԿ-ի միջազգային տեսանելիությունը և Էրազմուս+ փոխանակման ծրագրերի միջոցով ներգրավելով ավելի մեծ թվով ուսանողներ արտերկրից:

Որակի ներքին ապահովման համակարգը

37. Վերանայել որակի կառավարման գործընթացներում ներգրավված պատասխանատուների ծանրաբեռնվածությունը՝ խուսափելով վարչական մեծ բեռնվածություն ունեցող ներկայացուցիչների վրա լրացուցիչ պարտականություններ դնելուց:

38. Կատարելագործել ԳԿՄԿ տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության մեխանիզմները՝ շեշտադրելով որակական վերլուծությունների բաղադրիչը:

39. Վերանայել Որակի ապահովման ձեռնարկը՝ հաշվի առնելով ներկայիս մարտահրավերները:

40. Ապահովել ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը ԳԿՄԿ բոլոր ոլորտներին առնչվող գործընթացներում և բարելավել գործընթացների գնահատման մեխանիզմները:

41. Քայլեր ձեռնարկել ԳԿՄԿ տարբեր ամբիոններում/ինստիտուտներում առկա լավ փորձի դուրսբերման և տարածման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ՝ այս ուղղությամբ մեծազնելով Որակի կենտրոնի դերը:

_____

Մենուա Սողոմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30 դեկտեմբերի 2021 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԳԿՄԿ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Նախքան տարբեր դիտարկումները ներկայացնելը կցանկանայի որպես միջազգային և արտաքին փորձագետ շեշտադրել այցի բարձր որակը և հիանալի մթնոլորտը (անգամ Zoom հարթակում): Այս օրերի ընթացքում ես հնարավորություն ունեցա ուղիղ կապ հաստատելու տարբեր շահակիցների հետ (տնօրեն և փոխտնօրեններ, աշխատակիցներ, ուսանողներ, շրջանավարտներ, տարբեր այլ խմբերի ներկայացուցիչներ) և խորքային քննարկումներ ունենալ նրանց հետ, որի արդյունքում լուսաբանվեցին փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո պարզաբանման ենթակա մի շարք հարցեր: Ընդհանուր առմամբ, տեղացի փորձագետների ու գործընկերների հետ երկար քննարկումներից հետո պարզ դարձավ, որ ԳԿՄԿ-ն կարևոր ջանքեր է գործադրել նախորդ փորձաքննության ժամանակ վերհանված խնդիրների լուծման ու որակի բարելավման ուղղությամբ: Սա հարկավոր է շեշտադրել և ընդունել, քանի որ այդ առաջընթացը պահանջել է շատ ռեսուրսներ՝ առաջադրված խնդիրները լուծելու նպատակով: ԳԿՄԿ-ի անվանումը ներառում է այնպիսի հիմնարար բաղադրիչներ, ինչպիսիք են «հետազոտություն»-ը և «կրթություն»-ը, և այս երկու բառերը համակցելով՝ «միջազգային» բաղադրիչը կարելի է դիտարկել որպես այդ շղթայի երրորդ օղակը: Միայն հիմնվելով դրա վրա՝ ԳԿՄԿ-ն պետք է ամենաարժեքավոր տեղը զբաղեցնի Հայաստանում՝ բոլոր ուսանողներին հնարավորություն ընձեռելով դառնալու երկրի ապագան: Այսուհանդերձ, առկա են որոշակի անհամապատասխանություններ ԳԿՄԿ-ի հավակնությունների և հաստատության ղեկավար կազմի անդամների կողմից նշված հնարավորությունների, ինչպես նաև արտաքին փորձագետների դիտարկումների միջև:

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) (և հետևապես Բոլոնիայի գործընթացին) ամբողջությամբ ինտեգրվելու տեսանկյունից ստորև նախանշվում են դիտարկումներ և դրանց հաջորդող հստակ խորհրդատվություններ, որոնք կօգնեն ԳԿՄԿ-ին հաղթահարել խնդիրները:

1. Կազմակերպական կառուցվածք

Թեև ԳԿՄԿ-ն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որը միտված է բուհն ավարտելուց հետո ուսանողներին բարձրորակ աշխատանք գտնելու լավագույն հնարավորությունների ընձեռնմանը, հաստատության կազմակերպական կառուցվածքը դժվարեցնում է՝

- տարբեր «անկախ» ամբիոնների հետ կապի հաստատումը,
- կրթական ծրագրերի վերաբերյալ հարցումների և դրանց արդյունքների հստակ վերլուծության (Q&A) իրականացումը,
- միջազգայնացման գործընթացը զարգացնելու հնարավորությունը,
- երկարաժամկետ պլանավորմանն ուղղված որոշումների արագ կայացումը,
- հարցումների իրականացման ու արդյունքների վերլուծության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումը:

Ընդհանուր առմամբ, ԳԿՄԿ-ում կառավարումը չի իրականացվում կենտրոնացված ձևով՝ «առաջնորդման իրական ուժով», որը դժվարեցնում է ԳԿՄԿ-ի՝ որպես իրական

կրթական ու հետազոտական ինստիտուտի կայացումը: Նշվածը խոչընդոտում է ԳԿՄԿ-ին ունենալու զարգացման սեփական քաղաքականությունը:

Խորհրդատվություններ

1. Ստեղծել այնպիսի մարմին, որն արտաքին շահակիցների (մասնավոր ընկերություններ, բանկեր, դեղագործական կազմակերպություններ...) ներգրավման և համագործակցության համար ավելի լայն հնարավորություններ կընձեռի: Դա կարող է բարձրացնել ԳԿՄԿ-ի շրջանավարտների տեսանելիության աստիճանը և այդպիսով նաև ընդլայնել աշխատաշուկայում նրանց զբաղվածության հնարավորությունները:
2. Վերակազմավորել ԳԿՄԿ-ի կառավարման համակարգը՝ այն դարձնելով առավել կենտրոնացված և նվազեցնելով ՀՀ ԳԱԱ-ից կախվածությունը:
3. Տնօրենին վերապահել կառավարչի իրական դերակատարությունը՝ ապահովելու երկարաժամկետ տեսլականը:

2. Հետազոտություն

ԳԿՄԿ-ն «հետազոտություն»-ը դիտարկում է եռաբաղադրիչներից մեկը, որը ԳԿՄԿ-ն ավարտած ուսանողներին զբաղվածության ամենալավ հնարավորությունն է ընձեռում, ինչպես բարձր մակարդակում գտնվող եվրոպական համալսարանների մեծամասնության դեպքում: Հետևապես, հետազոտությունը խրախուսվում է կենտրոնի կողմից, սակայն հետազոտական աշխատանքի որակը մեծապես պայմանավորված է ուսանողների մոտիվացիայով:

Խորհրդատվություններ

1. Խրախուսել հետազոտությունը՝ բոլոր ուսանողների համար պարտադիր հատկացնելով որոշակի ժամաքանակ, ընդ որում, ոչ միայն ամառային դպրոցի միջոցով, որտեղ միայն կամավորներն են հաճախում:
2. Հետազոտության զարգացումը վերապահել ԳԿՄԿ-ի կենտրոնական մարմնին և ոչ թե ամբիոններին կամ ստորաբաժանումներին:
3. Զարգացնել հետազոտության և մասնավոր կազմակերպությունների միջև կապը՝ խրախուսելով հետբուհական/հետազոտողի (PhD) ծրագրերի իրականացումը ԳԿՄԿ-ի մասնավոր շահակիցների հետ համատեղ ղեկավարմամբ:
4. Խրախուսել հետազոտական գործունեության և հայ հասարակության միջև կապերը՝ կատարված աշխատանքը պարբերաբար ներկայացնելով հասարակության լայն շերտերին:

3. Միջազգայնացում

Արտաքին կապերի բաժինը քայլեր է ձեռնարկում միջազգային փոխանակումը խրախուսելու ուղղությամբ: Այդուհանդերձ, միջազգային ծրագրերում ակտիվորեն ներգրավված ամբիոններում և ստորաբաժանումներում խնդրահարույց է նշված ոլորտի ուղղությամբ արդյունավետ քաղաքականության իրականացումը: Արդյունքում

փոխանակման ծրագրերի (ուսանողների և դասախոսների) թիվն իրապես քիչ է և չի համապատասխանում ԳԿՄԿ-ի հավակնությանը:

Խորհրդատվություններ

1. Կենտրոնացված կերպով զարգացնել միջազգային կապերը և խրախուսել քիչ ակտիվ բաժիններին օրինակ վերցնել միջազգայնացման ոլորտում ամենաակտիվ ամբիոններից:
2. Հատկացնել ֆինանսական խրախուսում այն ամբիոններին, որոնք ամենաշատն են ուսանողներ և դասախոսներ ներգրավում միջազգային փոխանակման ծրագրերում:
3. Արագացնել Երևանում գործող ոչ հայկական համալսարանների հետ համատեղ որակավորումների շնորհման գործընթացի մեկնարկը (Ֆրանսիական, Հայ-ռուսական, Ամերիկյան համալսարաններ) և ընդլայնել միջազգային հարաբերությունների զարգացման իրական հնարավորությունները:
4. Մշակել մեկ ամբողջական ծրագիր օտար լեզվով (ոչ միայն փաստաթղթերի մշակում, այլև դասընթացների իրականացում): Դա կարող է բարձրացնել ԳԿՄԿ-ի միջազգային տեսանելիությունը՝ Էրազմուս փոխանակման ծրագրի միջոցով ներգրավելով ավելի մեծ թվով ուսանողներ արտերկրից:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Մենուա Սողոմոնյան՝** Երևանի պետական համալսարանի Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու, Հայաստան:
2. **Ժան-Մարկ Լոբակարո՝** Ֆրանսիայի Կլերմոն Օվերն համալսարանի Գենետիկայի, վերարտադրման և զարգացման ինստիտուտի Կենսաբանության ֆակուլտետի դեկան, մոլեկուլային ֆիզիոլոգիայի պրոֆեսոր, Ֆրանսիա:
3. **Սոնա Տոնիկյան՝** Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Արաբագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստան:
4. **Վարազդատ Ավետիսյան՝** Գավառի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Դասախոսների վերապատրաստման և շարունակական կրթության կենտրոնի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստան:
5. **Սոնա Անտոնյան՝** Երևանի պետական համալսարանի «Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրի մագիստրանտ և Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ, Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ, և նշանակվել ՈԱԱԿ տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը:

Թարգմանությունը կատարել է Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս Անի Շահինյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը և թարգմանիչը ստորագրել են գաղտնիության պահպանման և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԳԿՄԿ-ը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, կենտրոնը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ձևավորված խումբը: Խմբում ներգրավվել են ներկայացուցիչներ կենտրոնի վարչական, ուսումնական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմից:

ՈԱԱԿ-ն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: ԳԿՄԿ ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված պահանջներին, առկա են եղել տեխնիկական և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է կենտրոնին, և կենտրոնը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 27.05.2021թ.-ին: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը, կենտրոնի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է կենտրոնի հետ, և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
3. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
4. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խմբի անդամները իրականացրել են նաև կենտրոնի և ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում ու կենտրոններում տեղակայված ԳԿՄԿ ռեսուրսների ու ենթակառուցվածքների դիտարկում: Միջազգային փորձագետը ռեսուրսները դիտարկել է կենտրոնի կողմից պատրաստված տեսանյութերի միջոցով:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

Նախապատրաստական այց

2021 թվականի սեպտեմբերի 8-ին տեղի է ունեցել նախապատրաստական հանդիպում ԳԿՄԿ-ում: Հանդիպման ժամանակ կենտրոնի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021թ.-ի սեպտեմբերի 13-ից 16-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԳԿՄԿ ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը: Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Փորձագիտական այցին և քննարկումներին միջազգային փորձագետը միացել է առցանց տարբերակով: Կիրառվել է Zoom հարթակը: Փորձագիտական այցը սկսվել է ԳԿՄԿ տնօրենի և ավարտվել ԳԿՄԿ ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Իրականացվել են, ըստ ժամանակացույցի նախատեսված, բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[3]: Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ բավարար և անբավարար:

[3] Հավելված 3. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է ԳԿՄԿ լրացրած էլեկտրոնային հարցաշարի, ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, իրականացված առցանց դասալսումների, փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

Միջազգային փորձագետը պատրաստել է նաև գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է Կենտրոնին 29.11.2021թ.-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԳԿՄԿ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 15.12.2021թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 22.12.2021թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ:

Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 30.12.2021թ.-ին:

_____

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

30 դեկտեմբերի 2021

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. 1997 թվականին Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող ասպիրանտուրայի բաժնի հիման վրա ստեղծվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը (ԳԿՄԿ), որի գործունեությունը նպատակաուղղված էր ասպիրանտուրայի, հայցորդության և դոկտորանտուրայի միջոցով ՀՀ ԳԱԱ նյութատեխնիկական բազայի հիման վրա բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը:

2004թ.-ին, հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ հարուստ գիտական ներուժը և մասնագիտական ուսուցման միջազգային չափորոշիչները, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ընդլայնեց իր գործունեությունը՝ կազմակերպելով ուսուցում մագիստրոսական ծրագրերով: ՀՀ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը նպատակ է հետապնդում արագացնելու անցումը կրթությունից դեպի գիտական գործունեության:

Կրթություն. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունն է՝ կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված, ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստում՝ նորարարական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ: Կենտրոնը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է բարձրագույն մասնագիտական (մագիստրատուրա) և հետբուհական կրթական ծրագրեր:

Հետազոտություն. Կենտրոնում շեշտադրվում է ուսուցման գիտականությունն ու հետազոտական բաղադրատարրի գերակայությունը, հիմնվելով այն կարևորագույն փաստի վրա, որ ԳԿՄԿ-ի ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ հետազոտական ինստիտուտներում և գիտական կազմակերպություններում: Այս կարևորագույն հանգամանքը հնարավորություն է ընձեռում կենտրոնի մագիստրանտներին ու ասպիրանտներին իրենց ուսումնառության ընթացքում գտնվել մասնագիտական ակադեմիական միջավարում, ուսումնագիտական ծրագրերի ու հետազոտական աշխատանքների շրջանակներում աշխատել աշխարհահռչակ գիտնականների հետ, օգտվել ԳԱԱ կազմակերպություններում առկա նյութատեխնիկական անհրաժեշտ բազայից, օգտագործել այնտեղ առկա գործիքակազմը:

Միջազգայնացում. ԳԿՄԿ միջազգայնացման հիմնական ու կարևորագույն նպատակն է մագիստրոսների, ասպիրանտների և աշխատակիցների համակողմանի զարգացումը Կենտրոնի ուսումնական, գիտական և մասնագիտական կյանքում, դառնալ գիտակրթական միջազգային բացառիկ կենտրոն՝ ներգրավելով ինչպես հայազգի, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների՝ մագիստրոսների, ասպիրանտների, հայցորդների, դասախոսների, շարունակաբար զարգացնել համագործակցային կապերը արտասահմանյան առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ, իր

վարկանիշին և հեղինակությանը համահունչ կայուն և հաստատուն քայլերով ընդլայնել իր միջազգային ճանաչումն ու համբավը:

Որակի ապահովում. Կրթության որակը Կենտրոնի կողմից դիտարկվում է ոչ միայն որպես ռազմավարական նպատակ գիտելիքահենք հասարակության ստեղծման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար, այլև ներքին և արտաքին ազդակների և մրցակցային դաշտի պայմաններում՝ որպես ռազմավարական միջոց, Կենտրոնի գործունեությունը միջազգային ասպարեզում զարգացնելու համար: Կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է Կենտրոնի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրին:

Կենտրոնը կարևորում է այնպիսի կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների ստեղծումն ու տրամադրումը, որոնք ձևավորված են բավարարելու միջազգային, ազգային և հանրային կարիքները ՀՀ-ում և միջազգային մակարդակներում տնտեսության ու հանրության պահանջների փոփոխությունների կանխատեսմամբ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունը ամրագրված է իր զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում: Համաձայն ծրագրի ԳԿՄԿ-ի առաքելությունն, ի թիվս այլոց, ներառում է գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը՝ նորարարական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ, կրթության միջազգայնացումը և մրցունակության ապահովումը, ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում նորարարությունների ներմուծումը, ակտիվ քաղաքացիական, հասարակական կյանքի բարելավմանն ուղղված գիտակրթական գործընթացի իրականացումը, մասնագիտական առաջխաղացումը ու հարատև ուսումնառությունը:

Համաձայն ռազմավարական ծրագրի՝ Կենտրոնի առաքելության կարևոր բաղադրիչն է աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան մագիստրոսներ և ասպիրանտներ պատրաստելը, ինչը ցույց է տալիս, որ Կենտրոնի առաքելությունը ենթադրում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 7-րդ և 8-րդ մակարդակներին համապատասխանող գործունեություն: Ինչ վերաբերում է Կենտրոնի առաքելության և նպատակների՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի նշված մակարդակների բնութագրիչներին որակապես համապատասխանությանը, ապա այստեղ, առնվազն ֆորմալ առումով համապատասխանության մասին վկայում են հետևյալ հանգամանքները.

· Կենտրոնի առաքելության, տեսլականի ու նպատակադրում արտահայտող գործողությունների մեջ քանիցս հղում արվում է աշխատաշուկայի պահանջներն արտացոլելու հանգամանքին, ինչը համապատասխանում է ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի գիտելիքների հետևյալ բնութագրիչին. «խորը մասնագիտացված գիտելիքներ..., որոնք կիրառվում են ուսումնառության, հետազոտության և աշխատանքի ընթացքում»:

· Նույն այս բնութագրիչով սահմանված այն պահանջը, որ գիտելիքը պետք է կիրառվի հետազոտության մեջ, արտացոլված է Կենտրոնի ռազմավարության այն դրույթներում, որոնք վերաբերում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համար գիտաշխատող կադրեր (որոնց աշխատանքը հետազոտելն է) պատրաստելուն:

· Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագիրը հղում է անում Որակավորումների ազգային շրջանակին. Ծրագրի 2-րդ ուղենիշի (ուսումնագիտական գործունեություն) 1-ին գործողությունը բովանդակում է «կրթական և հետազոտական մասնագիտական ծրագրերի

իրականացում՝ երկրի հեռանկարային զարգացման տեսլականների հաշվառմամբ և որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցմամբ»:

Բուհի գործունեությունը ՈԱՇ-ին կապակցելու արժանահիշատակ հանգամանք է այն, որ ՀՀ ԳԱԱ ինստիտուտները մասնակցում են Որակավորումների ոլորտային շրջանակների սահմանման գործընթացին:

Պետք է նկատել, որ ԳԿՄԿ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը տեսանելիորեն հիմնված չէ պետական առաջնահերթությունների, ՈԱՇ-ի պահանջների վերլուծության և այլ հիմքային փաստաթղթերի վրա: Փորձագիտական խումբը ինքն է վերհանում այդպիսի որոշ մեթոդաբանական կապեր՝ փաստելով դրանց վերաբերյալ վերլուծությունների բացակայությունը: Այսպիսով, Ռազմավարական ծրագրի ընդունումից հետո վերոնշյալ հանձնառությունը (երկրի հեռանկարային զարգացման տեսլականի հաշվառում) Կենտրոնը համակարգված ձևով չի իրականացրել:

Կենտրոնի տեսլականը, որ նույնպես ամրագրված է նրա զարգացման ռազմավարական ծրագրում, բովանդակում է 18 կետից բաղկացած հավակնություններ, որոնք մեկը մյուսից տարբերվում են ինչպես տվյալ հավակնությունների շեշտադրումներով, այնպես էլ նպատակադրումների ժամանակային չափումներով և իրատեսությամբ: Այսպես, տեսլականն արտահայտող դրույթների մեջ կան այնպիսիք (օրինակ՝ «փորձում է իր անվանը համահունչ միջազգային և ներպետական պայմանագրեր կնքել...», «հասանելի է հատկապես գիտության ուղի ոտք դրած երիտասարդների համար և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին»), որոնք ոչ այնքան տեսլական արտահայտող ձևակերպումներ են, որքան այսօրվա իրողությունները կամ բնականոն գործընթացները փաստող ձևակերպումներ: Մյուս կողմից, տեսլականն արտահայտված է այնպիսի խիստ հավակնոտ դրույթներով, ինչպիսիք են, օրինակ՝ «դառնալ միջազգային գիտակրթական բացառիկ կենտրոն՝ ներգրավելով ինչպես հայազգի, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների մագիստրոսների և դասախոսների», «էական դերակատարություն ունի տնտեսական զարգացման ազգային ու տարածաշրջանային նորարարական ծրագրերում»: Եթե հաշվի առնենք, որ նման հավակնությունները ձևակերպվում են ժամանակային որոշակի շրջանակներում, տվյալ դեպքում՝ մինչև 2023թ., մյուս կողմից բուհի զարգացման տեմպերը, ապա պարզ է դառնում, որ հավակնությունների հիմքում ընկած են ոչ այնքան ռացիոնալ գնահատումները, որքան բարի ցանկությունները:

Թեև ԳԿՄԿ-ն ստանձնում է միջազգային գիտակրթական բացառիկ կենտրոն դառնալու հավակնություն, այդուհանդերձ այդ հավակնությունը չի տեղայնացվում իր զարգացման ռազմավարական ծրագրի որոշ վերաբերելի ուղենիշների գործողություններում: Օրինակ՝ միջազգային գիտակրթական բացառիկ կենտրոնի հավակնությունը տեսանելի կերպով արտացոլված չէ ՌԾ-ի 1-ին ուղենիշի՝ «Սովորողների որակական և քանակական աճի ապահովում» ներքո ձևակերպված գործողություններում. հասկանալի չէ, թե օտարերկրյա ուսանողների ներգրավման ուղղությամբ ռազմավարական ինչ քայլեր է պլանավորել Կենտրոնը: ՌԾ-ի 8-րդ ուղենիշի՝ «Միջազգային համագործակցություն» ներքո ձևակերպված գործողություններն էլ, կա՛մ չեն արտահայտում վերոնշյալ ամբիցիան, կա՛մ, դատելով մինչ այս պահը Կենտրոնի միջազգայնացման ցուցանիշներից, կատարված չեն: Օրինակ՝ «Արտասահմանյան

հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում» գործողության առնչությամբ պետք է նկատել, որ Կենտրոնը մինչ օրս չի իրականացնում որևէ ամբողջական համատեղ կրթական ծրագիր արտասահմանյան հետազոտական որևէ համալսարանի հետ: Կատարված չէ «Հեռավար ձևաչափով օտարալեզու դասընթացների մշակում, փորձարկում և կիրառում» գործողության կիրառման բաղադրիչը:

ԳԿՄԿ-ի կրթական ծրագրերի, Կենտրոնի անցած ուղու, փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնի առաքելության բովանդակությունը իրականում երկու հիմնական մաս ունի. մեկը վերաբերում է Ակադեմիայի ինստիտուտների և կենտրոնների համար գիտաշխատող կադրեր պատրաստելուն (խոսքը, հիմնականում, այն կրթական ծրագրերի մասին է, որոնք կատարվում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների ենթակառուցվածքի հիմքի վրա, գերազանցապես սպասարկվում են ՀՀ ԳԱԱ գիտաշխատողների կողմից), մյուսը վերաբերում է աշխատաշուկայի համար պրակտիկ կարողություններ ունեցող կադրեր պատրաստելուն (խոսքը, հիմնականում, այն կրթական ծրագրերի մասին է, որոնք կատարվում են հենց ԳԿՄԿ կազմում հիմնված ամբիոններում (օրինակ՝ իրավագիտության, հոգեբանության և այլ ամբիոններ), որոշ դեպքերում էլ կրկին Ակադեմիայի ինստիտուտների և կենտրոնների ենթակառուցվածքի հիմքի վրա ձևավորված ամբիոններում):

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ԳԿՄԿ-ի տարեկան պլանավորումները ոչ այնքան բխում են ռազմավարական ծրագրից, որքան իրենցից ներկայացնում են ավանդույթի ուժով ձևավորված տարեկան օպերացիոնալ պլանավորումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բուհում ռազմավարական պլանավորման ու իրականացման գործընթացները արհեստավարժ կազմակերպելու հարցում մարդկային ռեսուրսի խնդիր կա:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա ԳԿՄԿ կողմից կազմված բարելավման պլանում Կենտրոնը նախատեսել էր ակտիվացնել շահակիցների (հատկապես շրջանավարտների) մասնակցությունը կենտրոնի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացներին: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս հանձնառության կատարումը, այն էլ մասամբ, վերաբերում է հիմնականում մշակման բաղադրիչին, իսկ իրականացման, գնահատման ու բարելավման շրջափուլերը չեն փակվել: Այսպես, ակնհայտ է, որ Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման գործում մասնակցություն են ունեցել ներքին շահակիցները (ԳԿՄԿ-ն իր ներքին շահակիցներ է համարում ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմին): Իսկ արտաքին շահակիցներ են համարվում դիմորդները, շրջանավարտները, գործատուները, պետական մարմինները, տեղական և միջազգային գործընկերները: Փոքր-ինչ առանձնահատուկ է իրավիճակը՝ կապված ՀՀ ԳԱԱ նախագահության և շրջանավարտների մի մասի՝ կենտրոնի

արտաքին շահակից հանդիսանալու հանգամանքի հետ. փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀՀ ԳԱԱ նախագահությունը ֆունկցիոնալ առումով գրեթե չի հանդիսանում նույն այն մարմինը, ինչպիսին հանրային բուհերի համար հանդիսանում են խորհուրդները/հոգաբարձուների խորհուրդները: Այն շրջանավարտները, որոնք աշխատանքի են անցնում ՀՀ ԳԱԱ կառուցվածքում, որպես գիտաշխատողներ, այսպիսով ոչ միանշանակ կերպով են հանդիսանում Կենտրոնի արտաքին շահակիցներ, հաշվի առնելով Կենտրոնի ու Ակադեմիայի ինստիտուտների շատ գործառույթների սերտաճած վիճակը): Համաձայն ԳԿՄԿ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրի նախաբանի՝ Ծրագիրը մշակվել է ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումների գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ակադեմիական բազմաոլորտային մասնագիտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների դաշտի վերլուծության արդյունքները: Ակնհայտ է, որ Կենտրոնը կազմակերպում է հանդիպում-քննարկումներ գործատուների ու շրջանավարտների հետ. այդ հանդիպումները, որպես կանոն, ապահովում են հետադարձ կապ Կենտրոնի կրթական ծրագրերի վերաբերյալ: Մինչդեռ Կենտրոնի առաքելության, նպատակների, խնդիրների ու գործողությունների վերաբերյալ ներքին, առավել ևս արտաքին շահակիցների հետ շահագրգիռ քննարկումների վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնի հաշվետվություններում բացակայում են: Բացի այդ, հարկ է նշել, որ Կենտրոնի ռազմավարական պլանավորումը ներառում է տվյալներ, որոնք ստացվում են ուսանողների, շրջանավարտների հարցումներից ու հարցազրույցներից, գործատուների հետ հանդիպումներից, այդուհանդերձ որևէ փաստաթղթավորված վերլուծություն, որը կվերաբերեր այդ տվյալների և Կենտրոնի ռազմավարական պլանավորման միջև կապերին, չկա:

Նույն իրողությունը վերաբերում է նաև հետևյալ փաստին. 2020թ. մայիսին ԳԿՄԿ-ն ընդունել է իր առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) համակարգը, որը մշակվել է կենտրոնի աշխատակիցներից, ուսանողներից ու շահակիցներից կազմված աշխատանքային խմբի կողմից: Իսկ ԳԱՑ-երի ձեռքբերվածության վերաբերյալ փաստեր հաշվետվություններում բացակայում են: ԳԱՑ համակարգի վերանայման, գնահատման, բարելավման գործում շահակիցների մասնակցության վերաբերյալ ինքնավերլուծությունն ու փորձագիտական խումբը փաստեր չի արձանագրել:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները հիմնականում երեքն են.

1. Հաշվետվությունները (ԳԱԱ նախագահությանը տրվող տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնի գիտխորհրդին տրվող կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները),

2. ԳԿՄԿ առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) համակարգը,
3. Ներքին ոչ ֆորմալ հաղորդակցությունը Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման, դրանց արդյունավետության վերաբերյալ:

ԳԿՄԿ-ում առկա է վարից վեր հաշվետվողականություն: ԳԿՄԿ կառուցվածքում գտնվող ամբիոնները (նրանք, որոնք չեն գործում ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների ենթակառուցվածքի բազայի վրա) և վարչական ստորաբաժանումները իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացնում ԳԿՄԿ գիտական խորհրդին, ԳԿՄԿ տնօրենն էլ տարեկան հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԳԱԱ նախագահությանը: Հաշվի առնելով ԳԿՄԿ կառուցվածքի ու կառավարման համակարգի առանձնահատկությունը՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների ենթակառուցվածքի վրա բազավորված ամբիոնների հաշվետվողականությունը իրականացվում է ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների կողմից ԳԱԱ նախագահությանը տրվող հաշվետվողականության ընթացակարգի շրջանակներում: Թեև ԳԿՄԿ-ի հաշվետվությունները պարունակում են Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրի ուղենիշների շրջանակներում ձևակերպված գործողությունների կատարողականն արտահայտող փաստեր, այնուամենայնիվ այդ հաշվետվությունները թվարկման ու նկարագրության տրամաբանությամբ են գրված, վերլուծական կողմը գրեթե բացակայում է: Չի գնահատվում, օրինակ, թե արձանագրված ձեռքբերումները որքանով են բխում պլանավորման տրամաբանությունից, պլանավորված և տվյալ տարում կատարվելիք, բայց չկատարված գործողություններն ինչու՞ չեն կատարվել, որտե՞ղ է թերացել Կենտրոնը կամ ի՞նչ օբյեկտիվ իրողություններ են խոչընդոտել և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ԳԿՄԿ զարգացման ռազմավարական ծրագիրը կառուցված չէ նպատակ-խնդիր-գործողություն տրամաբանությամբ, փոխարենը ծրագրում առաքելությունն ու տեսլականը ձևակերպված են երկարաշունչ ու ըստ էության նպատակադրումներ արտահայտող տեքստերով, իսկ գործողությունները խմբավորված են ըստ Կենտրոնի գործունեության ուղղությունների. համենայն դեպս ՌԾ-ում այդ ուղղությունները (ՌԾ-ում ձևակերպված են որպես ուղենիշներ) նպատակադրումներ արտահայտող ձևակերպմամբ չեն ներկայացված: Մյուս կողմից առկա չէ ռազմավարական ծրագրից բխող գործողությունների պլան-ժամանակացույց, փոխարենը, Կենտրոնը նման պլան-ժամանակացույց է իր համար դիտարկում նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ստեղծված բարելավման պլանը:

Ինչպես վերը նշեցինք, 2020թ. մայիսին ԳԿՄԿ-ն ընդունել է իր առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) համակարգը: Հատկանշական է, որ նշված ԳԱՑ-երը ձևակերպված չեն ՌԾ-ի գործողությունների, դրանք ընդհանրացնող ուղենիշների կառուցվածքին համապատասխան: Ավելին՝ դրանցից որոշները որոշակիություն ու հստակություն չեն արտահայտում (օրինակ՝ «կենտրոնի հետազոտական նախագծերին մասնակցությունը, այդ թվում՝ գիտամանկավարժական համակազմ, ասպիրանտներ,

մագիստրոսներ», «միջազգային գիտաժողովներ, գիտական պարբերական, համագործակցության ծրագրեր, գիտական թեմաներում ներգրավվածություն», «կենտրոնի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճի տեմպերը» և այլն. այսպիսի ձևակերպմամբ ԳԱՑ-երը ցույց չեն տալիս, թե ինչ խնդիրներ են դրվում Կենտրոնի առաջ): ԳԱՑ-երի ձեռքբերվածության վերլուծությունը հաշվետվություններում կամ առանձին այլ փաստաթղթերում բացակայում է: ԳԱՑ համակարգի վերանայման, գնահատման, բարելավման վերաբերյալ տեղեկատվություն, առավել ևս վերլուծություն դեռևս չկա ըստ երևույթին այն պատճառով, որ դրանց ընդունումից անցել է ընդամենը մեկուկես տարի: Ուստի պարզ է դառնում, որ ԳԿՄԿ առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործընթացների ՊԻԳԲ շրջափուլը փակված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ԳԿՄԿ-ում ռազմավարական պլանավորումը կարևորելու, Կենտրոնի առաքելությունը Որակավորումների ազգային շրջանակի հետ կապակցելու հանգամանքները: Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրում իր գործունեության բոլոր ուղղությունները ուղենիշների տեսքով ընդգրկելը և դրանց ներքո համապատասխան գործողություններ ձևակերպելը հնարավորություն է տալիս առավել լայն ու ամբողջական տեսնել Կենտրոնի գործունեությունը: Միևնույն ժամանակ Կենտրոնի մարդկային կապիտալի ու նյութական ռեսուրսների, առավել ևս կառավարման որակին ոչ համահունչ ամբիցիաներ ստանձնելը էապես բարդացնում է Կենտրոնի գործունեության ապագայամետ, ռազմավարահեն գնահատումը, ուստի ԳԿՄԿ-ն կշահի, եթե հաջորդ հնգամյա ռազմավարական պլանավորման գործընթացում իրատեսական գնահատական տա միջազգային գիտակրթական բացառիկ կենտրոն դառնալու իր հավակնությանը, նամանավանդ, որ գործող ռազմավարության մեջ միջազգայնացման ուղղությունը նշված հավակնությանը և կենտրոնի անվանը համահունչ կերպով նպատակադրված չէ, պլանավորված գործողությունների զգալի մասը կատարված չէ և վերլուծված չէ դրա պատճառը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԳԿՄԿ-ի հետ անմիջաբար և անուղղակիորեն առնչվող գիտնականների՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցությունը որակավորումների ոլորտային շրջանակի սահմանման գործընթացին՝ դա համարելով ԳԿՄԿ-ի առաքելությունն ու նպատակները ՈԱՇ-ին տեսանելիորեն կապակցելու հնարավորություն: Այդուհանդերձ, մի կողմից ռազմավարական պլանավորման, մյուս կողմից՝ պետական առաջնահերթությունների, աշխատաշուկայի պահանջների, ՈԱՇ-ով սահմանված 7-րդ և 8-րդ մակարդակների բնութագրիչների միջև կապերի վերլուծությունների բացակայությունը նվազ արժանահավատ է դարձնում Կենտրոնի ռազմավարական պլանավորման մեթոդաբանական հիմքը:

Փորձագիտական խումբը համարում է, որ ԳԿՄԿ-ի ներքին ու արտաքին շահակիցների հետ իրականացվող հետադարձ կապի միջոցառումներից ստացված տվյալները Կենտրոնը կիրառում է իր ռազմավարական պլանավորման գործընթացներում և դրականորեն է վերաբերվում այս իրողությանը: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ այդ միջոցառումների (հարցումներ, ֆոկուս-խմբեր, հանդիպումներ) արդյունքները չեն վերլուծվում, ստացված տվյալները հստակ չեն ձևակերպվում, տեղ չեն գտնում Ռազմավարական ծրագրի վերլուծական հիմքում ու հաշվետվություններում,

փորձագիտական խումբն արձանագրում է այս բացը՝ այն համարելով ռազմավարության պլանավորման, իրականացման, գնահատման ու բարելավման շղթայի ամբողջացումը խոչընդոտող գործոն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ռազմավարական ծրագրի արդյունքի գնահատման ցուցիչների լրակազմի մշակումը ԳԿՄԿ-ի կողմից՝ դա համարելով առաքելության ու նպատակների իրականացումը գնահատելու և բարելավելու կարևոր պայման, սակայն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ 2018թ. պլանավորած և 2019թ.-ից գործող ՌԾ-ի համար ԳԱՑ լրակազմը ընդունվում է 2020թ. կեսերին, այնինչ այդ երկու գործողությունները անհրաժեշտ էր միաժամանակ անել, քանի որ ցուցիչ մշակելը պլանավորման բաղկացուցիչ մաս է և արվում է գործողությունները պլանավորելիս: Ըստ այդմ ՌԾ-ի գործողությունների և ԳԱՑ լրակազմի որոշ իմաստային կամ ժամանակագրական անհամապատասխանությունները խնդիրներ կարող են առաջացնել ցուցիչային հենքով ռազմավարական քայլերի իրականացումը գնահատելիս: Նույնը վերաբերում է նաև այն հանգամանքին, որ ՌԾ-ն կառուցված չէ նպատակ-խնդիր-գործողություն սկզբունքով, որպեսզի գնահատելիս հնարավոր լինի հասկանալ, թե որքանո՞վ են կատարվել գործողություններն ու որքանո՞վ են դրանք մոտեցրել սահմանված նպատակների իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ն ունի իր գործունեության բովանդակությունը հիմնականում արտահայտող առաքելություն, որը վերաբերում է գիտության, կրթության և արտադրության/կիրառության միջև կապին, որ դրանում որոշակիորեն արտացոլված են շահակիցների կարիքները, որ դիտարկելի է այդ առաքելության իրականացումը՝ այն է՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների համար գիտաշխատողների պատրաստումը, սերնդափոխության ապահովումը, աշխատաշուկայի համար պրակտիկ կարողություններով կադրերի պատրաստումը, որ առկա են արդյունքների գնահատման որոշ ցուցիչներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Գիտակրթական միջազգային կենտրոնը՝ որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, ունի կառավարման, կարգավիճակային, կազմակերպական առանձնահատկություններ: Այն ՀՀ ԳԱԱ հիմնարկ է[4]: ԳԿՄԿ-ի կառավարման իրավական հենքն են կազմում Կենտրոնի կանոնադրությունը, Զարգացման ռազմավարական ծրագիրը, Կենտրոնի կառավարման և վարչարարության քաղաքականությունը, Կենտրոնի ներքին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, տարբեր կանոնակարգեր և նորմատիվային այլ փաստաթղթեր: ԳԿՄԿ-ի կառավարման մարմիններն են ՀՀ ԳԱԱ նախագահությունը, ԳԿՄԿ գիտական խորհուրդը, ԳԿՄԿ տնօրենը: ՀՀ ԳԱԱ նախագահությունը ֆունկցիոնալ առումով մասամբ նմանվում է բուհերի կառավարման խորհուրդներին, քանի որ լսում և գնահատում է ԳԿՄԿ-ի ամենամյա հաշվետվությունը, հաստատում է ԳԿՄԿ տնօրենի՝ գիտական խորհրդում կայացած ընտրությունը: 2019-2023թթ ռազմավարական ծրագրի գերնպատակներից մեկն է համարվում կենտրոնի կառավարման համակարգի կատարելագործումը և կառավարման արդյունավետության և թափանցիկության ապահովումը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կազմակերպական կառուցվածքը համապատասխանում է վերջինիս առաքելությանը, արտահայտում անձնակազմի կարիքներն ու ցանկությունները և ենթարկվում պարբերական վերանայման՝ ռազմավարության և մարտավարության փոփոխություններին համահունչ: Դեռևս նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանում ԳԿՄԿ-ն հանձն էր առել վերլուծել և գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչպես նաև վերլուծել և գնահատել կառավարման համակարգի արդյունավետությունը: Այս ամենն իրականացնելու համար պլանավորվել էր արտաքին փորձագետների աջակցությամբ մշակել Կենտրոնի կառավարման համակարգի արդյունավետության գնահատման ցուցիչներ, ըստ այդ ցուցիչների գնահատել կառավարման համակարգի արդյունավետությունը, ի վերջո գնահատել Կենտրոնի գործող կառուցվածքի համապատասխանությունը ՌԾ նպատակներին և խնդիրների լուծմանը: Հարկ է նշել, որ այս գործընթացը չի փաստաթղթավորվել. բացակայում են համապատասխան վերլուծություններն ու գնահատումները մեկ կամ մի քանի փաստաթղթերի տեսքով: Հայտնի չէ, թե այս գործընթացում վերլուծական հիմքով ինչ խնդիրներ են վերհանվել, ինչն է գնահատվել արդյունավետ, ինչը՝ ոչ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված գործընթացը տեղի է ունեցել հատվածաբար, այն էլ բանավոր-աշխատանքային քննարկումների ձևով, առանց ցուցիչների ներդրման ու մասնագիտական գնահատման: Արդյունքում կատարվել որոշ փոփոխություններ, որոնցից են գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնի ստեղծումը, դեկանատի և ուսումնական մասի գործառույթների հստակեցումն ու տարանջատումը: Հարկ է ընդգծել նաև, որ

[4] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

կառավարման համակարգի արդյունավետության համալիր, փաստաթղթավորված գնահատում այդպես էլ տեղի չի ունեցել: Այժմ էլ բացակայում են գնահատման հստակ կառուցակարգերը. Մասնավորապես, չկան ռազմավարական նպատակներին ու գործողություններին կապակցված արդյունքի գնահատման ցուցիչներ, որոնք թույլ կտան գնահատել գործընթացների արդյունավետությունը: Ու թեև նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ն հանձն էր առել մշակել ռազմավարական ծրագրի և Կենտրոնի պլանների գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել ՌԾ մշտադիտարկում և գնահատում, պետք է նշել, որ գործընթացը համաձայն պլանավորված բաղադրիչների տեղի չի ունեցել, իսկ ՌԾ-ի գնահատում, որպես այդպիսին, խիստ մասնակիորեն է տեղի ունենում, ինչի վկայությունն է ամենամյա հաշվետվությունների զուտ նկարագրողական բնույթն ու ՌԾ-ին բովանդակային առումով թույլ կապակցվածությունը:

ԳԿՄԿ-ի կառավարման համակարգն աչքի է ընկնում երկու կարևոր առանձնահատկությամբ: **Առաջինը** կապված է բուհերին բնորոշ՝ կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմին (խորհուրդ) ըստ էության չունենալու հետ: Ինչպես վերը նշեցինք, կառավարման խորհրդի որոշ սահմանափակ գործառույթներ իրականացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից: Պետք է նկատել սակայն, որ ԳԱԱ նախագահության գործառույթների մասշտաբն ընդգրկում է ողջ Ակադեմիան՝ իր բոլոր ինստիտուտներով ու կենտրոններով, որոնցից մեկն է ԳԿՄԿ-ն: ԳԿՄԿ-ի ներքին ու արտաքին շահակիցները լայնորեն ներկայացված չեն ԳԱԱ նախագահությունում (և չեն էլ կարող ներկայացված լինել), ԳԿՄԿ-ի գործունեությանն անդրադարձն էլ որպես կանոն տարեկան մեկ անգամ է տեղի ունենում ԳԱԱ նախագահությունում, կապված ամենամյա հաշվետվությունների ներկայացման հետ: Այս հանգամանքներով պայմանավորված՝ ԳԱԱ նախագահությունը փաստորեն ծավալուն քննարկումներ չի իրականացնում ԳԿՄԿ գործունեության տարբեր ոլորտների, կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ (կամ հնարավորություն չունի այդ ամենն անելու), չի վերլուծում Կենտրոնի ամենամյա գործունեության ցուցանիշների՝ վերջինիս ՌԾ նպատակներին ու խնդիրների համապատասխանելիությունը և այլն: Սա թույլ է տալիս համոզվելու, որ ԳԿՄԿ-ն ըստ էության չունի կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմին, որը կվերահսկի Կենտրոնի՝ որպես բուհի գործունեությունը, կուղղորդի այն, խնդիրներ կդնի նրա առջև: Կոլեգիալ կառավարման մյուս մարմինը՝ ԳԿՄԿ գիտխորհուրդն այս հարցով չի կարող փոխարինել կառավարման խորհրդին, քանի որ գիտական խորհրդի անդամների կեսը Կենտրոնի վարչական աշխատակիցներն են, ինչը վկայում է այն մասին, որ խնդիր դնել-կատարել-վերահսկել-գնահատել շղթան չի գոյանում: **Երկրորդը** կապված է մի կողմից ԳԿՄԿ-ի վարչական կազմի, մյուս կողմից՝ ուսումնական հիմնական ստորաբաժանումների՝ ամբիոնների միջև ֆունկցիոնալ ու կարգավիճակային հարաբերությունների խնդիրների հետ: Այսպես, ԳԿՄԿ ամբիոնների մի մասը ձևավորվել և գործում են անմիջապես ԳԿՄԿ կառուցվածքի մեջ ու ԳԿՄԿ-ին պատկանող ենթակառուցվածքի վրա: Դրանք են կառավարման, օտար լեզուների, հոգեբանության, լրագրության, մանկավարժության և սոցիոլոգիայի, տնտեսագիտության, իրավագիտության ամբիոնները: Լինելով անմիջաբար ԳԿՄԿ-ի համակարգում՝ առավել հստակ ու դյուրին է հաշվետվողականության կառուցակարգերի կիրառումն ու վերահսկողություն իրականացնել այս ամբիոնների նկատմամբ: Մինչդեռ կան ամբիոններ, որոնք հիմնվել և գործում են ԳԱԱ ինստիտուտների ու կենտրոնների շենքային ու լաբորատոր ենթակառուցվածքի վրա, իսկ մարդկային կապիտալը, այդ թվում՝ ամբիոնների վարիչները, այդ ինստիտուտների և կենտրոնների հաստիքային աշխատակիցներն են (դրանցից են, օրինակ՝ արևելագիտության ամբիոնը, որ գործում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնը ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում,

միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության ամբիոնը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում և ևս 12 նման ամբիոններ): Այս երկրորդ խումբ ամբիոնների հետ ԳԿՄԿ-ի հարաբերությունները ֆորմալ առումով թեև չեն տարբերվում առաջին խումբ ամբիոնների հետ հարաբերություններից, այդուհանդերձ նշված ինստիտուտների հետազոտական գերակայությունները, կորպորատիվ մշակույթն ու ավանդույթները, որոշների ֆիզիկապես հեռու տեղակայվածությունը և այլ հանգամանքներ հնարավորություն չեն տալիս ԳԿՄԿ ղեկավարությանը՝ նույն արդյունավետությամբ խնդիրներ դնել այդ ամբիոնների առջև, կյանքի կոչել հաշվետվողականության ու վերահսկողության մեխանիզմները[5]:

Փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում փորձագիտական խումբը պարզեց, որ նախորդ հավատարմագրումից հետո ԳԿՄԿ-ն բարելավել է իր գործունեության հետևյալ ցուցանիշներն ու գործընթացները.

- Ներդրվել է էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգը: Համակարգի գործադրման որակն ու արդյունավետությունը տարբերվում է ամբիոնից ամբիոն, նույնիսկ դասախոսից դասախոս. մի դեպքում, օրինակ, օգտագործվում են հարթակի շատ հնարավորություններ (առաջադրանքներ, ֆորումներ, թեսթային վարժություններ և այլն), մեկ այլ դեպքում հարթակում ընդամենը տեղադրվում են ուսումնական նյութերը:
- Սահմանվել են գրեթե բոլոր վարչական պաշտոնների նկարագրերը: Հատկանշական է, որ այս գործընթացը տեղի է ունենում նախորդ հավատարմագրման բարելավման պլանով ստանձնած պարտավորության շրջանակներում, այն է՝ հստակեցնել բոլոր ստորաբաժանումների պատասխանատվությունները, ներդնել պաշտոնների անձնագրերի համակարգ: Պաշտոնի որոշ անձնագրերում, սակայն, առկա են իմաստային խնդիրներ. օրինակ՝ ամբիոնի վարիչի պաշտոնի անձնագրում առկա է իրավունքների և իրավասությունների կամ գործառույթների շփոթ (որպես ամբիոնի վարիչի իրավունք է ներկայացված ամբիոնի նիստեր վարելը, ամբիոնի դասալսումներ իրականացնելը, ամբիոնի ուսումնական և գիտամեթոդական աշխատանքները վերահսկելը և այլն): Փորձագիտական այցն էլ ցույց տվեց, որ չնայած պաշտոնների անձնագրերի առկայությանը՝ վարչական հաստիքներում նշանակումները դեռևս չեն կատարվում մրցութային հիմունքներով: Ճիշտ է, կայքէջում դրված են մի քանի թափուր պաշտոնների հայտարարություններ (նշված են տեղակալման չափանիշները) այդուհանդերձ վարչական պաշտոնների մրցութային ընտրության ընթացակարգի բացակայությունը հասկանալի չի դարձնում, թե ինչպե՛ս է տեղի ունենում հավակնորդի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության գնահատումը: Բացի դրանից, նկարագրերի սահմանման ժամանակից հետո տեղի ունեցած որոշ նշանակումներ իրականացվել են ոչ մրցութային հիմունքներով[6]:
- Կատարվել են մարդկային ռեսուրսների համալրման որոշ աշխատանքներ, մասնավորապես որակի ապահովման և արտաքին կապերի ու միջազգայնացման ուղղություններով. ներդրվել են որակի ապահովման բաժնի մասնագետի, սոցիոլոգի, արտաքին կապերի բաժնի գլխավոր և առաջատար մասնագետների հաստիքները: Փաստաթղթերի ուսումնասիրումն ու փորձագիտական այցը տեսանելի դարձրեցին այս հաստիքների ազդեցությունը որակի ապահովման և միջազգայնացման գործընթացների ցուցանիշների բարելավման վրա, միևնույն ժամանակ, վերհանելով

[5] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:
[6] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

այն հանգամանքը, որ ինչպես նշված, այնպես էլ այլ նոր ներդրված հաստիքների արդյունավետությունը Կենտրոնում չի վերլուծվում:

- Առանձնացվել և հստակեցվել են ուսումնական մասի և դեկանատի գործառույթները՝ առաջինին վերապահելով կազմակերպչական, երկրորդին՝ մոնիտորինգային-վերահսկողական գործառույթներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցը ԳԿՄԿ-ի կառավարման համակարգի և գործընթացների առնչությամբ վերհանեցին նաև հետևյալ իրողությունները.

1. ԳԿՄԿ-ն կենտրոնաձիգ կառավարում իրականացնելու խնդիր ունի: Փաստացի ԳԿՄԿ-ի ամբիոնների մեծ մասն օգտվում է լայն ինքնավարությունից՝ կրթական ծրագրերի որակի ապահովման, միջազգայնացման, կադրային քաղաքականության, ընդունելության կազմակերպման և այլ ոլորտներում: Ներքին ինքնավարության այս պատկերը որպես այդպիսին բացասական չհամարելով հանդերձ՝, ցանկանում ենք նշել, որ սա դժվարեցնում է ԳԿՄԿ-ի գործը՝ դառնալու կենսունակ ու կայուն կրթական ու հետազոտական բուհ՝ զարգացման ուրույն քաղաքականությամբ ու ընթացակարգերով: Սրանով է պայմանավորված նաև կրթական ծրագրերի որակի, միջազգայնացման և այլ ոլորտների ձեռքբերումների տարբերությունները ամբիոնից ամբիոն[7]:
2. Չնայած այն հանգամանքին, որ զարգացման ռազմավարական փաստաթղթով ԳԿՄԿ-ն որդեգրել է միջազգային գիտակրթական բացառիկ կենտրոն դառնալու հավակնություն, այդուհանդերձ բուհի ներսում կա համաձայնություն առ այն, որ Կենտրոնի առաքելությունը հիմնականում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների և կենտրոնների համար գիտաշխատող կադրերի, ինչպես նաև աշխատաշուկայի համար պրակտիկ մասնագետների պատրաստումն է:
3. Կենտրոնի աշխատակիցների և ուսանողների թիվը մեծ չէ, ինչի շնորհիվ աշխատանքային հարաբերությունները կառուցվում և կարգավորվում են անմիջական շփումների վրա:
4. Հնարավոր չի լինում հաճախ գնահատել ֆինանսական միջոցների բաշխման հիմքում որքանո՞վ են ընկած ռազմավարական ծրագրով նախատեսված գերակայությունները, քանի որ նախ՝ առկա չէ եկամտային ու ծախսային բացվածքներով, համապատասխան վերլուծություններով ու կանխատեսումներով ձևավորված բյուջե, երկրորդ՝ ռազմավարական պլանով նախատեսված գործողությունները մեծամասամբ ընդհանրական են ձևակերպված, առանց որոշակիացնող ցուցիչների: Այս տեսանկյունից շահեկանորեն առանձնանում է հետևյալ հանգամանքը. ԳԿՄԿ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում առանձին նպատակադրում կա տեղեկատվական ռեսուրսների զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հետ կապված: Այդ նպատակադրման ներքո շարադրված են մի շարք որոշակիորեն չափելի գործողություններ, օրինակ՝ կենտրոնում գործող հեռավար ուսուցման էլեկտրոնային համակարգի զարգացում, կենտրոնի ներքի կառավարման էլեկտրոնային համակարգի կատարելագործում, կենտրոնի տեղեկատվական համակարգերի սերվերային պարկի արդիականացում և այլն: Փորձագիտական այցի շրջանակներում ռեսուրսների դիտարկումը, ինչպես նաև վերջին շրջանում համապատասխան հաստիքների ներդնումը ցույց տվեց, որ ռազմավարական նշված գերակայության իրականացման համար բուհը հատկացնում է համապատասխան ռեսուրսներ:
5. ԳԿՄԿ ղեկավարությունը թեև կարողանում է տեղորոշել իր լավագույն փորձը (փորձագիտական հանդիպումների ժամանակ հաճախ մատնանշվում էին

[7] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի բազայի վրա գտնվող ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի հաջողությունները), սակայն դեռևս չի տիրապետում լավագույն փորձի տարածման մեխանիզմներին: Սա նաև պայմանավորված է ԳԿՄԿ-ամբիոններ վերոնշյալ անհամամասնական հարաբերությունների գործոնով: Դիտարկենք ERASMUS+ MENVIPRO նախագծին ԳԿՄԿ-ի մասնակցության դեպքը: Այս նախագծի հայաստանյան գործընկերները երկուսն են՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն և ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը: Հիշեցնենք, որ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում էլ տեղակայված է ԳԿՄԿ բնապահպանության ու բնօգտագործման ամբիոնը Թեև ընդունելի է, որ մի խումբ դասախոսներ նախագծում ներգրավվել են հենց ԳԿՄԿ-ի բնապահպանության ու բնօգտագործման ամբիոնի քվոտայով, այդուհանդերձ, փորձագիտական խմբի ստացած տպավորությամբ՝ ԳԿՄԿ-ի՝ այս նախագծում ներգրավվելու իմպուլսը գալիս է էկոլոգանոոսֆերային կենտրոնից՝ հաշվի առնելով վերջինիս կադրային, կորպորատիվ մշակութային, ավանդութային առանձնահատկությունները (դրական իմաստով): այլ ամբիոնների՝ ERASMUS + կարողությունների զարգացման նախագծերում ներգրավվածության բացակայությունը վկայում է, թե ինչու ԳԿՄԿ ղեկավարությունը միարժեքորեն չի կարող նման խնդիրներ դնել մյուս ամբիոնների առջև[8]:

6. Վարչական, պրոֆեսորադասախոսական, տեխնիկական-սպասարկող անձնակազմերի աշխատավարձերը ցածր են (դասախոսները վարձատրվում են ժամավճարային հիմունքներով՝ հաշվի առնելով լսարանային բեռնվածությունը, քննություններն ու ստուգարքները (օտար լեզվով դասավանդելու համար գիտությունների թեկնածուն ստանում է 3500 դրամ, դոկտորը՝ 4000 դրամ մեկ ժամի համար, ներառյալ հարկերը), դասախոսի արտալսարանային աշխատանքը չի վարձատրվում), իսկ ուսանողների թվի էական ավելացման, միջազգային դրամաշնորհների ներգրավման, ֆոնդահայթայթման գործառույթների ներդրման հետ կապված անբավարար միտումները հույսեր չեն ներշնչում մոտ ապագայում դրանց նշանակալի աճի հարցում: Այս առումով որոշակի հույսեր առկա են կառավարության ծրագրով գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման հետ կապված:
7. Ի հեճուկս միջազգայնացման բարձր հավակնությունների, առկա չեն Կենտրոնում լավագույն մասնագետներին (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավելու վերաբերյալ նպատակադրումներ: Սա նաև կարող է պայմանավորված լինել աշխատավարձերի ցածրության վերոնշյալ խնդրով:
8. Անձնակազմի կառավարման բաժնի առջև չի դրվել խնդիր՝ մշակելու և իրագործելու մարդկային ռեսուրսների ներգրավման, պահպանման, առաջխաղացման և մոտիվացման համալիր ու համակարգված քաղաքականություն, հոգ չի տարվել նշված գործառույթներն ապահովող աշխատակիցների վերապատրաստման կամ նոր կադրերի ներգրավման մասին:

Դեռևս 2017թ. ընդունվել է ԳԿՄԿ էթիկայի կանոնագիրքը, ինչը, սակայն, բուհում առանձնակի ճանաչում չունեցող փաստաթուղթ է:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հավատարմագրման նախորդ գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ն հանձն էր առել ապահովել դասախոսների և ուսանողների ավելի լայն և գործնական մասնակցությունը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում:

[8] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Բարելավման այս գործողության շրջանակներում նախատեսվել էր ուսումնասիրել դասախոսների և ուսանողների կարծիքը իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության մասին, գործող կանոնակարգերում հստակեցնել և ավելացնել դասախոսների և ուսանողների ավելի լայն և գործնական մասնակցությունը կառավարման գործընթացներում, ինչպես նաև իրազեկել դասախոսներին և ուսանողներին կանոնակարգերով նրանց վերապահված հնարավորությունների մասին:

ԳԿՄԿ-ի զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում մի քանի գործողություններ են նշված, որոնք վկայում են իրենց առնչվող որոշումների կայացմանը ներքին շահակիցներին ներգրավելու հարցին Կենտրոնի կողմից կարևորություն տալու մասին: Այսպես, ՌԾ-ի 5-րդ ուղենիշի (ուսանողների հետ տարվող աշխատանքներ) շրջանակներում պլանավորված է իրականացնել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ապահովման գործողություններ, 10-րդ ուղենիշի շրջանակներում էլ նախատեսված է շահակիցների հետ բաց երկխոսությունների, նրանց ներգրավվածության ապահովում, կենտրոնի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն: Պետք է նկատել, որ նշված գործողություններից որոշներն ընդհանրական են ձևակերպված, ռազմավարական պլանում նպատակներին ու գործողություններին կապակցված չեն գնահատման ցուցիչներ, ինչպես նաև ամենամյա հաշվետվությունները նկարագրողական բնույթի են ու հպանցիկ՝ ռազմավարական գործողությունների խորությամբ վերլուծական հաշվետվություն ներկայացնելու հարցում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունում (որը, համաձայն ինքնավերլուծության, Կենտրոնի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է) ԳԿՄԿ շահակիցները ներկայացված են միջնորդավորված կերպով (խոսքը նախագահության որոշ անդամների մասին է, ովքեր արտաքին համատեղությամբ դասավանդում են ԳԿՄԿ մագիստրատուրայում), իսկ ԳԿՄԿ վարչական կազմը, ամբիոնի վարիչները փաստորեն ներկայացված չեն այդ մարմնում:

Կառավարման կոլեգիալ մյուս մարմնում՝ գիտական խորհրդում, ԳԿՄԿ վարչական կազմի ներկայացուցիչների հետ միասին ընդգրկվում են նաև որոշ դասախոսներ և ամբիոնի վարիչներ, ինչպես նաև Կենտրոնի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը ուսանողների մասնակցությունը հիմնականում աշխատանքային կարգով է տեղի ունենում, իսկ գիտական խորհրդում ուսանողության ներկայացուցիչներն ազատ են բարձրացնելու ուսանողներին հուզող հարցերը: Դասախոսների մասնակցության հիմնական ձևաչափն ամբիոնների նիստերն են, որոնց մի մասը (խոսքը այն ամբիոնների մասին է, որոնք գտնվում են ԳԱԱ ինստիտուտների բազայի վրա) զուգորդվում է ինստիտուտների գիտական խորհուրդների նիստերով:

Ինքնավերլուծությունը հարցումները և ԳԿՄԿ ֆեյսբուքյան էջի շրջանակներում հաղորդակցությունը համարում է ԳԿՄԿ ներքին շահակիցների՝ իրենց առնչվող որոշումներին մասնակցության միջոց, ձև: Փորձագիտական խումբը դա համարում է մասնակցության միջնորդավորված ձև, քանի որ հարցումների պարագայում ավելի շատ ապահովվում է հետադարձ կապ, իսկ ֆեյսբուքյան էջի ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, որ էջում թեև պարբերաբար թարմացվում են նորությունները, բայց այն քննարկման բաց հարթակի այդպես էլ չի վերածվել:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Գիտակրթական միջազգային կենտրոնում երկարաժամկետ պլանավորումները իրականացվում են ռազմավարական ծրագրի տեսքով: Ինչպես գիտենք, ներկայում այդ պլանավորումն ամփոփված է ԳԿՄԿ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում, որը, սակայն, չունի ժամանակացույց-պլան՝ հստակ ժամկետներով ու պատասխանատուներով, ինչը հնարավորություն կտար որոշակիացնել պլանավորումը:

Միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները ո՛չ ռազմավարական ծրագրում, ո՛չ էլ նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանում կարևորված չեն: ԳԿՄԿ-ում փաստաթղթավորված միջնաժամկետ պլանավորումներ առկա չեն: Թեև «ԳԿՄԿ կառավարման և վարչարարության քաղաքականություն» փաստաթղթում հիշատակվում է մարտավարական պլանավորման մասին (մինչև 1 տարի), ինչի բովանդակությունը չի բացվում, սակայն ենթադրելի է, որ գործ ունենք ՌԾ-ից որոշակիորեն բխող կարճաժամկետ պլանավորման հետ: Ինչ վերաբերում է ստորաբաժանումների տարեկան պլաններին, ապա այստեղ կարճաժամկետ պլանավորման որոշ տարրեր առկա են: Այդուհանդերձ ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլանները ոչ այնքան ռազմավարական ծրագրի տրամաբանությունից բխող պլաններ են, այլ որքան բնականոն գործունեություն ապահովող օպերացիոնալ պլաններ:

Համաձայն ինքնավերլուծության՝ վարչական ստորաբաժանումների և ամբիոնների տարեկան հաշվետվությունները լսվում են գիտական խորհրդում և քննարկվում: Այս հանգամանքը, ինչ-որ տեղ կարճաժամկետ պլանավորման գնահատման մեխանիզմ համարելով հանդերձ, պետք է նկատել, որ դրանց փաստաթղթային վիճակներն ամենևին էլ հնարավորություն չեն տալիս գնահատել այդ պլանավորումները: Արևելագիտության, բնապահպանության և բնօգտագործման, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնների տարեկան «աշխատանքային պլան և հաշվետվություն» փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տարվա աշխատանքների կատարողականը պարզապես թվարկվում է, լավագույն դեպքում կարճ նկարագրվում (օտար լեզուների ամբիոնի պարագայում): Փորձագիտական խումբը միևնույն ժամանակ ըմբռնումով է մոտենում այն հանգամանքին, որ որակյալ կառավարման համար պահանջվող մանրակրկիտ փաստաթղթավորում իրականացնել հնարավոր չէ հատկապես ցածր վարձատրության ու աշխատանքային մեծ բեռնվածության պայմաններում, ինչը մտահոգության առարկա էր փորձագիտական որոշ հանդիպումների ժամանակ:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համաձայն ԳԿՄԿ զարգացման 2019-2023թթ. ռազմավարական ծրագրի նախաբանի՝ Ռազմավարական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ակադեմիական բազմաոլորտային մասնագիտական և ուսումնահետազոտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների դաշտի, Կենտրոնի կարողությունների և գործունեության միջավայրի վերլուծության արդյունքները: Այս հանգամանքն ի ցույց է դնում, որ Կենտրոնը կարևորում է իր գործունեության ռազմավարական պլանավորման հարցում հնարավոր ազդակները վերհանելու և տվյալներ հավաքագրելու հանգամանքները:

Ինքնավերլուծության մեջ, կրկնելով 2019-2023թթ. ՌԾ-ի հիմքում ընկած հիմնախնդիրների նկարագրության հատվածը, ներկայացվում է, որ ՌԾ-ի մշակման

աշխատանքային խումբը այդ հիմնախնդիրները ձևակերպել է մանրամասն ուսումնասիրությունների արդյունքում: Արժանին մատուցելով աշխատանքային խմբին, փորձագիտական խումբը, միևնույն ժամանակ, հաշվի առնելով ձևակերպված հիմնախնդիրների քանակն ու բովանդակային տարողունակությունը, գտնում է, որ նման եզրահանգումները չէին կարող պայմանավորված լինել մեկ աշխատանքային խմբի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով, քանի որ այդ խնդիրները խիստ ծավալուն են՝ որպես հետազոտական նյութ դիտարկելու առումով: Դրան գումարած՝ առկա չեն ինչպես այդ ուսումնասիրությունները, այնպես էլ պետական առաջնահերթություններ (կառավարության ծրագիր, ոլորտային ռազմավարություններ և այլն) կամ գլոբալ կառավարման գերակայություններ (ՄԱԿ-ի, այլ միջազգային կազմակերպությունների ռազմավարական փաստաթղթեր) պարունակող փաստաթղթերին հղումները՝ որպես փաստաթղթային-մեթոդաբանական հենք: Ինչ խոսք, նման հիմնախնդիրների ձևակերպումը կարող է տեղի ունենալ դրանց ընդհանրական ընկալումից ելնելով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իր գործունեությանն առնչվող արտաքին ազդակներ ԳԿՄԿ-ն տարբեր կերպ, տարբեր խողովակներով ստանում է. այդ միջոցներն են.

- ԳԿՄԿ-ում մեծ թիվ կազմող արտաքին համատեղող դասախոսների հետ շփումները: Նրանց մի մասը ներկայացնում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր գիտական կազմակերպություններ, և, ելնելով գիտաշխատողի իրենց առաքելությունից ու գործառույթներից, շփվում են գիտական աշխարհի հետ, ստանում նորություններ, տեղեկանում զարգացումներից և ներգրավվում դրանցում: Մյուս մասը պետական և մասնավոր հատվածների աշխատակիցներն են, ովքեր ևս տեղյակ են աշխատաշուկայի հարաճուն փոփոխություններից:
- Գործատուների հետ կազմակերպվող հանդիպումները:
- Ուսանողների պրակտիկաների արդյունքների դիտարկումները: Ուսանողները, ովքեր պրակտիկա են անցնում պետական և միջազգային դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերում կամ գործատու կազմակերպություններում, առերեսվում են գիտության ու աշխատաշուկայի առաջադրած խնդիրներին և այդ խնդիրների ուսումնասիրությունն իրականացնում իրենց մագիստրոսական թեզերում. ինֆորմատիկայի, բնապահպանության և բնօգտագործման, հոգեբանության կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների դիտարկումը ապացուցում է այդ հանգամանքը (մինչդեռ, օրինակ, թուրքագիտության ծրագրի ուսանողների մագիստրոսական որոշ թեզերի թեմաներ, օրինակ, «Կին միսիոներներ» կազմակերպության ներկայացուցիչ Կատարինե Բոդիլ Բյորնի կյանքն ու գործունեությունը», «Կինը խեթական տերության տնտեսաքաղաքական և սոցիալ-մշակութային կյանքում», այնքան էլ չեն խոսում նշված դիտարկման օգտին):

Այլ հարց է, թե ինչպես են այդ ազդակները ի մի բերվում, հավաքագրվում որպես տվյալներ, վերլուծվում և կիրառվում:

Իրականացվում են ուսանողների, դասախոսների, շրջանավարտների հարցումներ: Շրջանավարտների հետ անցկացվում են նաև ֆոկուս-խմբային հարցազրույցներ, որոնց արդյունքում հավաքագրվում են արժեքավոր տվյալներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տվյալների մի մասը հասնում է հասցեատերերին: Օրինակ՝ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը տեղյակ էր իր որոշ դասախոսների վերաբերյալ շրջանավարտների հայտնած կարծիքներից: Սակայն չկան տվյալների վերլուծումը բովանդակող փաստաթղթեր, ինչը խոսում է այն մասին, որ տվյալների

հավաքագրում-վերլուծություն-քննարկում-խնդիրների ընկալում-հանձնարարությունների ձևակերպում-իրականացում շղթան խիստ հատվածաբար է գործում:

Այն հանգամանքը, որ ԳԿՄԿ կառավարման գործընթացին անմիջաբար չեն մասնակցում արտաքին շահակիցները (գիտական խորհրդում ԳԱԱ ոլորտից դուրս գտնվող արտաքին շահակիցներ չկան, ԳԱԱ նախագահությունում էլ նույնիսկ ԳԿՄԿ-ն անմիջաբար ներկայացված չէ), ավելի է նվազեցնում բուհի հնարավորությունները՝ իր գործունեության վրա ազդող գործոնները վերհանելու առումով:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Դատելով ԳԿՄԿ-ի նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանում բուհի ստանձնած հետևյալ պարտավորությունից՝ վերանայել Կենտրոնի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում, պարզ է դառնում, որ ԳԿՄԿ-ում որակի կառավարման սկզբունքի տարրերն սկսել են ներդրվել 2017թ.-ից, երբ Կենտրոնն առաջին անգամ անցնում էր ինստիտուցիոնալ հավատարմագրում:
Որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի խոսույթի սկզբնավորումն ինքնին դրական ազդեցություն է գործում որոշ գործընթացների վարչարարության վրա:

Ինքնավերլուծությունը հղում է անում ԳԿՄԿ կառավարման և վարչարարության քաղաքականությունն ու ընթացակարգը բովանդակող փաստաթղթին՝ դրան վերագրելով Կենտրոնի կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները կազմակերպող ու իրականացնող գործառույթ, մինչդեռ այդ փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն լավագույն դեպքում հանդես է գալիս որպես մեթոդական, աջակցող ձեռնարկ հիմնականում կենտրոնական ապարատի համար՝ կառավարման գործընթացը ՊԻԳԲ տրամաբանությամբ առաջ տանելու հարցում: Համաձայն ինքնավերլուծության՝ նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով նախատեսված վերոնշյալ գործողության շրջանակներում, ԳԿՄԿ աշխատակիցների շրջանում իրականացվել է հարցում, գնահատվել է կառավարման և վարչարարության արդյունավետությունը, որի արդյունքներն օգտագործվել են 2020թ. տեղի ունեցած ԳԿՄԿ կառուցվածքային փոփոխությունն իրականացնելիս: Այս փաստը վկայում է այն մասին, որ ԳԿՄԿ-ում հիմնականում կառավարման մակարդակով կատարվում են որոշ գործընթացների գնահատման և բարելավման փուլերը, մինչդեռ բարելավման պլանով նախատեսված, բայց ավարտին չհասած բազում գործընթացներ էլ վկայում են դրանց՝ միայն առաջին փուլն անցած լինելու մասին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳԿՄԿ-ի առանձին փոքրաթիվ ստորաբաժանումներում է, որ յուրացված է որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքն ու մշակույթը: Օրինակ, օտար լեզուների ամբիոնը իր պլանավորած գործընթացներն իրականացնելիս, հանդիպելով որոշ խնդիրների միջգիտակարգային դասընթացների դասավանդման պրոցեսում, ինքն է դիմել որակի ապահովման բաժնին՝ համապատասխան գործիքակազմով ձեռնամուխ լինելու խնդիրների վերհանմանը, ինչից հետո կատարվել է բարելավման աշխատանքը: Նման նախաձեռնությամբ հանդես են եկել նաև տնտեսագիտության և բնապահպանության և բնօգտագործման ամբիոնները[9]: Պարզ դարձավ նաև, որ գնահատման գործընթացները երբեմն կատարվում են ՊԻԳԲ շղթայի հաջորդական տրամաբանությունից դուրս, աշխատանքային կարգով: Օրինակ՝

[9] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

միջազգային հարաբերությունների կրթական ծրագրի մեջ տեսական-պատմական բաղադրիչի գերակայությունն ու պրակտիկ բաղադրիչի սակավությունը բացահայտվել է ոչ թե այդ ծրագրի մոնիտորինգի գործընթացում (ինչը հենց ՊԻԳԲ շղթայի «Գնահատում» օղակն է հանդիսանում), այլ դեկանի և ավագների միջև տարեկան երկանգամյա պարբերականությամբ հանդիպումների ժամանակ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության, փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցից ստացած տեղեկությունների, ԳԿՄԿ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը իրականացվում է Կենտրոնի և նրա ստորաբաժանումների հաշվետվությունների, ուսանողական և շրջանավարտների հարցումների, կրթական ծրագրերի մոնիտորինգի գործիքակազմի, դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցումների, ուսանողների, դասախոսների և գործատուների հետ տարվող քննարկումների, հանդիպումների, սեմինարների միջոցով, ինչպես նաև օգտագործելով Կենտրոնի կայքէջի հետադարձ կապի հատվածը, ֆեյսբուքյան էջը:

Հարկ է նշել, որ այս գործիքները հիմնավորապես չեն գնահատվել այն տեսանկյունից, թե որքանով են արդյունավետ: Հաշվետվությունների նկարագրողական-թվարկողական բնույթը խոսում է այն մասին, որ քննարկում չի եղել (կամ անարդյունք է եղել) այն մասին, թե հաշվետվությունների ներկայիս բովանդակությունն ու ձևերը որակի ապահովման տեսանկյունից որքանո՞վ են արժանահավատ, որքանո՞վ են խնդիր վերհանող: Հասկանալի է, որ տեղեկատվության հավաքագրման վերը նշված գործիքների միջոցով ստացված տվյալները որոշ չափով դրվել են որոշումների կայացման հիմքերում և որոշ գործընթացների լավարկման հանգեցրել:

Իրականացված հարցումների ու ֆոկուս խմբային հարցազրույցների արդյունքների ուսումնասիրությունը հնարավորություն չտվեց հասկանալու, թե շահակիցները որքանո՞վ են այդ մեխանիզմները կարևորում, համարում արդյունավետ: Մեկ-երկու տարբեր թեև առկա են դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման հարցումներում (օրինակ՝ կայքէջից (որպես ինչ-որ կերպ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմից) գոհունակության մասին հարցը), այդուհանդերձ հարցման ձևը նախ չի բացահայտում շահակիցների կարծիքը այդ մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ, երկրորդ՝ ո՛չ հարցման արդյունքների վերլուծության, ո՛չ էլ կայքէջի ուսումնասիրությունից պարզ չի դարձել, թե նրանց տված առաջարկությունները կայքէջի բարելավման առնչությամբ որքանով են իրականացվել:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

ԳԿՄԿ կայքէջում (տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին) առկա է կայքից շահակիցների գոհունակության հարցման հղում, որը, համաձայն ինքնավերլուծության, նպատակ ունի պարզելու, թե ուսանողները և աշխատակազմը որքանով են գոհ կայքում ներկայացված նյութերից, որոնք են կայքի հիմնական թերությունները և առավելությունները, արդյոք առկա են անհրաժեշտ նյութերը և այլն: Պարզվել է, որ կայքից գոհունակության հարցման վերլուծություն իրականացվել է ընդամենը մեկ անգամ՝ 2016-2017թթ ընթացքում հավաքագրված տվյալների հիման վրա: Համաձայն

ինքնավերլուծության՝ այդ հարցման արդյունքներն օգտագործվել են կայքի մեջ բարելավումներ իրականացնելու համար, օրինակ՝ զետեղվել են դասընթացների օրերը, ուսանողներին վերաբերող որոշ իրավակարգավորումներ և այլն: Դատելով կայքէջի ուսումնասիրությունից՝ պարզ է դառնում, որ շահակիցների շատ կարևոր առաջարկություններ այդպես էլ տեղ չեն գտել այստեղ (տարբեր ֆակուլտետների ուսանողների գործունեությանը վերաբերող նյութեր, ենթամենյու լավագույն ուսանողների մասին, առավել մանրամասն տեղեկատվություն կրթական ծրագրերի, յուրաքանչյուր ամբիոնում դասավանդվող դասընթացների, դասախոսների կենսագրությունների վերաբերյալ):

Ինքնավերլուծության մեջ ԳԿՄԿ մասին տեղեկատվության տարածման հիմնական գործիքներ են նշվում Կենտրոնի կայքէջն ու ֆեյսբուքյան էջերը, նկարագրվում են, թե ինչ կարգի տեղեկություններ են զետեղվում այստեղ, այդուհանդերձ ինքնավերլուծության այս հատվածը գրեթե չի անդրադառնում սույն չափորոշչի պահանջին՝ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներին: Կայքէջից գոհունակության վերաբերյալ հարցման, դրա արդյունքների վերլուծության դեպքը ինչ-որ առումով կարելի է բացառություն համարել, այդուհանդերձ հարցման բովանդակությունը ուղղակիորեն չի առնչվում կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկություններին:

Կայքէջի շրջանավարտների բաժնում ներկայացված են ԳԿՄԿ-ի 16 շրջանավարտների հետ կարճ հարցազրույցներ: Ներկայացված են այն շրջանավարտները, որոնք այս կամ այն չափով հայտնի են հանրությանը, հաջողություններ են գրանցել մասնագիտական ոլորտում կամ կարիերայում: Այս հարցազրույցները կարող էին համարվել ԳԿՄԿ կողմից շնորհվող որակավորումների մասին որակական տեղեկատվության միջոցներ, եթե պարզապես հարցերն այնպես դրված լինեին, որոնց պատասխանները կվերհանեին ԳԿՄԿ դերի առանձնահատկությունը՝ շրջանավարտների մասնագիտական ու կարիերային կայացման հարցերում: Մինչդեռ ԳԿՄԿ-ի դերի, ներդրման մասին շրջանավարտների խոսքերը հիմնականում ընդհանրական բնույթի են (ԳԿՄԿ-ն տվել է գիտելիքներ, ընկերներ, ծանոթներ և այլն), ինչը լիարժեք չի արտացոլում որակական տեղեկատվությունը:

Բացի այդ, ինչպես ինքնավերլուծությունն ու տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից, այնպես էլ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այսօրինակ տեղեկատվությունները չեն վերլուծվում ու գնահատվում կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների որակի դիրքերից: Օրինակ, հնարավոր է, որ շրջանավարտների այս հարցազրույցների հանգամանքը ներքին, աշխատանքային կարգով քննարկված լինի, սակայն հայտնի չէ, թե ինչ խնդիրներ են արժանացել ուշադրության, ինչ թերություններ են վերհանվել, ինչ է նախատեսվել շտկել և այլն: Պետք է նշել նաև, որ կայքէջում բացակայում են դասընթացների ծրագրերը (դասընթացների տեղեկագրքերում դրանք խիստ համառոտ են ու մեծամասամբ ենթարկվում են ամենամյա մեխանիկական թարմացման), կրթական ծրագրերի մասին այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են կարիերայի հնարավորությունները, դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումները, շարժունության հնարավորությունները և այլն, որոնք կարող էին հանդիսանալ կրթական ծրագրերի և որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկություններ:

Դատողություններ: Թեև նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ԳԿՄԿ-ն հանձն էր առել հիմնովին վերլուծել ու գնահատել Կենտրոնի կառուցվածքի համապատասխանությունը ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչպես նաև

կառավարման համակարգի արդյունավետությունը, այդուհանդերձ այդ ուղղություններով չեն տարվել հիմնավոր մասնագիտական աշխատանքներ, չեն իրականացվել փաստաթղթավորված վերլուծություններ, տեղի չի ունեցել կառավարման համակարգի համալիր, փաստաթղթավորված գնահատում, այժմ էլ բացակայում են գնահատման հստակ կառուցակարգերը, չկան ռազմավարական նպատակներին ու գործողություններին կապակցված արդյունքի գնահատման ցուցիչներ, որոնք թույլ կտան գնահատել գործընթացների արդյունավետությունը, ինչի պատճառով Կենտրոնը դեռևս ի վիճակի չէ գնահատել իր կառավարման համակարգի արդյունավետությունը՝ որդեգրված նպատակների ու հավակնությունների համատեքստում: Ելնելով այդ հանգամանքներից՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարումը ԳԿՄԿ-ում առավելապես իրավիճակային է ու ոչ խարսխված ռազմավարական նպատակադրումների վրա: Կենտրոնի ռազմավարական ծրագրի և պլանների գնահատման և վերանայման գործընթացները համաձայն պլանավորված բաղադրիչների տեղի չունենալը, ՌԾ-ի գնահատումը խիստ մասնակիորեն կատարելը, հաշվետվությունները զուտ նկարագրողական ձևով իրականացնելը նվազեցնում է Կենտրոնի կառավարման համակարգը գնահատելու հնարավորությունը իր իսկ համար և ուստի աղոտ է դարձնում կառավարման համակարգի ու գործընթացների զարգացման հեռանկարները:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ԳԿՄԿ-ում կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմնի ըստ էության գոյություն չունենալու հանգամանքը թույլ չի տալիս վերահսկել Կենտրոնի՝ որպես բուհի գործունեությունը, ուղղորդել այն, խնդիրներ դնել նրա առջև: Կոլեգիալ կառավարման մյուս մարմինը՝ ԳԿՄԿ գիտխորհուրդն այս հարցով չի կարող փոխարինել կառավարման խորհրդին, քանի որ գիտական խորհրդի անդամների կեսը Կենտրոնի վարչական աշխատակիցներն են, ինչը վկայում է այն մասին, որ խնդիր դնել-կատարել-վերահսկել-գնահատել շղթան չի գոյանում: Մի կողմից ԳԿՄԿ-ի վարչական կազմի, մյուս կողմից՝ ուսումնական հիմնական ստորաբաժանումների՝ ամբիոնների միջև ֆունկցիոնալ ու կարգավիճակային հարաբերությունների անհամամասնություններն էլ ավելի են բարդացնում Կենտրոնի կառավարումը՝ խնդրահարույց դարձնելով ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների ենթակառուցվածքների վրա բազավորված ամբիոնների հանդեպ հաշվետվողականության կառուցակարգերի կիրառումն ու վերահսկողություն իրականացումը: Հաշվետվողականության մեխանիզմների կիրառումը այս պայմաններում, երբ առաջանում են կրկնակի ենթակայության հարցեր, երբ գործում են ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական հարաբերություններ, էապես բարդանում է, ուստի ուսումնական աշխատանքների կազմակերպման, դասավանդման և ուսումնառության որակի վերահսկման և այլ գործընթացների արդյունավետությունը կախված է լինում ոչ թե համակարգային-ֆունկցիոնալ հանգամանքներից, այլ անձի գործոնից: Այս ամենին էլ երբ գումարվում է այն հանգամանքը, որ Կենտրոնի ղեկավարության կարողությունները կամ ռեսուրսները (սա առանձին, ներքին վերլուծության խնդիր է) երբեմն չեն բավարարում կրթական ծրագրերի և այլ գործընթացների մշտադիտարկման, վերլուծության, վերահսկողության ու գնահատման համար, պարզ է դառնում, թե ինչու ԳԿՄԿ-ում կարող են լինել կրթական ծրագրեր, որոնց որակավորման արժանահավատությունը կարող է կասկածի տակ դրվել («Թուրքագիտություն» կրթական ծրագրի դեպքը, երբ դասընթացների մեծ մասը թուրքագիտությանը չի առնչվում կամ առնչվում է խիստ պայմանականորեն, ոչ անմիջաբար)[10]:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԳԿՄԿ-ի կողմից իր գործունեության այնպիսի ցուցանիշների ու գործընթացների բարելավումը, որոնցից են էլեկտրոնային ուսումնառության Moodle համակարգի ներդնումը, վարչական

[10] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

պաշտոնների մեծ մասի նկարագրերի սահմանումը, մարդկային ռեսուրսների համալրման որոշ աշխատանքների կատարումը (մասնավորապես որակի ապահովման և արտաքին կապերի ու միջազգայնացման ուղղություններով), ուսումնական մասի ու դեկանատի գործառույթների տարանջատումն ու հստակեցումը, էթիկայի կանոնագրքի առկայությունը և այլն: Միևնույն ժամանակ, վարչական և պրոֆեսորադասախոսական հաստիքների համալրումները ոչ մրցութային, հայեցողական ձևով իրականացնելը, ցածր աշխատավարձերը թույլ չեն տալիս իրականացնել մարդկային լավագույն ռեսուրսների հրապուրման, ներգրավման և պահպանման գործընթացներ:

ԳԿՄԿ-ում կենտրոնաձիգ կառավարման բացակայությունը խիստ դժվարացնում է վերջինիս՝ իր հավակնությունների շրջանակներում կենսունակ ու կայուն, միջազգայնացված կրթական և գիտահետազոտական հաստատություն դառնալը, լավագույն փորձի վերհանումն ու հաջող տարածումը, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հուսալի վերահսկումը: Ռազմավարական բյուջետավորման բացակայությունն էլ խնդրահարույց է դարձնում ռազմավարական նպատակներին հասնելու որոշակիությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ն կարևորություն է տալիս ուսանողների և դասախոսների՝ իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում մասնակցության մեծացմանը, ինչը արտացոլված է Կենտրոնի ռազմավարական պլանում, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներքին շահակիցների համեմատաբար փոքր թիվը հնարավորություն է տալիս նրանց առավել անմիջաբար հաղորդակցվել Կենտրոնի ղեկավար կազմի հետ: Միևնույն ժամանակ, ներքին շահակիցների՝ որոշումների կայացմանը մասնակցությունը մեծացման ռազմավարական գործողություններից որոշների ընդհանրական բնույթի ձևակերպվածությունը, ռազմավարական պլանում նպատակներին ու գործողություններին կապակցված գնահատման ցուցիչների բացակայությունը, ինչպես նաև ամենամյա հաշվետվությունների նկարագրողական բնույթն ու հպանցիկությունը՝ ռազմավարական գործողությունների խորությամբ վերլուծական հաշվետվություն ներկայացնելու հարցում, հնարավորություն չի տալիս վերհանել Կենտրոնի ձեռքբերումները կամ թերացումներն այս հարցերում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ն գտնվում է երկարաժամկետ պլանավորման արդեն 2-րդ փուլում՝ նկատի առնելով ներկայիս ռազմավարական ծրագիրը: Միևնույն ժամանակ, Կենտրոնի կառուցվածքային, գիտակրթական ստորաբաժանումների գործունեության միջնաժամկետ պլանավորման բացակայությունը, իսկ կարճաժամկետ պլանավորումները ոչ ռազմավարական հիմունքներով, այլ օպերացիոնալ սկզբունքներով իրականացնելը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորում են ԳԿՄԿ-ի՝ որպես կայուն ռազմավարական ուղեգիծ ունեցող հաստատություն չլինելը:

ԳԿՄԿ-ն թեև գիտակցում է իր ռազմավարական պլանավորումը, գործընթացների իրականացումն ու բարելավումը իրական խնդիրներից, իրականությունից բխեցնելու անհրաժեշտությունը, այդուհանդերձ դեռևս չի կարողանում իր գործունեության վրա ազդող գործոնների համալիր հավաքագրում ու գնահատում իրականացնել, չի կապակցում իր ռազմավարական պլանավորումը պետական առաջնահերթություններին: Թեև հավաքագրվում են քանակական և որակական տվյալներ, բայց դրանց փաստաթղթավորված վերլուծություն չի իրականացվում, ինչն էլ հնարավորություն չի տալիս ավելի հավաստի հիմքերով իրականացնել գործընթացների գնահատում և բարելավում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ում սկզբնավորվել է գործընթացների կառավարման ՊԻԳԲ շրջափուլի մասին խոսույթը և որ որոշ սակավաթիվ ստորաբաժանումներ իրենց գործունեությունն իրականացնելիս

առաջնորդվում են այդ սկզբունքով: Սակայն հաշվետվությունների ոչ գնահատողական, ոչ վերլուծական բնույթն ու պլանավորման գործընթացում հստակ ցուցիչների բացակայությունը ցույց են տալիս, որ ՊԻԳԲ շրջափուլը ԳԿՄԿ-ում դեռևս կայացած չէ, ինչն իր բացասական ազդեցությունն է ունենում տարբեր գործընթացների, առաջին հերթին՝ կրթական ծրագրերի որակի ապահովման վրա:

ԳԿՄԿ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման վերաբերյալ գործիքները թեև ժամանակի ընթացքում շատացել և որոշակիորեն կատարելագործվել են, այդուհանդերձ դրանց վերլուծական բաղադրիչի դեռևս թուլությունը չի նպաստում կրթական ծրագրերն ու այլ գործընթացները համակարգված վերլուծության ենթարկել ու բարելավել: Իսկ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմների բացակայությունը վտանգում է դրանց որակի ապահովումն ու զարգացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ի կառավարման համակարգի զարգացումը տեղի է ունենում շատ դանդաղ ու հատվածաբար, որ կառավարումը իրավիճակային է ու խարսխված չէ ռազմավարական նպատակադրումների վրա, որ մասնագիտաբար չեն վերհանվում կառավարման համակարգի բացերը, չեն վերլուծվում գործունեության վրա ազդող տարաբնույթ գործոնները, որ ռազմավարական պլանավորումը տեսանելիորեն չի բխեցվում պետական առաջնահերթություններից, որ կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարումը՝ մեծամասամբ չի իրականացվում ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքներով, որ Կենտրոնը՝ որպես բուհ, ըստ էության չունի կառավարման և վերահսկողություն իրականացնող բարձրագույն մարմին, որ առկա չէ կենտրոնաձիգ կառավարում, ինչը խնդիրներ է առաջացնում ամբիոնների հաշվետվողականության ու այլ գործընթացների հետ կապված, ինչպես նաև հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքների ազդեցությունը որոշ կրթական ծրագրերի որակավորումների արժանահավատության վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳԿՄԿ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԳԿՄԿ-ն իրականացնում է մագիստրոսական և հետբուհական կրթական ծրագրեր: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ԳԿՄԿ-ն կրթական ծրագրեր մշակելիս և վերանայելիս հաշվի է առնում ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների հետազոտական գործունեության ուղղությունները, այնպես էլ աշխատաշուկայի պահանջները:

Կրթական ծրագրերի առանձնահատկություններով պայմանավորված, կարևորություն է տրվում նաև գործնական բաղադրիչին: Որոշ ՄԿԾ-ների բովանդակությունը մշակված է այնպես, որ երկու բաղադրիչն էլ (հետազոտական և կիրառական) ապահովվի: Օրինակ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ՄԿԾ-ի դեպքում ուսումնասիրվում են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող մի շարք առարկաներ՝ Ինֆորմացիայի տեսություն, Հաշվարկելիություն և ռեկուրսիա, Գրաֆների տեսության էքստրեմալ խնդիրներ և այլն: Գործնական նշանակություն ունեցող առարկաներից կարելի է նշել Մեքենայական ուսուցման համակարգեր, Վիճակագրական մեթոդներ և կիրառություններ, Ցանցային օպերացիան համակարգեր և այլն: Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ՄԿԾ-ում ուսումնասիրվում է նաև Գիտաչափության հիմունքներ առարկան: «Բնապահպանություն և բնօգտագործում» ծրագրի պարագայում դասընթացների բովանդակությունն ու շարվածքը կատարված է այնպես, որ ուսանողները առաջին հերթին տիրապետեն մասնագիտության հիմունքներին («Կենսագործունեության անվտանգություն», «Մարդկային կայուն զարգացման հիմունքներ», «Էկոթունաբանություն»), հետազոտական մեթոդներին ու տեխնիկային («Էկոլոգիական մոնիթորինգ և չափիչ սարքեր», «Հետազոտության տրամաբանություն»), իսկ այնուհետև, հետազոտական մոտեցմամբ յուրացնեն նեղ մասնագիտական գիտելիքները, ձեռք բերեն համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Բոլոր ՄԿԾ-ներում ներառված են կամընտրական առարկաներ, որոնք նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:

Կենտրոնը 2019 թվականից անցում է կատարել դեպի վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի մշակմանն ու ներդրմանը: 2019-2020 ուսումնական տարվանից սկսած՝ գործում են մագիստրոսի կրթական ծրագրերի նոր մասնագրերը: Կրթական ծրագրերի մշակման վերջնարդյունքահենք մոտեցումն արտահայտված է ինչպես ծրագրի, այնպես էլ մոդուլի և առանձին դասընթացների մակարդակով:

Դիտարկված երեք ՄԿԾ-ներից երկուսի («Բնապահպանություն և բնօգտագործում», «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա») պարագայում դասընթացների անվանումներն ու բովանդակությունը ըստ կառուցվածքի համապատասխանում է կրթական ծրագրի վերջնարդյունքներին: Ինչ վերաբերում է «Արևելագիտություն. թուրքագիտություն» կրթական ծրագրին, ապա դրա առարկայացանկը խնդրահարույց է թուրքագիտության մասնագիտացման պահանջների համատեքստում: Առկա են դասընթացների փոխկապակցման խնդիրներ, ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ առաջին կիսամյակում դասավանդվում է «Օսմանյան կայսրության պատմության հիմնահարցեր» դասընթացը, երկրորդում՝ «Միջին դարերի պատմության տեսություն»-ը, իսկ երրորդում՝ Բյուզանդիայի պատմության հիմնահացեր առարկան: «Ադրբեջանի Հանրապետության էթնիկ-կրոնական քարտեզ և քաղաքական երկրագիտություն» դասընթացը, ինչպես պարզեցինք, ծրագիր է ներմուծվել հավատարմագրման գործընթացի մեկնարկից հետո և այն բացակայում էր փորձագիտական խմբին ներկայացված ծրագրում: Փոխարենը կային «Հին արևելյան առասպելաբանություն և դիցաբանություն», «Հին աշխարհի պատմության տեսություն», «Բյուզանդիայի պատմության հիմնահացեր» առարկաները, որոնք փորձագիտական խմբի կարծիքով, տվյալ մասնագիտության համար նվազ առաջնահերթ է, քան արդի փուլում Թուրքիայի՝ հարևան երկրների հետ հարաբերությունների, 20-21-րդ դարում Թուրքիայի էթնիկ-դավանական, կրոնական (սուֆիական եղբայրությունների դերակատարման շեշտադրմամբ) հանգամանալից ուսումնասիրությունը: Մյուս կողմից ծրագիրն սպասարկող ԳԿՄԿ Արևելագիտության ամբիոնը գտնում է, որ վերոնշյալ դասընթացներն անհրաժեշտություն են՝ տարածաշրջանի իրողությունների պատմական, կրոնական համատեքստերն ընկալելու համար,

նամանավանդ հաշվի առնելով, որ ծրագրի բովանդակության մեջ ներառված են ոչ միայն «թուրքագիտություն» այլ նաև «արևելագիտություն» մասնագիտության բաղադրիչները: Ամբիոնը համարում է, որ ոչ նեղ մասնագիտական առարկաները մասնագիտական հիմք չունեցող ուսանողների մոտ եղած մասնագիտական բացը լրացնելու նպատակով են ավելացվել կրթական ծրագրի մեջ, սակայն Կենտրոնը նման ուսանողներին լրացական դասընթացներ ընտրելու հնարավորություն է տալիս, ինչը շատ լավ մեխանիզմ է բացը նեղ մասնագիտական առարկաների հաշվին չլրացնելու համար[11]:

Կրթական ծրագրերը հասանելի են ԳԿՄԿ կայքում «Կրեդիտային համակարգ» բաժնում: ՄԿԾ-ներում հավելվածների տեսքով ներկայացված են ՄԿԾ-ի վերջնարդյունքների և ՈԱՇ-ի հետ համապատասխանությունը, ինչպես նաև առարկաների վերջնարդյունքների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների համահունչությունը:

ԳԿՄԿ-ն 2018 թվականից Կառավարման Ակադեմիայի հետ համատեղ իրականացրել է հեռավար ուսուցմամբ «Գործարար վարչարարություն» կրթական ծրագիը: Ծրագիրը ներդրվել է Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրով՝ Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ:

Մագիստրոսական կրթությունը հետազոտահենք է, մագիստրոսական թեզերի թեմաներն ընտրվում են ըստ տվյալ ինստիտուտի/ամբիոնի գիտական ուղղությունների և լաբորատոր բազայի հիման վրա: «Բնապահպանություն և բնօգտագործում» ծրագրի պարագայում մագիստրոսական թեզերը բաշխվում են ըստ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի բաժինների կողմից տվյալ ժամանակահատվածում իրականացվող հետազոտական ծրագրերի ու նախագծերի:

Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված երեք ՄԿԾ-երը համեմատվել են տարբեր արտասահմանյան գործընկեր համալսարանների ՄԿԾ-երի հետ՝ առաջնահերթություն սահմանելով միջազգային շարժունության խթանման նպատակով համադրելիության ապահովումը: Ուսումնասիրված ՄԿԾ-ներին առնչվող փաստաթղթերում ներկայացված են համեմատության հետևանքով ծրագրերում կատարված փոփոխությունները: Օրինակ, «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ՄԿԾ-ի դեպքում Ֆրանսիայի Փոլ Սաբատիե (Թուլուզ 3) համալսարանի հետ բենչմարքինգի արդյունքում վերանայվել են մի շարք առարկաների անվանումներ և բովանդակությունը: Բենչմարկինգը նպաստել է դասախոսների և ուսանողների շրջանում միջազգային շարժունությանը: Բնապահպանություն և բնօգտագործում ՄԿԾ-ի դեպքում բենչմարկինգի արդյունքում բարելավել և արդիականացվել են մի շարք առարկայական ծրագրեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ները համեմատվում են նաև հայաստանյան այլ համալսարանների համանման ՄԿԾ-ների հետ, բայց առաջնահերթություն տրվում է տեսական հետազոտական ուղղվածությանը՝ հիմքում ունենալով տվյալ ինստիտուտի գիտակահետազոտական ուղղությունները: Օրինակ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ՄԿԾ-ի դեպքում շատ այլ բուհերում գերակշռում են կիրառական ծրագրավորման առարկաները, իսկ ուսումնասիրված ՄԿԾ-ում կիրառական ուղղություն առկա է, սակայն առավել շեշտադրված է տեսական ուղղությունը:

Փորձագիտական վերլուծությունների ժամանակ պարզ դարձավ, որ մագիստրոսական ծրագրերում առկա են որոշ առարկաներ, որոնց բովանադակությունը լրիվ կամ մասամբ կրկնվում է բակալավրիատի ծրագրի առարկաների հետ: Կենտրոնը դա բացատրում է այն փաստով, որ ներգրավում է այլ բուհերի տարբեր մասնագիտությունների շրջանավարտների:

[11] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՄԿԾ-ներում, ինչպես նաև առարկայական ծրագրերում նկարագրված չեն դասավանդման և ուսումնառության մեթոդները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳԿՄԿ դասախոսները, ՄԿԾ-երում ակնկալվող վերջնարդյունքներից ելնելով, ընտրում են դասավանդման մեթոդներ և դրան համապատասխան գնահատման ձևեր:

Ըստ ինքնավերլուծության՝ առարկայի բնույթով պայմանավորված՝ դասավանդման ընթացքում կարող են գերակշռել խոսքային մեթոդները՝ դասախոսությունը և քննարկումը: Կենտրոնում մեծ ուշադրություն են դարձնում նաև ինտերակտիվ մեթոդների կիրառությանը: Դասավանդվող առարկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ մեծապես կիրառվում են նաև գործնական, զննական և վերարտադրողական մեթոդները: Ուսումնառության մեթոդներից կիրառվում են խմբային, անհատական և զույգերով աշխատանքը, առավել արդյունավետ են գործնական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս սովորողին հնարավորինս արագ յուրացնել և ամրապնդել ձեռք բերած գիտելիքը:

«Բնապահպանություն և բնօգտագործում» ծրագրի պարագայում ուսումնառության առաջին իսկ կիսամյակից սկսած տեսական նյութի յուրացումը զուգորդվում է հետազոտահեն դասավանդմամբ, կիրառվում են լաբորատոր փորձարկումների, զննության, դիտարկման, չափագրման և հետազոտական այլ մեթոդները: ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի՝ միջազգային գիտակրթական դրամաշնորհներում ակտիվ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս թարմացնել ու հարստացնել լաբորատոր-սարքավորումային բազան, ինչով էլ պայմանավորված է դասընթացների հետազոտահեն դասավանդումն ու ուսումնառությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի կողմից կիրառվում են դասավանդման ուսանողակենտրոն մոտեցում. ինտերակտիվ մեթոդներ, թիմային աշխատանքներ, նախագծային հենքով ուսուցում, գործնական առաջադրանքների լուծում, ուսուցողական պարզ և բարդացող իրավիճակային խնդիրների կազմում և լուծում: Հանձնարարականների կատարման համար դասախոսները կիրառում են նաև էլեկտրոնային Մուդլ հարթակը:

Օրինակ՝ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ՄԿԾ-ի մի շարք առարկաների գծով (Տվյալների վերլուծություն, Ինֆորմացիայի տեսություն, Մեքենայական ուսուցում) տրվում են կիրառական նշանակություն ունեցող նախագծեր, հանձնարարություններ՝ գործնական խնդիրների տեսքով:

Դասընթացներում շեշտադրվում է նաև հետազոտական կարողությունների ձևավորումը և ինստիտուտների համար երիտասարդ հետազոտողներ նախապատրաստելը: Դասախոսները լինելով գիտնականներ, դասավանդման և գիտական սեմինարների ժամանակ իրենց առարկաների շրջանակներում սովորեցնում են հետազոտության կատարելու մեթոդներ: «Բնագիտություն և բնօգտագործում» ՄԿԾ-ի ընդհանուր կրթամասի երկու դասընթացներից մեկը՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները», օրինակ, ապահովում է հետազոտական տեխնիկայի որոշ տարրերի յուրացումը (հղումների կարգ, տվյալների բազայի ստեղծում և այլն): «Անգլերեն լեզու» դասընթացն էլ կողմնորոշված է դեպի տեխնիկական թարգմանությունները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, ԳԿՄԿ-ում սովորում են տարբեր բակալավրական հիմքով ուսանողներ (հատկապես բնագիտական, տեխնիկական

մասնագիտությունների առումով), որոնց դեպքում հետազոտական բաղադրիչի ապահովումը երբեմն դժվարություններ է առաջացնում:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կենտրոնում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն 20 միավորանոց համակարգ: Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն, որոնցից առնվազն մեկն անց է կացվում ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման (թեստերի, անհատական աշխատանքների, նախագծերի և այլն) գնահատման հիման վրա: Եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող դասախոսի առաջարկությամբ հաստատում է ամբիոնի վարիչը: Գործող գնահատման համակարգին կարելի է ծանոթանալ Կրեդիտային համակարգով առկա/հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերից, ինչպես նաև ՄԿԾ-ի տեղեկագրքից, որոնց էլեկտրոնային տարբերակները հասանելի են կենտրոնի կայքում:

Ուսումնասիրված ՄԿԾ-ներում առկա են գնահատման մեթոդները, սակայն նկարագրված չեն տրվող հանձնարարությունները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանձնարարությունները հիմնականում կրում են տեսական բնույթ և դրանցով չափվում են գիտելիքի վերարտադրման, ներկայացման կարողությունները: Առկա են քիչ քանակության նաև գործնական բնույթի հանձնարարություններ: «Թուրքագիտություն» կրթական ծրագրի դասընթացների քննական հարցաշարերի ճնշող մեծամասնությունը ստանդարտ հարցաշարեր են, քննությունը՝ հարցաշարի հիման վրա երկու կամ երեք հարց պարունակող հարցատոմսեր: Հետազոտական հմտություններն ու կարողությունները ստուգող առաջադրանքները գրեթե բացակայում են: Սակայն, դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ դասախոսները տարբեր ֆորմատի լրացուցիչ ստուգումներ են իրականացնում, որոնք, այդուհանդերձ, չեն ընդգրկում դասընթացների նկարագրերում՝ վստահ լինելով, որ հարցաշարի հիման վրա հարցատոմսով ստուգումը ստուգման պարտադիր ձև է[12]:

Մագիստրոսական թեզի գնահատման գործընթաց իրականացվում է մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգին համապատասխան: Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշներն են թեմայի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը (առավելագույնը՝ 2 միավոր), հետազոտության իրականացումը և արդյունքները (առավելագույնը՝ 6 միավոր), ձևակերպման որակը (շարադրանքը և ձևավորումը) (առավելագույնը՝ 4 միավոր), աշխատանքի հրապարակային պաշտպանությունը (առավելագույնը՝ 8 միավոր):

Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պրակտիկաների թեմաները երբեմն կապվել են մագիստրոսական թեզի թեմաների հետ, ուսանողները կատարել են հետազոտական աշխատանք գործատուների մոտ /Բնապահպանություն և բնօգտագործում, Սոցիալական մանկավարժություն, Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա, Իրավագիտություն/: Փորձագիտական այցը ցույց տվեց նաև, որ «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի պարագայում բնապահպանության ոլորտում միջդիսցիպլինար հետազոտություն անելու պատվեր են ստացել լիազոր մարմնի կողմից, որում ներգրավվել են նաև ԳԿՄԿ մագիստրանտները:

Գրագողության դեմ պայքարի և Կենտրոնում ակադեմիական ազնվության և անաչառության գերակայության արմատավորման նպատակով 2020 թվականին մշակվել և

[12] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

հաստատվել է «Ակադեմիական ազնվության հայեցակարգը»: Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող գործիքակազմի և միջոցների ձեռքբերման ու կիրարկման քաղաքականությունը դեռևս մշակման փուլում է:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը, միջազգայնացմանը:

ԳԿՄԿ-ում մշակվել է Կենտրոնի բենչմարքինգի (համեմատական վերլուծության) քաղաքականություն, որի հիման վրա ԳԿՄԿ ամբիոնները պարբերաբար իրականացնում են ՄԿԾ-երի բենչմարքինգ հայաստանյան և արտերկրի լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: Ուսումնասիրման ներկայացված 3 ՄԿԾ-ների մասով իրականացված է բենչմարքինգ, մասնավորապես «Բնապահպանություն և բնօգտագործում» ՄԿԾ-ի գծով որպես գործընկեր համալսարան ընտրված է Իտալիայի Տուշայի համալսարանը, Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի դեպքում Ֆրանսիայի Փոլ Սաբատիե (Թուլուզ 3) համալսարանը, իսկ Արևելագիտության ՄԿԾ-ի համար՝ Իտալիայի Բոլոնիայի համալսարանը: Ի տարբերություն մյուս երկու ՄԿԾ-ների «Բնապահպանություն և բնօգտագործում» ՄԿԾ-ի դեպքում բենչմարքինգն իրականացված է ոչ միայն նաև առարկաների ցանկով, այլ նաև բովանդակության մակարդակով: Այս կրթական ծրագրի արդիականացմանը նպաստել է նաև Էրազմուս+ Մենվիպրո՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» ծրագիրը:

«Ինֆորմատիկա» կրթական ծրագրի պարագայում հաշվի առնելով ՀՀ բուհերի հետ համեմատական վերլուծության արդյունքները՝ ուսումնական պլանում ավելացվել են «Մեքենայական ուսուցում» և «Գիտաչափության հիմունքներ» առարկաները: Շարժունության իրականացման նպատակով «Արևելագիտություն» կրթական ծրագրի դեպքում բենչմարքինգ է իրականացվել Բոլոնիայի համալսարանում դասավանդվող առարկաների հետ:

ERASMUS + MENVIPRO նախագծի շրջանակներում 2019-2020թթ. «Բնապահպանություն և բնօգտագործում» ծրագիրն ամբողջությամբ մոդերնիզացվել է: Ծրագրի 12 դասընթաց ենթարկվել է բենչմարքինգի. Արդյունքում 6 դասընթաց մոդերնիզացվել է, ևս 4 նոր դասընթացներ են ավելացել («Էկովիճակագրություն», «Հողերի որակի մոնիտորինգ» և այլն): Մոդերնիզացիան վերաբերել է դասընթացների ծրագրերի կազմմանը, գործատուների պահանջները կրթական ծրագրում ընդգրկմանը, վերջնարդյունքների և բովանդակության համեմատական վերլուծությանը, մասնավորապես Տուշայի համալսարանի նույն մասնագիտության կրթական ծրագրի հետ: Այս ամենի արդյունքում դասընթացներում էապես մեծացել է պրակտիկ բաղադրիչը, փոխվել է դասավանդման մեթոդաբանությունը և մոտեցումները:

«Թուրքագիտություն» կրթական ծրագրի բենչմարքինգի ընթացքում ընտրվել են երեք դասընթացներ, որոնք համեմատվել են Բոլոնիայի համալսարանի երեք դասընթացների հետ և ներկայացվում է վերջիններիս առարկայական նկարագիրները: Չկա համեմատական վերլուծություն ոչ կրթական ծրագրի, ոչ էլ առանձին առարկաների մակարդակով[13]:

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

[13] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ԳԿՄԿ-ում 2020թ. մշակվել և հաստատվել է «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը» (նոր խմբագրությամբ), որը սահմանում է Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները: Կրթական ծրագրերի մոնիթորինգի գործընթացը սկսվում է ԳԿՄԿ տնօրենի հրամանով՝ դեկանի կողմից ներկայացված մոնիթորինգի ենթակա կրթական ծրագրերի ցանկի և մոնիթորինգի անցկացման ժամանակացույցի հիման վրա: Կրթական ծրագրի մոնիթորինգը իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում տվյալ մասնագիտական ամբիոնի վարիչի կողմից տարեկան պարբերականությամբ:

Փորձագիտական ուսումնասիրությանը ներկայացված փաստաթղթերում առկա են երեք ՄԿԾ-ները թողարկող ամբիոնների՝ մոնիթորինգի արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականները: Սակայն փորձագիտական այցը ցույց տվեց, որ ՄԿԾ-ները հիմնականում չեն ենթարկվում արտաքին գնահատման:

Ներկայացված փաստաթղթերում առկա են նաև գործատուների և շրջանավարտների շրջանում կատարված հարցումների արդյունքների վերլուծություններ: ՄԿԾ-ների բարելավման հիմքում ընկած են նաև որակի ապահովման բաժնի կողմից կատարված հարցումների արդյունքների վերլուծությունները:

Ըստ ինքնավերլուծության՝ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում հիմնարար կերպով վերանայվել են գործող ուսումնական պլանները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունների հիման վրա ԳԿՄԿ-ն իրականացրել է բարելավումներ ՄԿԾ-ներում. վերջնարդյունքների վերանայման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, առարկայական ծրագրերի նոր ձևաչափի ներդրման տեսակետից: Առարկայական ծրագրերի նոր ձևաչափի ներդրման արդյունքում ներկայացված են ինչպես առարկայի վերջնարդյունքերը, այնպես էլ թեմաների վերջնարդյունքները, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել ուսանողի առաջընթացի վերաբերյալ: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողներին տրվող հանձնարարությունների ներառումը առարկայական ծրագրերում թույլ կտա ավելի հստակ պատկերացում ունենալ դրանց իրականացման, գնահատման չափանիշների, վերջնարդյունքների հետ կապի, ինչպես նաև արդյունավետության վերաբերյալ:

Ուսումնասիրված երեք ՄԿԾ-ների վերջնարդյունքները հիմնականում համահունչ են ՈԱՇ-ի պահանջներին, ընտրված առարկայացանկերը հիմնականում նպաստում են համապատասխան վերջնարդյունքների ձևավորմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսումնասիրված ՄԿԾ-ների առարկաների վերջնարդյունքները որոշ դեպքերում շատ ընդհանրական են և դժվար չափելի, ինչը կարող է դժվարեցնել դրանց գնահատումը:

Դրական է այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ում դասավանդման գործընթացում ներգրավված են գիտնական դասախոսներ, որը կարող է նպաստել հետազոտահենք կրթության իրականացմանը, ուսանողները ներգրավվում են հետազոտական աշխատանքներում, որոշ ուղղություններով ուսանողները կատարում են հետազոտական աշխատանք գործատուների մոտ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր մասնագիտություններով բակալավրիատի աստիճան ունեցող ԳԿՄԿ մագիստրատրանտների դեպքում հետազոտական բաղադրիչի ապահովումը դժվար է և երբեմն ոչ իրագործելի:

Թեև կրթական ծրագրերում ԳԿՄԿ-ն ներառել է դասընթացներ կամ թեմաներ, որոնք թույլ կտան ապահովել բակալավրիատի տարբեր կրթական ծրագրերի շրջանավարտների հետագա ուսումնառությունը մագիստրատուրայում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը մտահոգություն է հայտնում հատկապես բնագիտական, տեխնիկական մասնագիտությունների պարագայում բակալավրիատից տարբեր հիմքով ուսանողների դեպքում անհրաժեշտ մակարդակի գիտելիքների, կարողությունների ապահովումը ԳԿՄԿ-ի կողմից: Այս դեպքում Կենտրոնը դեռևս անելիքներ ունի:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ բուհում իրականացվում են ՄԿԾ-ների բարելավումներ, կնքվում են պայմանագրեր միջազգային մակարդակում բենչմարքինգի իրականացման համար, սակայն հիմնականում այս ամենը ինստիտուտներից/ամբիոններից է կախված: Կան հաջողված ամբիոններ, որոնց փորձը անհրաժեշտ է տարածել: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ այս ուղղությամբ իրականացվող քայլերը առավել համակարգման և նախապես պլանավորման կարիք ունեն, որոնք կնպաստեն բարեփոխումների առավել թիրախային իրականացմանը, բոլոր շահակիցներին բարեփոխումներին ներգրավմանը: Անհրաժեշտ է նաև վերլուծել բենչմարքինգի արդյունքում կատարված փոփոխությունների արդյունավետությունը:

Դրական է, որ կրթական ծրագրերի մոնթորինգի արդյունքում կատարվել են փոփոխություններ, որոնք ամբողջական իրականացումը առաջիկայում հնարավորություն կտա ուսուցումը կազմակերպել առավել արդյունավետ, ինչպես նաև մեծացնել ուսանողի ակադեմիական ազատությունը, խթանել ինչպես ուսանողների, այնպես էլ ՊԴ կազմի շարժունությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո առկա է կրթական ծրագրերի բարելավման որոշակի փորձ, կրթական ծրագրերը կապակցվում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների առաջնահերթությունների հետ, առկա են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդներ, ինչպես նաև կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմներ, առկա են բենչմարքինգի իրականացման որոշակի լավ փորձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԳԿՄԿ ինստիտուցիոնալ կարողությունները համապատասխանում են չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԳԱԱ ԳԿՄԿ-ում ուսանողների ընդունելությունը և ընտրությունը կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ և ներքին իրավական ակտերով: Ըստ ԳԿՄԿ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության կարգի՝ կենտրոնի

մագիստրատուրա կարող է ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը: Մագիստրատուրայի առկա անվճար համակարգ կարող են դիմել վերջին 2 տարվա համապատասխան մասնագիտությամբ շրջանավարտները: Մրցույթն անցկացվում է քննության ձևով՝ ըստ նախապես հրապարակված համապատասխան հարցաշարերի: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա: Մրցույթի արդյունքների հավասարության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում ՄՈԳ-ը, ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը: Առկա, հեռակա և հեռավար համակարգով ընդունելությունը կազմակերպվում է գործող ընդունելության կարգի համաձայն:

Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելությունը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում իրականացվում է ՀՀ կառավարության 28.04.2011թ. թիվ 700-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Դիմորդների հավաքագրման նպատակով կենտրոնի «Դիմորդ» բաժնում ներկայացված են մագիստրատուրայի մասնագիտությունների ցանկը, ուսուցման ձևը, ուսման վարձի չափը, ընդունելության հարցաշարերը, դիմում-հայտը ներկայացնելու, ընդունելության քննությունների կամ հարցազրույցի ժամանակացույցները:

ԳԱԱ ԳԿՄԿ-ում 2020 թվականից գործում է ընդունելության նաև էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է ընձեռում դիմորդներին փաստաթղթերը ներկայացնել առցանց ձևաչափով:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հաշվի առնելով՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ը սովորողների թվի աճն ապահովելու նպատակով նախատեսել էր մշակել գործողությունների պլան, որը պետք է բխեր բարելավման պլանից: Ըստ այդմ, կենտրոնը նախատեսել էր իրականացնել ուսանողների կարիքների ուսումնասիրություն ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմների ապահովման նպատակով: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ կենտրոնի վարչական անձնակազմն աշխատանքներ է իրականացնում ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն աջակցելու, նոր ուսանողների, այդ թվում՝ միջազգային, ներգրավման, նրանց կարիքների վերհանման ուղղությամբ: Կենտրոնը համագործակցում է նաև ՀՀ և միջազգային բուհերի, կարիերայի կենտրոնների ու կառույցների հետ ուսանողների ներգրավումն ավելացնելու նպատակով: Ուսանողների հավաքագրման և համալրման նպատակով ԳԿՄԿ-ում կիրառվում են նաև կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառները, կլոր սեղան-քննարկումները, ամառային դպրոցները, հայտարարությունները, բուկլետները, ԳԿՄԿ-ի կայքէջը, ուսանողի ուղեցույցը, ֆեյսբուքյան էջը և այլն:

Այդուհանդերձ, ուսումնասիրելով վերջին տարիների ընդունելության ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ ընդունելության ցուցանիշները նվազել են որոշ մասնագիտությունների (Արևելագիտություն, Երկրաբնապահպանություն) գծով, սակայն թիվն աճել է Գործարար վարչարարություն, Իրավագիտություն, Քաղաքագիտություն և որոշ այլ մասնագիտությունների մասով: Բուհի ուսումնասիրությունների համաձայն՝

ուսանողների թվի նվազումը պայմանավորող միտումներն են արտագաղթը, արտակարգ և ռազմական դրությունները, ինչպես նաև որոշ մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի նվազումը:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ն նախորդ հավատարմագրման արդյունքում 2017 թ. կազմված Թերությունների վերացման ծրագրով նախատեսել է սահմանել ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր: Կենտրոնում 2018 թվականից ներդրվել է «ԳԿՄԿ ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման ընթացակարգը»՝ ապահովելու ԳԿՄԿ ուսանողների՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և Կենտրոնի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքը:

Կարիքների վերհանումը ԳԿՄԿ-ում կատարավում է ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումների միջոցով: Ուսանողական հարցումն իրականացվում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից՝ անանուն, հարցմանը խմբի ուսանողների առնվազն 51%-ի մասնակցության պայմաններում: Ուսանողական հարցման արդյունքները կրթության որակի ապահովման բաժինը ներկայացնում է համապատասխան ամբիոն, իսկ յուրաքանչյուր առանձին դասընթացի գնահատման արդյունքները տրամարդվում են նաև համապատասխան դասախոսին՝ էլ փոստով:

Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները ոչ բոլոր ամբիոնների համար են հիմք դառնում կրթական ծրագրերում փոփոխություններ և լրամշակումներ անելու համար: Այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսանողների մեծ մասը նախընտրում է խնդիրներին լուծում տալ՝ վարչական աշխատակազմին դիմելով: Նման քննարկումների արդյունքում տեղի է ունեցել դասախոսական կազմի փոփոխություն, ավելացել են գործնական ժամերը և այլն: Փորձագիտական այցի ընթացքում իրականացված հանդիպումներից պարզ դարձավ, որ դեկանի հաստիքը նույնպես ձևավորվել է ուսանողների կարիքները վերհանելու և արձագանքելու համար:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Կենտրոնի ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կենտրոնը կարևորում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվությունների տրամադրման հնարավորությունների ստեղծումը: ԳԿՄԿ ամբիոններում առկա է ուսումնական խորհրդատուի հաստիք, որի հիմնական գործառույթն է աշխատանքներ տանել ուսանողների առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև վերջիններիս տեղեկատվություն տրամադրել ուսումնական պրոցեսի անցկացման, դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

Փորձագիտական հանդիպումները ևս փաստեցին, որ ուսանողները բավարարված են խորհրդատուների աշխատանքից, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ բակալավրական տարբեր կրթական ծրագրերից տարբեր մուտքային տվյալներով ԳԿՄԿ մագիստրատուրա ընդունված ուսանողները երբեմն դժվարություններ են ունենում մասնագիտական առարկաները յուրացնելու հարցում, որոնք հաղթահարելուն աջակցում են կենտրոնի դասախոսները ինչպես դասապրոցեսի, այնպես էլ մագիստրոսական թեզերի իրականացման ընթացքում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների համար կազմակերպվում են նաև լրացուցիչ պարապմունքներ ուսանողների շրջանում անգլերենի իմացության մակարդակը բարձրացնելու համար: 2017 թվականից ԳԿՄԿ-ում գործում է Օտար լեզուների և միջմշակության հաղորդակցության ակումբը, որը լրացուցիչ պարապմունքներ է առաջարկում ԳԿՄԿ ուսանողներին, այդուհանդերձ փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները փաստեցին, որ ուսանողների շրջանում լեզվաիմացության մակարդակը դեռևս բավարար չէ, ինչն էլ հաճախ խոչընդոտ է դառնում ինչպես շարժունության ծրագրերի մասնակցելու, այնպես էլ մասնագիտական առավել լայնածավալ օտարալեզու գրականություն ուսումնասիրելու համար:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

2017 թվականի ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների պլան-ժամանակացույցով նախատեսվել էր մշակել ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգ: ԳԿՄԿ վարչական աշխատակազմի կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով ԳԿՄԿ-ում 2018 թվականից մշակվել և գործում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգի և մեխանիզմների մասին կանոնակարգը: Կանոնակարգով սահմանված մեխանիզմներն են ԳԿՄԿ պաշտոնական կայքէջը, ուսանողներին անհատական էլեկտրոնային հասցեների տրամադրումը, անմիջական կապի հաստատումը ԳԿՄԿ համակարգողների և ուսանողների միջև, ՊԴ կազմի և ուսանողների միջև ինտերակտիվ և անմիջական կապի ապահովումը, հաղորդակցության հնարավորությունը ԳԿՄԿ վարչական կազմի, ստորաբաժանումների ղեկավարների, իրավախորհրդատուի, գիտական քարտուղարի հետ:

Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով ժամանակացույց սահմանված չէ, սակայն ուսանողներն իրենց առնչվող խնդիրներով անկաշկանդ դիմում են վարչական անձնակազմին և կրթական ծրագրերի պատասխանատուներին: Ուսանողների ուսումնական գործընթացներում առավել ներգրավվածությունն ու ակտիվությունն ապահովելու նպատակով ԳԿՄԿ վարչական աշխատակազմը կազմակերպում է նաև նիստեր՝ քննարկելու ուսանողներին հուզող խնդիրները: Վարչական անձնակազմին դիմելու հնարավորություններից մեկն էլ խմբերի ավագների միջոցով իրենց խնդիրների մասին իրազեկելն է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս եղանակով փոփոխություններ են կատարվել կրթական

ծրագրերում, նոր հնարավորություններ են ստեղծվել էլեկտրոնային գրադարանային աղբյուրներից օգտվելու համար:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԳԿՄԿ-ում ուսանողների կարիերային միտված ծառայությունները համակարգվում են Հանրային կապերի և կարիերայի բաժնի կողմից, որը գործում է 2019թ.-ից: Բաժինը զբաղվում է ԳԿՄԿ ուսանողների և շրջանավարտների աշխատանքային մրցունակության ուսումնասիրությամբ, ներքին, արտաքին շահակիցների և ԳԿՄԿ միջև մշտական կապի ամրապնդմամբ ու համագործակցությամբ ու տեղեկատվության տարածմամբ: Բաժնի կողմից կազմակերպվում են «Կարիերայի կառուցման հմտությունները» թեմայով մեկամսյա գործնական դասընթացներ, որի ընթացքում ուսանողները սովորում են ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ գրելու, հաղորդակցվելու, գործատուին ճիշտ ներկայանալու հմտություններ, իսկ դասընթացի ավարտին հնարավորություն ունենում գործատուներին հանդիպելով ստանալ աշխատանքի առաջարկներ: Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դառնում, որ ուսանողների 90 և ավելի տոկոսը գոհ և բավարարված է բաժնի կատարած աշխատանքներից: Փորձագիտական այցից ևս պարզ դարձավ, որ ուսանողները և շրջանավարտները տեղեկացված են բաժնի գործառույթների մասին, սակայն այն առավել դիտարկվում է որպես հմտությունների ձևավորման խթանող կառույց, այլ ոչ թե հետագա աշխատանքի պլանավորմանն աջակցող բաժին, քանզի մագիստրատուրայում սովորող ուսանողների մեծ մասը սովորելուն զուգահեռ նաև աշխատում են:

Համալսարանի՝ ուսանողների կարիերային նպաստող ծառայություններից են նաև տարբեր գործատուների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպում-քննարկումները, ինչը լրացուցիչ հնարավորություն է ստեղծում ուսանողների համար իրենց մասնագիտության առանձնահատկություններին և աշխատաշուկայի պահանջներին ծանոթանալու համար:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ԳԿՄԿ-ը, լինելով ՀՀ ԳԱԱ կառուցվածքային միավորներից մեկը և հորիզոնական կապերով համագործակցելով ԳԱԱ ինստիտուտների հետ, օգտվում է ԳԱԱ մարդակին և նյութական ռեսուրսային բազայից: Մագիստրանտներին դասավանդում են ԳԱԱ ինստիտուտների գործող գիտնականները, ինչը լրացուցիչ հնարավորություն է փորձի փոխանցման և ակադեմիական համակարգի գիտական կադրերի երիտասարդացման համար: ԳԿՄԿ ուսանողները հնարավորություն ունեն ներգրավվելու ինստիտուտների կատարած գիտահետազոտական աշխատանքներում, ինչպես նաև հանդես գալ իրենց անհատական գիտական աշխատանքներով և տպագրվել գիտական ամսագրերում:

Կենտրոնն իր կարևորագույն գործառույթներից է համարում ուսանողական համակազմի՝ գիտահետազոտական աշխատանքներում լիովին ներգրավվածություն ապահովելը: Սակայն պետք է նշել, որ այդ հանձնառության իրացումը կախված է կրթական ծրագիրն սպասարկող ամբիոնի վարիչի (ԳԱԱ ինստիտուտի ղեկավարության) տրամադրվածությունից: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

որոշ մասնագիտությունների մասով հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը սահմանափակվում է մագիստրոսական թեզերի իրականացմամբ: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման լավ օրինակ է «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության տարբերակով ընթացիկ հանձնարարականների կամ դասավանադող անձնակազմի իրականացրած հետազոտություններին ուսանողների անմիջական ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում՝ հիմնվելով Էկոկենտրոնում առկա նյութատեխնիկական բազայի և մասնագիտական ռեսուրսների վրա: Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում մագիստրոսական թեզերի թեմաները ուսանողներին տրվում են ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի բաժինների՝ թեմատիկ և նպատակային դրամաշնորհների ծրագրերից: Թեմաների հատկացումն այստեղ տեղի է ունենում ուսումնառության առաջին կիսամյակում, իսկ ուսանողների բաշխումը ըստ Կենտրոնի բաժինների հետազոտական թեմաների, կատարվում է համաչափության սկզբունքով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: ՈՒԳԸ-ը, իր կանոնադրության համաձայն, իր նպատակներն ու խնդիրներն իրականացնում է՝ համագործակցելով ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնների, ՈՒԽ-ի, հանրային կապերի և կարիերայի բաժնի և այլ ստորաբաժանումների հետ: ՈՒԳԸ-ն սատարում է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունները, ուսանողական գիտաժողովների, սեմինարների, դասախոսությունների և գիտակրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպումը, նպաստում է գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկմանը:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԳԿՄԿ ինքնավերլուծության համաձայն՝ կենտրոնի ուսանողների իրավունքների պաշտպանության մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը ապաքաղաքական, ինքնակառավարվող ընտրովի մարմին է, ներկայացնում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը: ՈՒԽ կանոնադրության համաձայն՝ ՈՒԽ-ն կազմված է նախագահից, փոխնախագահներից, քարտուղարից և անդամներից: Ըստ անհրաժեշտության ՈՒԽ-ի որոշմամբ կարող են ստեղծվել նաև ժամանակավոր հանձնաժողովներ: ՈՒԽ-ի նախագահը, փոխնախագահները, քարտուղարը, ՈՒԽ անդամներն ընտրվում և նախագահում են ընտրության պահից սկսած մինչև մագիստրատուրայում ուսումնառության ավարտը: Ուսանողական խորհուրդը կազմակերպում է նաև տարաբնույթ միջոցառումներ և հանդիպումներ տարբեր գործատուների ու ոլորտի մասնագետների հետ, սակայն փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները փաստեցին, որ չնայած ուսանողության մեծ մասը տեղեկացված է ՈՒԽ գործունեության մասին, ուսանողների մեծ մասը

իրավունքներին առնչվող իրենց խնդիրները բարձրացնում են վարչական կառույցների և ավագների միջոցով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողներին իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն է ցուցաբերում նաև ԳԿՄԿ իրավախորհրդատուն: ԳԿՄԿ իրավախորհրդատուի կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքներում իրականացվում են տարբեր բնույթի խորհրդատվություններ և իրավական փաստաթղթերի հետ կապված հարցերի պարզաբանումներ: ԳԿՄԿ-ը իր ուսանողների համար պատրաստել է նաև մի շարք ուղեցույցներ (Ուսանողական Էլ. փոստ մուտք գործելու, Ուսանողական Էլ. փոստի միջոցով հեռավար ուսուցման հարթակ մուտք գործելու, հեռավար ձևաչափով նախապաշտպանության և պաշտպանության կազմակերպման ուղեցույցներ), որոնց միջոցով ևս տեղեկատվությունը հասանելի և թափանցիկ է դառնում ուսանողներին: Համաձայն ինքնավերլուծության՝ բոլոր ուսանողները տեղեկացված են համապատասխան ծառայությունների վերաբերյալ, իսկ 80-95 %-ն էլ բավարարված է վերոնշյալ գործընթացներից:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Կենտրոնի ինքնավերլուծությունից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ որակի ապահովման համակարգը կենտրոնի կողմից վերանայվել է «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և դրա հետագա բարելավում» ծրագրի շրջանակներում, ապա նաև ԳԿՄԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում ՈԱԱԿ արտաքին փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա: Կենտրոնում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատումը հիմնականում իրականացվում է ուսանողների կողմից դասախոսների ու դասընթացների վերաբերյալ իրականացվող հարցումների միջոցով, ինչի հիման վրա էլ տեղի է ունենում դասախոսների վարկանիշավորումը: Կենտրոնի կողմից հարցումներ և քննարկումներ են իրականացվում նաև շրջանավարտների շրջանում՝ համաձայն «Գիտակրթական միջազգային կենտրոնում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգի»: Այս դեպքում խնդրահարույց է շրջանավարտների կողմից կարիքների վերհանման հարցը, քանզի ըստ կանոնակարգի շրջանավարտները հարցաշարը լրացնում են ավարտելուց անմիջապես հետո՝ երբեմն չունենալով մասնագիտակա աշխատանք կատարելու բավարար փորձ ԳԿՄԿ-ի փոխանցած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները գնահատելու համար: Շրջանավարտները, դիպլոմները ստանալիս, Կրթության որակի ապահովման բաժնից ստանում են հարցաթերթը, լրացնում և հանձնում Կրթության որակի ապահովման բաժին, կամ հարցումը կազմակերպվում է էլեկտրոնային տարբերակով:

Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողների և շրջանավարտների կողմից վերհանված հարցերին բուհը մշտապես արձագանքում է, հարցման արդյունքները քննարկվում են ամբիոններում, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներում՝ կենտրոնի գործունեության տարբեր ասպեկտների որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ինստիտուտներում տեղեկայված որոշ ամբիոնների պարագայում փոփոխություններ իրականացնելու վրա ազդող հիմնական գործոնները հարցումները չէին, քանզի որոշ կրթական ծրագրերի պատասխանատուներ և դասախոսական կազմի ներկայացուցիչներ տեղեկացված չէին հարցումների արդյունքներից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսումնական հաստատության կողմից ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործընթացների կանոնակարգված իրականացումը: Դրական հանգամանք է նաև այն, որ հաստատությունը ներդրել է ընդունելության էլեկտրոնային համակարգ՝ հնարավորություն ընձեռելով դիմորդներին փաստաթղթերը ներկայացնել առցանց ձևաչափով: Դրական է, որ ԳԿՄԿ-ը, նախորդ հավատարմագրումից հետո աշխատանքներ է իրականացրել ընդունելության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով, որը դիմորդների թիվի աճի հնարավորություն է տվել:

Դրական է գնահատվում, որ ուսանողների ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՄՈՒՀ-ը կարևորում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվությունների տրամադրման հնարավորությունների ստեղծումը, թեև այն հանգամանքին, որ լրացուցիչ պարապմունքների իրականացման հստակ ընթացակարգեր չկան: ԳԿՄԿ ամբիոններում առկա ուսումնական խորհրդատուի հաստիքը կարևոր է հատկապես ուսանողների առաջընթացի ապահովման տեսակետից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈՒԽ-ի կողմից իրականացվող աշխատանքները և բուհում իրավախորհրդատուի առկայությունը: Այս ամենը հնարավորություն են ստեղծում ուսանողների իրավունքների պաշտպանության համար: Այդուհանդերձ, ուսանողների իրավունքների պաշտպանության գործում ՈՒԽ ներգրավվածության ավելացման անհրաժեշտություն դեռևս կա:

Փորձագիտական խումբը կարևորում է Հանրային կապերի և կարիերայի բաժնի կողմից ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքները, մասնավորապես ուսանող-գործատու համագործակցային հարաբերությունների զարգացման համատեքստում քայլերի ձեռնարկումը, որը կնպաստի ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությանը: Դրական հանգամանք է նաև գործատուների հետ պարբերական քննարկումների անցկացումը մասնագիտության առանձնահատկություններին ծանոթանալու նպատակով:

Դրական է, որ ԳԿՄԿ-ը, օգտագործելով ԳԱԱ ինստիտուտների մարդկային, նյութատեխնիկական և լաբորատոր հնարավորությունները, բարենպաստ միջավայր է ստեղծում ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար: Սակայն հարկ է նշել, որ լավ փորձը տարածված չէ բոլոր մասնագիտություններում, ինչը լրացուցիչ հնարավորությունն կստեղծեր ՈԱՇ-ի 7-րդ մակարդակով նախատեսված հետազոտական կարողությունների զարգացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ ԳԿՄԿ-ն պարբերաբար ուսումնասիրում է կրթական, խորհրդատվական և այլ ծառայություններից ուսանողների

բավարարվածության ու գնահատման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, որը կարող է նպաստել ծառայությունների որակի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընդունելության կառուցակարգեր, կան կարիքների վերհանման որոշ ընթացակարգեր, արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով ուսանողներին տրամադրվում է համապատասխան ուղղորդում և խորհրդատվություն, հաստատության կողմից ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ, ուսանողների համար հնարավորություն է ստեղծված միջնորդավորված կամ անմիջականորեն իրենց հուզող խնդիրներով դիմելու վարչական աշխատակազմին, առկա է բարենպաստ միջավայր գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու համար, գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ Կենտրոնը բավարարում է 4-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ն հանձն էր առել իրականացնել Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը մրցութային հիմունքներով: Այդ նպատակով նախատեսվել էր գործարկել «Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգը»: Նշված կարգը նոր խմբագրությամբ ընդունվել է 2018 թվականին, սահմանում է Կենտրոնի ՊԴ կազմի պաշտոնների տարակարգերը, դրանց տեղակալման, պաշտոնների նշանակման սկզբունքները: Հատկանշական է, որ կարգը չի սահմանում դասախոսների մրցութային ընտրության ընթացակարգ, թեև ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների և դասախոսների թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցութային ընտրությամբ համալրվել են որոշ ամբիոնների վարիչների պաշտոնները, իսկ պրոֆեսորադասախոսական կազմի

մրցույթներ, որպես այդպիսին տեղի չեն ունենում դեռևս: ԳԿՄԿ-ում պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը տեղի է ունենում հետևյալ ձևերով.

- ամբիոնների վարիչները, ելնելով կրթական ծրագրի դասընթացների պահանջներից, ինչպես նաև վերոնշյալ կարգով և պաշտոնների անձնագրերով սահմանված չափանիշների հիման վրա, հիմնականում ինստիտուտների և կենտրոնների գիտաշխատողներից, երբեմն էլ այլ հաստատությունների մասնագետներից հավաքագրում են դասախոսական կազմը. Դասախոսների և ԳԿՄԿ ղեկավարության միջև ստորագրվում է ամենամյա աշխատանքային պայմանագիր:
- ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների, ինչպես նաև ԳԿՄԿ ամբիոնների ասպիրանտների վրա դրվում է ուսումնական որոշ բեռնվածություն. Ասպիրանտները, հետագայում, պաշտպանությունից հետո, համալրում են պրոֆեսորադասախոսական կազմը:

Կարևոր է նշել, որ դասախոսների ընտրության համակարգում ներառված են մուտքային բնույթի չափանիշներ (գիտական աստիճան, կոչում, հրապարակված աշխատանքների թիվ և այլն): Փոխարենը բացակայում են ելքային բնույթի կարողություններ ենթադրող չափանիշները (ինչպե՛ս ապահովել հետազոտահեն, նորարարական, համագործակցային դասավանդում և այլն): Ուսումնաօժանդակ կազմի համալրման առաջնահերթ աղբյուրը ևս ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների գիտաշխատողները, այդ ինստիտուտների ու կենտրոնների, ինչպես նաև ԳԿՄԿ ամբիոնների ասպիրանտներն ու կրթական ծրագրերի մագիստրանտներն են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳԿՄԿ-ում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի իրական ընտրության գործընթացի բացակայությունը առաջին հերթին պայմանավորված է ցածր աշխատավարձերով (ինչի պատճառով այդ պաշտոնների գրավչությունը մեծ չէ), և ըստ այդմ էլ առաջնայնություն է տրվում ԳԱԱ գիտաշխատողներին և այլ բուհերի դասախոսներին, տարբեր կառույցների աշխատակիցներին պայմանագրային, ժամավճարային հիմունքներով աշխատանքի ընդունելու գործելակերպին: Այս պարագայում պրոֆեսորադասախոսկան կազմի պաշտոնի անձնագրերի գոյությունը թեև կարող է օգտակար լինել, սակայն ֆունկցիոնալ չէ: Համենայն դեպս, փորձագիտական այցը ցույց տվեց, որ ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմը հավաքագրելիս, չեն կենտրոնանում այդ անձնագրերով սահմանված նկարագրիչների վրա:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ձևակերպված են ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգում, ըստ որի Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է դասախոսի, դոցենտի և պրոֆեսորի տարակարգերը: Նշված տարակարգերի համար, տարբերակված ձևով սահմանված են մասնագիտական որակավորման, գիտական աստիճանի և կոչման, աշխատանքային փորձի, իրականացրած գիտական ու ուսումնամեթոդական աշխատանքների ցուցանիշներ: Համաձայն ինքնավերլուծության,

«հստակեցվել են ՊԴ անձնակազմին ներկայացվող մասնագիտական նվազագույն պահանջները, որոնք արտացոլվել են նաև նրանց պաշտոնների անձնագրերում»: Պետք է նկատել, սակայն, որ ինչպես ԳԿՄԿ կայքէջում, այնպես էլ Կենտրոնի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթում բացակայում են պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների անձնագրերը, ի տարբերություն վարչական և տեխնիկական-սպասարկող անձնակազմի պաշտոնների անձնագրերի:

ԳԿՄԿ-ում կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է դասընթացների տեղեկագրքերում, որտեղ, սակայն, դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջներ արտացոլված չեն: Դեռևս նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում (2016թ.) արձանագրվել էր, որ «…հստակ սահմանված չեն այն պահանջները, համաձայն որոնց պետք է որոշվի որպես դասախոս նրանց մասնագիտական որակների համապատասխանությունը ծրագրին կամ դասընթացին: Այդ պատճառով դեռևս հնարավոր չէ գնահատել դասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտական կրթության ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին»: Բարելավման պլանում ԳԿՄԿ-ն որպես կարիք էր նշել «բոլոր ՄԿԾ-ների համար սահմանել դասախոսական կազմի կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները շրջանավարտներին շնորհվող որակավորումներին համապատասխան»: Սակայն պետք է նշել, որ այս կարիքն այդպես էլ տեղ չի գտել բարելավման պլանի մեջ, չի ձևակերպվել որպես գործողություն ու փաստորեն չի իրականացվել:

Այդուհանդերձ պետք է նշել, որ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, թեև գոյություն չունեն փաստաթղթավորված տեսքով ըստ յուրաքանչյուր կրթական ծրագրի, այդուհանդերձ դրանք դասախոսներին ներկայացվում են աշխատանքային կարգով ու ավանդույթի ուժով: Հատկապես ԳԱԱ ինստիտուտների ենթակառուցվածքային բազայի վրա իրականացվող կրթական ծրագրերի դասախոսները, որոնք, որպես կանոն, դասախոսական աշխատանքի են անցնում ասպիրանտուրայի միջոցով, ստանում են գիտամանկավարժական անհրաժեշտ կոմպետենցիաները: Այդուհանդերձ չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ նշված պահանջները յուրաքանչյուր կրթական ծրագրի համար փաստաթղթավորված ձևով չլինելը, ի թիվս մենեջերիալ ու այլ բնույթի թերացումների, երբեմն պատճառ է հանդիսանում, որ կրթական ծրագրի վերջնարդյունքների, շնորհվող որակավորումների ու, մյուս կողմից, դասընթացների ցանկի ու բովանդակության միջև անհամապատասխանություն է առաջանում, ինչին փորձագիտական խումբն ականատես եղավ «Թուրքագիտություն» կրթական ծրագրի պարագայում:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԳԿՄԿ-ում դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հիմնական գործիքը դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներն են, որոնք անցկացվում են յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո: Համաձայն կանոնակարգի՝ հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում: Այդուհանդերձ, ամբիոնների

հաշվետվությունները հնարավորություն չեն տալիս հասկանալու հարցումների արդյունքների քննարկման խորությունը. Ուստի պարզ չի դառնում, թե որքանով են վերլուծվում այդ արդյունքները, ինչ հետևություններ են արվում, բարելավման ինչ գործողություններ են իրականացվում և այլն: Համաձայն ինքնավերլուծության, հարցումների արդյունքներն օգտագործվում են դասախոսական պաշտոնների տեղակալման, միջազգային փոխանակումների և այլ գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի գնահատման առավել արդյունավետ ձև է դեկանի հետ իրականացվող կիսամյակային պարբերականության խորհրդակցությունները, որոնց, ինչպես և ԳԿՄԿ ղեկավար կազմի հետ անմիջաբար շփումների ժամանակ ուսանողները հնարավորություն են ունենում արտահայտել իրենց կարծիքը, դժգոհությունը, դիտողություններն ու առաջարկությունները: Պարզ դարձավ նաև, որ հենց այդ շփումների շնորհիվ տեղի են ունեցել դասախոսների փոփոխության մեկ-երկու դեպքեր:

Դասախոսների գնահատման մյուս ձևաչափը, որ հստակ պարբերականությամբ չի աշխատում, սակայն հաջողությամբ ներդրվել է վերջին շրջանում, շրջանավարտների հետ ֆոկուս խմբային հարցազրույցներն են: Հարցերի քանակն ու ձևակերպումները հնարավորություն են տալիս վերհանել հնարավորինս շատ խնդիրներ դասավանդման մեթոդների, մարտավարության, միջանձնային հարաբերությունների և այլնի մասին:

Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ն հանձն էր առել ՊԴ կազմի գնահատման մեխանիզմների ցանկը համալրել ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, սակայն, որ նշված մեխանիզմների կիրառումը հատուկենտ դեպքերից (Օտար լեզուների ամբիոն) անդին չեն անցել:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ն հանձն էր առել ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման համակարգ և մշակել վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Մասնավորապես, ԳԿՄԿ-ն նախատեսել էր ուսումնասիրել դասախոսների որակավորման բարձրացման համակարգի ներդրման փորձ: 2018թ. ԳԿՄԿ-ն ընդունել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման կարգը, ինչը ուսումնասիրությունից պարզվեց, որ նշված կարգի մշակման հիմքում եղել է, մասնավորապես, ԵՊՀ-ի փորձը: Այն իրականացվում է կրեդիտային եղանակով, 5-ամյա տևողությամբ, իր մեջ ներառում է ընդհանուր մասնագիտական և հետազոտական մասնագիտական կառուցամասերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կենտրոնը առանձնակի ուշադրություն է դարձնում դասախոսների օտար լեզուների և թվային կարողությունների բարձրացման վրա. Covid-19 համավարակի պայմաններում ԳԿՄԿ-ում հաջողությամբ իրականացվել են առցանց պարապմունքները: Քանի որ ծրագիրը 5-ամյա է (2018-2023թթ.), ուստի վաղ է դեռևս խոսել դրա գնահատման ու բարելավման փուլերի մասին: Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրում էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և հեռավար դասընթացների կազմակերպման համար

պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումն առաջնահերթություն է (ՌԾ 3-րդ ուղենիշ, 4-րդ կետ):

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրում բացակայում է հետազոտահենք դասավանդում ապահովող ելքային բնույթի կարողության բաղադրիչը:

Համաձայն ինքնավերլուծության՝ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման մեխանիզմներ են նաև.

- Անհատական խորհրդատվության, փորձի փախանակման, կլոր-սեղան քննարկումների, աշխատաժողովների, թրեյնինգների, սեմինարների նախաձեռնությունները,
- ԳԱԱ հետազոտական ինստիտուտներում ընթացող գիտական ծրագրերի շրջանակներում, ներպետական և միջազգային գիտաժողովներին, համաժողովներին և սեմինարներին մասնակցությամբ ապահովվող մասնագիտական ոլորտային վերապատրաստումները,
- Գիտագործնական սեմինարներն ու հրավիրյալ մասնագետների, գործատուների, փորձագետների, շրջանավարտների կողմից տրվող վարպետության դասերը,
- ERASMUS+ և միջազգային համագործակցության այլ ձևաչափերով դասախոսական փոխանակումների շրջանակում տեղի ունեցող կատարելագործումները:

Փորձագիտական այցը ցույց տվեց, սակայն, որ դասախոսների որակավորման բարձրացման վերոնշյալ միջոցառումները թեև վերջին շրջանում են սկսել խրախուսվել ԳԿՄԿ վարչական ղեկավար կազմի կողմից, այդուհանդերձ դրանց կանոնավորությունն ու հաճախակիությունը կախված է լինում ամբիոնի վարիչի/ԳԱԱ ինստիտուտի կամ կենտրոնի տնօրենի նախաձեռնողականությունից. Գործընթացները դեռևս հստակ ու կանոնավոր պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում փուլերով չեն անցնում:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Համաձայն ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի, ԳԿՄՄ-ում դասավանդում է (2020թ. Սեպտեմբերի 1-ի դրությամբ) 255 դասախոս, որոնցից հիմնական հաստիքային աշխատողները 17-ն են (ներկայացված հավելված 5.2-ում 50 դասախոս է ներկայացված որպես հիմնական հաստիքային աշխատող, այդ թվում՝ Կենտրոնի վարչական աշխատողները, ովքեր, փաստորեն, հիմնական վարչական աշխատողներ են և դասավանդում են համատեղությամբ): Դասախոսների մեծ մասն աշխատում է քաղաքացիաիրավական պայմանագրային հիմունքներով՝ աշխատանքային պայմանագրերի ամենամյա թարմացմամբ: Պրոֆեսորադասախոսական կազմի 90 տոկոսն ունի գիտական աստիճան, 79 տոկոսը Կենտրոնում աշխատում է ավելի, քան 3 տարի, 60 տոկոսը՝ ավելի, քան 5 տարի: Թեև առկա չէ հստակ վիճակագրություն, սակայն պարզ է դառնում, որ դասախոսների մեծ մասը ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ու կենտրոնների գիտաշխատողներն ու ԳԿՄԿ-ի հիմնական հաստիքային աշխատող դասախոսներն են:

ՄԿԾ-ների դասախոսներով ապահովվածության կայունությունը ԳԿՄԿ-ի համար առաջնահերթ խնդիր է. Բուհի զարգացման ռազմավարական ծրագրով այս ուղղությամբ Կենտրոնը հանձն է առել կիրառել փոխհատուցման և պարգևատրման համակարգ, հստակ իրավակարգավորել աշխատանքային հարաբերությունները, խրախուսել երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը և այլն (ՌԾ, ուղենիշ 6): Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ևս Կենտրոնը նախատեսել էր գործարկել ՊԴ կազմի խրախուսման և տույժի ենթարկման քաղաքականություն և ընթացակարգեր: Այս առումով պետք է նշել, որ Կենտրոնում 2020թ. Հունիսին ներդրվել է հետազոտական գործունեության արդյունքների վրա հիմնված գիտաշխատողների խրախուսման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման համակարգը: Գործող կարգով, սակայն, նախատեսված է լրավճարներ վճարել Կենտրոնի միայն հիմնական հաստիքային աշխատողներին, որոնք, ինչպես տեսանք ՊԴ կազմի փոքր մասն են կազմում: Իսկ որպես լրավճար վճարվող գումարը չի կարող գերազանցել տարեկան 500 հազար դրամը:

Պետք է նկատել, որ ցածր աշխատավարձերն ու լրացուցիչ խրախուսման միջոցների սակավությունն է հիմնական պատճառը, որ ՊԴ կազմի մեծ մասը չի հանդիսանում հիմնական հաստիքով աշխատող: Մյուս կողմից էլ պետք է նկատել, որ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների գիտաշխատողներով ապահովվածությունն էլ նպաստում է ՊԴ կազմի կայունությանը, թեև այստեղ էլ երիտասարդ կադրերի մշտական հոսունություն է առկա՝ կրկին պայմանավորված ԳԱԱ համակարգում ցածր վարձատրությամբ:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ն իր զարգացման 2019-2023թթ. Ռազմավարական ծրագրում նախատեսել է խրախուսել երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը: Ինքնավերլուծության դիտարկումից, փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳԿՄԿ-ն չունի սկսնակ դասախոսների մենթորության հստակ քաղաքականություն, ծրագիր, ընթացակարգ, այդուհանդերձ մենթորությունը մի քանի ամբիոններում ոչ ֆորմալ եղանակով, ավանդույթի ուժով իրագործվում է: Կենտրոնում տարածված է այն մտայնությունը, որ ասպիրանտները, երիտասարդ հետազոտողները, ովքեր նաև դասավանդում են, անընդհատ աշխատելով փորձառու գիտաշխատողների հետ, կատարելագործում են իրենց մասնագիտական կարողությունները: ԳԱԱ ինստիտուտների փորձառու գիտաշխատողները, որոնցից շատերը նաև դասավանդող պրոֆեսորներ են, ամբիոնի վարիչներ, դոցենտներ, ասպիրանտներին, հայցորդներին, նույնիսկ ԳԱԱ ինստիտուտների լաբորատորիաներում աշխատանքի ընդունված մագիստրանտներին ուղղորդում են ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական գործունեության մեջ՝ հետևյալ ձևերով.

- իրենց գիտական ծրագրերին, գիտափորձերին, դասերին մասնակից դարձնելով և փոխանցելով դասավանդման ու հետազոտության մեթոդները,
- ԳԱԱ ինստիտուտների գիտական խորհուրդների, ԳԿՄԿ ամբիոնների նիստերին մասնակից դարձնելով՝ նրանց հետ քննարկելով նշված ստորաբաժանումների

գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ուղղությունները, ծրագրերը:

Համաձայն ինքնավերլուծության, բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին նպաստող հանգամանքներ են Որակի ապահովման բաժնի և ուսումնամեթոդական մասի հետ համատեղ համակարգվող գիտամեթոդական և ուսումնամեթոդական վերապատրաստումները, ինչպես նաև օտար լեզվի հմտությունների կատարելագործումը: Ինչպես արդեն նշվել է, ԳԿՄԿ-ում, մյուս բուհերի նման, առկա են պրոֆեսորադասախոսական պաշտոնների տարակարգեր՝ պրոֆեսոր, դոցենտ և դասախոս: Թեև այս տարակարգերի միջև առկա է վարձատրման չափերի տարբերություններ, այդուհանդերձ այդ տարբերություններն այնքան նշանակալի չեն, որ վարձատրությունը դառնա մասնագիտական առաջընթաց խրախուսող էական հանգամանք: Իր միջոցների սահմաններում ԳԿՄԿ-ն նաև խրախուսում է օտար լեզվով դասավանդումը (մեկ ակադեմիական ժամի համար օտար լեզվով դասավանդող գիտությունների դոկտորի համար սահմանված է 4000 դրամ, թեկնածուի համար՝ 3500 դրամ, գիտական աստիճան չունեցող դասախոսի համար՝ 3000 դրամ աշխատավարձ): ԳԿՄԿ-ն նաև խրախուսում է իր դասախոսների միջազգային շարժունությունը՝ գործուղումները, արտասահմանյան բուհերում դասավանդումները և միջազգային գիտաժողովներին մասնակցությունները համարելով մասնագիտական առաջընթացի կարևոր մոտիվացիա: Պետք է նկատել, որ ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված՝ Կենտրոնն ինքը շատ քիչ գումարներ է հատկացնում այս գործընթացին, փոխարենը արտաքին կապերի բաժինն է, որ ակտիվ աշխատանք է տանում այդ գործընթացները կազմակերպելու, դասախոսներին ուղղորդելու ուղղություններով:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով ԳԿՄԿ-ը նախատեսել է մշակել վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ: Այդ գործողության շրջանակներում, մասնավորապես, պլանավորված է եղել ուսումնասիրել վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման այլ բուհերի փորձը, գործարկել վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետության գնահատման կարգ, վերլուծել վարչական աշխատակազմի գործունեության արդյունավետությունը: Ուսումնասիրված արձանագրությունները և այլ փաստաթղթերը,սակայն, լռում են նշված գործողությունների իրականացված լինելու մասին: Փորձագիտական այցից պարզվեց, որ այդ վերլուծությունները կատարվել են ընդամենը աշխատանքային կարգով, բանավոր եղանակով:

Իր զարգացման 2019-2023թթ. Ռազմավարական ծրագրով (ուղենիշ 6, գործողություն 6) ԳԿՄԿ-ն խնդիր է դրել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության համատեքստում ապահովել վարչական աշխատակազմի կայունությունը՝ փոխհատուցման և պարգևատրման համակարգերի կիրառմամբ, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորմամբ: Ըստ այդմ ԳԿՄԿ-ում սահմանվել են տնօրենի, փոխտնօրենների, դեկանի, ամբիոնի վարիչի, կառուցվածքային

ստորաբաժանումների ղեկավարների ու մասնագետների պաշտոնների անձնագրերը: Սակայն վարչական պաշտոններում մարդկանց նշանակումը գերազանցապես տեղի է ունենում հայեցողական, ոչ մրցութային հիմունքներով: Ֆինանսական պարգևատրումներ հնարավորությունների սահմաններում կատարվում են, որոնց չափը նշանակալի չէ:
ԳԿՄԿ-ում բացի կենտրոնական վարչական ապարատից, կրթական ծրագրերի մակարդակում ուսումնական գործունեության կազմակերպման և օժանդակման գործառույթներ են իրականացնում, ամբիոնի վարիչը (վերջինս, գիտամանկավարժական գործառույթներից զատ, կատարում է նաև վարչական աշխատանք) և ամբիոնի լաբորանտը/գործավարը: Կրթական ծրագրերի որակի, բովանդակության, վերահսկողության, բենչմարքինգի, պրակտիկայի, աշխատաշուկայի հետ կապերի, հետազոտության կազմակերպման հիմնական պատասխանատուն ամբիոնի վարիչն է, ով իր գործունեությունն իրականացնում է լաբորանտի աջակցությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ում սահմանված և չափանիշավորված են պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տարակարգերը, դրանց տեղակալման, պաշտոնների նշանակման սկզբունքները: Միևնույն ժամանակ, հատկապես աշխատավարձերի ցածր լինելու պատճառով մրցութային ընտրություններ գործնականում չիրականացնելը նվազեցնում է բարձրորակ գիտամանկավարժական կադրերին հրապուրելու և ներգրավելու հնարավորությունները: ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ու կենտրոնների ասպիրանտներով պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը հիմնականում լուծում է որակյալ կադրերով ապահովվածության հարցը: Մյուս կողմից էլ երիտասարդ կադրերի մի զգալի մասն էլ թողնում է ՀՀ ԳԱԱ համակարգը, ավելի բարձր վարձատրվող աշխատանք գտնելով, ինչը բացասաբար է անդրադառնում Կենտրոնում դասավանդման կազմակերպման վրա: Դասախոսների հավաքագրման գործընթացի բարելավման համատեքստում փորձագիտական խումբը կարևոր է համարում ընտրության ելքային բնույթի չափանիշների ներդնումը:

Կրթական ծրագրերում դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների բացակայությունը նվազեցնում է կրթական ծրագրերը վերջնարդյունքահեն կազմակերպելու հնարավորությունները: Փորձագիտական խումբը թեև դրական է համարում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ը գիտակցել է դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները կրթական ծրագրերում սահմանելու կարիքը, սակայն ստանձնած հանձնառության մինչ այժմ իրագործված չլինելը վկայում է կրթական ծրագրերի կառավարման զգալի խնդիրների մասին: Ըստ էության առկա է իրավիճակ, երբ ամբիոնի վարիչի անձից է կախված լինում կրթական ծրագրերի վերջնարդյունքներն ապահովելու ունակ կադրերի ճիշտ հավաքագրումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ը ուսանողական հարցումների և շրջանավարտների ֆոկուս խմբային քննարկումների գործիքներով իրականացնում է դասախոսների գնահատում: Միաժամանակ այս գործիքներով գնահատման արդյունքների խորը վերլուծության, ինչպես նաև հենց գործիքների (հարցումներ, ֆոկուս խմբեր) արդյունավետության վերլուծությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս բացահայտել դրանց կիրառման ներուժն ու

հնարավորությունները: Պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմների ներդրված չլինելը, ի հեռուկս նրա, որ այն բարելավման պլանով նախատեսված էր, պայմանավորված է կառավարման խնդիրներով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ում գործարկվել է դասախոսների որակավորման բարձրացման 5-ամյա ծրագիրը, որի արդյունքները նկատելի են՝ հատկապես դասախոսների օտար լեզվի և թվային հմտությունների զարգացման առումով: Ծրագրի իրականացման ընթացիկ վերլուծությունները դրա բարելավման հիմք կարող էր ապահովել: Դասախոսների որակավորման բարձրացման մյուս միջոցառումների կանոնավորության ու հաճախակիության՝ ամբիոնի վարիչի/ԳԱԱ ինստիտուտի կամ կենտրոնի տնօրենի նախաձեռնողականությունից կախված լինելը վկայում է գործընթացին համակարգված ու որակի կառավարման մոտեցում չցուցաբերելու մասին:

ԳԿՄԿ-ում պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովման հիմնական գրավականը ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ու կենտրոնների գիտաշխատողների ու ասպիրանտների հանգամանքով է պայմանավորված, ինչն, անշուշտ, դրական է: Մյուս կողմից, սակայն, ԳԿՄԿ-ում և ԳԱԱ համակարգում ցածր աշխատավարձերով պայմանավորված երիտասարդ որակյալ կադրերի մշտական արտահոսքը և ընդհանուր ուսումնական բեռնվածության մի որոշ մասն էլ արտաքին համատեղությամբ դասավանդողների վրա ընկած լինելու հանգամանքը որոշակիորեն վտանգում են կրթական ծրագրերի՝ պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ֆինանսների սղությունը բացասաբար է անդրադառնում նաև դասախոսների մասնագիտական առաջընթացի տեմպերի վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ԳԿՄԿ-ն ապահովում է կրթական ծրագրերի բնականոն իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմերի առնվազն նվազագույն շեմերը: Փորձագիտական խումբը արձանագրում է նաև, որ չնայած վարչական պաշտոնների անձնագրերի առկայությանը, դրանց տեղակալումը մեծամասամբ տեղի է ունենում ոչ մրցութային, հայեցողական հիմունքներով, ինչի պատճառներից մեկը ֆինանսական միջոցների սղությունն է (լավագույն կադրերին հրապուրելու իմաստով): Այս հանգամանքին ըմբռնումով մոտենալով հանդերձ, փորձագիտական խումբը, միևնույն ժամանակ, նշված հարցերի լուծման լավատեսական միտումներ չի տեսնում դեռևս:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կենտրոնն իր մասնագիտություններն իրականացնելու համար ունի անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմ, որը հենվում է հիմնականում ՀՀ ԳԱԱ ինստիտուտների մարդկային ռեսուրսների վրա, առկա են դասախոսական կազմի կարիքների վերհանման, գնահատման և մասնագիտական առաջընթացի ապահովման որոշ մեխանիզմներ, կենտրոնը քայլեր է իրականացնում դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է 5-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԳԿՄԿ 2019-2023 թվականների ռազմավարական ծրագրի 4-րդ ուղենիշը նվիրված է գիտահետազոտական գործունեության զարգացումը: Այստեղ հիմնական շեշտադրումն արվում է միջազգային ստանդարտի հետազոտական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, ակադեմիական ազնվության մեխանիզմների մշակման, հետազոտական գործունեության խթանման, դրա արդյունքների հանրայնացման և ապրանքայնացման վրա:

Նախորդ հավատարմագրումից հետո ԳԿՄԿ-ն 2019-2023 թվականների համար մշակել է հետազոտական ռազմավարություն, որն ի լրումն Ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրների նախատեսում է ընդլայնել Կենտրոնի գործունեության շրջանակը, ստեղծել նոր ամբիոններ, միջազգային փորձի և կապերի օգտագործմամբ Կենտրոնը համապատասխանեցնել միջազգային հետազոտական ուսումնական հաստատության չափանիշներին, ապահովել գիտություն-կրթություն-հետազոտություն կապը և նպաստել գիտության ապրանքայնացմանը:

Այս առնչությամբ Կենտրոնում արդեն մշակվել են և դեռևս մշակման փուլում են գտնվում մի շարք կարգեր: Մասնավորապես, մշակվել են Հետազոտության արդյունքների հանրայնացման, իրազեկման և ապրանքայնացման գործընթացն ուղղորդող կարգ, ԳԿՄԿ-ում հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականություն, Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ, Ակադեմիական ազնվության հայեցակարգ, ձեռք է բերվել և ներդրման փուլում է գտնվում գրագողությունը ստուգող Plagscan ծրագիրը, որը փորձարկվել է տնտեսագիտության ամբիոնում:

Առանձնացվել է գիտահետազոտական գծով փոխտնօրենի հաստիքը, որի հիմնական գործառույթը ԳԱԱ ինստիտուտների հետ կապի ապահովումն է:

ԳԿՄԿ-ում տարին երկու անգամ հրատարակվում է ԲՈԿ-ի գիտական պարբերականների ցանկում «ԿԱՃԱՌ» գիտական պարբերականը: Կենտրոնի դասախոսները, ասպիրանտները և մագիստրանտները հնարավորություն ունեն հոդվածներ հրատարակել նաև գիտահանրամատչելի «Գիտության աշխարհում» հանդեսում:

6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտական ռազմավարական պլանի հիման վրա Կենտրոնում կազմվել է երկարաժամկետ աշխատանքային պլան, որը սակայն չի պարունակում ժամանակացույց, նշված չեն նաև պատասխանատու անձինք կամ կառույցները, ուստի հստակ չէ, թե դրված խնդիրները ինչ հերթականությամբ պետք է իրականացվեն, ինչ ժամկետներում և ում կողմից պետք է համակարգվեն:

Միջնաժամկետ ծրագիրը հիմնականում նախատեսում է 2019-2022 թվականների ընթացքում տարատեսակ կարգերի, ընթացակարգերի, մեխանիզմների մշակում և ներդրում, գիտաժողովների անցկացում, հետազոտության խթանմանն ուղղված քայլեր: Որպես միջնաժամկետ ծրագիր՝ ԳԿՄԿ-ում ընդունվել է նաև նախորդ հավատարմագրման ընթացքում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը:

Որպես կարճաժամկետ ծրագիր 2018-2019 թվականների կարճաժամկետ ծրագրից բացի այլ ծրագրեր չեն կազմվել: Որպես այդպիսին հանդես են գալիս թեմատիկ ֆինանսավորմամբ բազային ծրագրերն ու ամբիոնային ծրագրերը: Վերջիններիս արդյունքները ներկայացվում են ամբիոնների հաշվետվություններում: Ամբիոնների գիտահետազոտական ուղղությունները հաստատվում են Կենտրոնի գիտխորհրդի կողմից:

Բազային ինստիտուտ ունեցող ամբիոնների հեազոտական ծրագրերը հիմնականում կազմվում են ըստ տվյալ ինստիտուտի կամ կենտրոնի գիտական ծրագրերի:

Բազային ինստիտուտ չունեցող ամբիոնները փորձում են իրենց հետազոտություններն իրականացնել մասնագիտական տարբեր հաստատություններում պրոբլեմատիկայի վերհանման, թեմաների ձևակերպման և ուսանողների միջոցով դրանց առանձին հատվածների հետազոտման միջոցով: Մասնավորապես, ներառական կրթության խնդիրները վեր հանելու նպատակով մանկավարժության ամբիոնի դասախոսներն ու ուսանողները ուսումնասիրություններ են իրականացնում կրթական հաստատություններում, և հայտնաբերված խնդիրները դարձնում են իրենց մագիստրոսական թեզերի ուսումնասիրության առարկա:

6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցից հետո Կենտրոնում ստեղծվել է գիտության գծով փոխտնօրենի հաստիքը՝ որպես հետազոտության զարգացման պատասխանատուի:

Մշակվել է Գիտաշխատողների խրախուսման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը, որով նախատեսվում է ամբիոնի դասախոսներին նյութապես շահագրգռել հրատարակվել միջազգային հեղինակավոր պարբերականներում, գրել դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն:

Սակայն նախատեսված բյուջեն շատ փոքր է (2020 թվականին այն կազմել է 400 հազար դրամ) և, ինչպես պարզվեց այցի ընթացքում, լրավճարները զիջում են ԳԱԱ

ինստիտուտների կողմից տրամադրվող համանման լրավճարներին, ինչի արդյունքում դասախոսները գերադասում են հրատարակվելիս ներկայանալ որպես ինստիտուտների աշխատակիցներ, և ոչ թե Կենտրոնի դասախոսներ (2020 թվականին հավելավճար է ստացել 13 դասախոս, որոնցից տասը հոդված են տպագրել Կենտրոնի «ԿԱՃԱՌ» պարբերականում)։

Մշակվել է նաև ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների գնահատման կարգը, որով հաստատվում է ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքման, մշակման և գնահատման գործընթացը։

Առանձին լաբորատորիաներ և կենտրոններ համալրված են նորագույն սարքավորումներով, սակայն, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, միշտ չէ, որ Կենտրոնը բավականաչափ ֆինանսավորում է հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ձեռքբերումը։

6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

2020 թվականին ընդունվել է Հետազոտական գործունեության արդյունքների վրա հիմնված գիտաշխատողների խրախուսման համար լրավճարների հաշվարկման և վճարման կարգը, որը 80-100 հազար դրամ լրավճար է նախատեսում Կենտրոնների դասախոսների կողմից «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված պարբարեկաններում յուրաքանչյուր հրատարակության համար (2020 թվականին նման հրատարակման համար լրավճար ստացած դասախոսներ չկան)։

Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ հետազոտական աշխատանքների խրախուսման նպատակով վերոշյալ կարգով «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված, «ԿԱՃԱՌ», ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական պարբերականներում տպագրվող աշխատակիցները նախատեսված լրավճարից բացի 30000 դրամ լրացուցիչ լրավճար են ստանում, եթե տպագրված հետազոտությունն ունի արտասահմանցի համահեղինակ (2020 թվականին լրավճար ստացած 13 դասախոսներից ոչ ոք չուներ արտասահմանցի համահեղինակ)։

2019 թվականին օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում 7 հրապարակում է եղել, իսկ ԱՊՀ գրախոսվող մասնագիտական ամսագրերում՝ 15՝ հիմնականում բնագիտական ոլորտներում։

Առանձին մասնագիտությունների գծով միջազգային մասնագետների մասնակցությամբ կոնֆերանսներ և սեմինարներ են կազմակերպվում։ Մասնավորապես, Կենսաբանության ամբիոնում տարեկան մոտ տասը նմանատիպ սեմինար է իրականացվում։ 2020 թվականին Կենտրոնը հայաստանյան և ռուսաստանյան մի շարք գիտական կենտրոնների և համալսարանների հետ կազմակերպել է «Պատմական հիշողությունն ու ժամանակակից քաղաքական գործընթացները» միջազգային հեռավար գիտաժողովը։

ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը ԳԿՄԿ-ի հետ համատեղ 2021թ. Սեպտեմբերի 6-ից 13-ը անցկացրել է «Շրջակա միջավայրի գիտությունները՝ հանուն կայուն առողջության» միջազգային առցանց ամառային դպրոցը, որի նպատակն է Հայաստանում և Վրաստանում բնապահպանական կրթական ծրագրերի

արդիականացման աշխատանքները լրացնել հետազոտահենք նորարարական ուսուցման ձևերով:

Հետազոտության միջազգայնացման խրախուսումը ԳԿՄԿ-ում առավելապես կատարվում է ապակենտրոն սկզբունքով, առանձին ամբիոնների վարիչների անհատական նախաձեռնությունների շնորհիվ: Այսպես, Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում սահմանված է կանոն առ այն, որ այն դասախոսը, ով մագիստրոսական թեզ չի ղեկավարում, չի կարող մասանակցել ERASMUS+ շարժունության ծրագրերի:

6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Կենտրոնում մշակվել է Հետազոտության արդյունքների հանրայնացման, իրազեկման և ապրանքայնացման գործընթացն ուղղորդող կարգը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները:

Կենտրոնի դասախոսները հիմնականում ԳԱԱ տարբեր ինստիտուտների և կենտրոնների առաջատար գիտաշխատողներ են և ակտիվորեն զբաղվում են հետազոտական աշխատանքով: Կրթական ծրագրերի մեծ մասը ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում ապահովում է մագիստրոսական թեզերի՝ գիտական ղեկավարների հետազոտական աշխատանքի հետ կապելով, ինչպես նաև «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի ներդրմամբ:

Առանձին մասնագիտությունների գծով ուսանողները լայնորեն օգտվում են ինստիտուտների ռեսուրսներից և առաջին կուրսից ընդգրկվում են գիտական ծրագրերում, սակայն, ընդհանուր առմամբ, նման կրթական ծրագրերի թիվը մեծ չէ, և Կենտրոնի ուսանողների միայն փոքր տոկոսն է ներգրավված ԳԱԱ համապատասխան ինստիտուտների գիտահետազոտական ծրագրերում:

Թեզերի թեմաները հաճախ ընտրվում են՝ ըստ գիտական ղեկավարի կատարած հետազոտության, և ուսանողն առաջին կուրսից ընդգրկվում է հետազոտական աշխատանքի մեջ: Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի ուսանողները ուսումնառության հենց սկզբից ընտրում են իրենց հետազոտական ուղղությունը, որը կապվում է ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի բաժինների հետազոտական գերակայությունների հետ:

Սակայն, ուսանողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը շատ փոքր է. 2019 թ. հրատարակվել է նմանատիպ 3 գիտական հոդված, իսկ 2020-ին՝ երեք գիտական և մեկ գիտահանրամատչելի:

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի թիվը նույնպես մեծ չէ. 2020-ին նման ծրագրերի թիվը 10 է, իսկ ներգրավված ուսանողներինը՝ 14, ծրագրերի մեծ մասը ինֆորմատիկայի ոլորտում են իրականացվում:

Հետազոտության կապն ուսումնառության հետ հիմնականում ապահովվում է դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքի, ուսանողներին ամբիոնների ու համապատասխան ինստիտուտների գիտական ծրագրերում ընդգրկման

միջոցով: Ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմներ են ապահովում որոշ դասընթացներ: Այսպես, «Բնապահպանություն և բնօգտագործում» ՄԿԾ-ի «Էկովիճակագրություն» դասընթացը, որն ուսուցանում է տվյալագիտական SPSS համակարգը, ոչ միայն մագիստրանտին զինում է իր մագիստրոսական թեզի տվյալագիտական հենքն ապահովելու կարողությամբ, այլև նրան հնարավորություն է տալիս սույն գործիքը կիրառել այլ դասընթացի ուսումնասիրման ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԳԿՄԿ-ն ունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, որը հստակեցրել է նախորդ հավատարմագրումից հետո: Նորարարությունը, հետազոտական աշխատանքների իրականացումը, հետազոտության և ուսումնառության միջև կապի զարգացման անհրաժեշտությունը ԳԿՄԿ-ում կարևորագույն արժեքներից և ռազմավարական հիմնական նպատակներից են: Նշված առաջնահերթություններին համապատասպան ժամանակացույցի մշակումն ու իրականացվող գործընթացների քայլերի հերթականության սահմանումը կնպաստեն ռազմավարական նպատակների իրականացմանն ու հետազոտական գործունեության զարգացմանը:

Դրական է, որ նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում ԳԿՄԿ-ն բարելավել և համակարգել է ոլորտի աշխտանքները՝ համալրելով աշխատակազմը, մշակելով ոլորտը կանենակարգող փաստաղթեր, ինչպես նաև մշակելով և կիրառելով խրախուսաման որոշակի մեխանիզմներ: Այս ամենի շարունակական իրականացումը կնպաստեն հետազոտական գործունեության և ուսումնառության փոխկապակցմանը: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ դասախոսների հետազոտական աշխատանքով զբաղվելու խրախուսման չափը բավարար չէ հետազոտական աշխատանքների էական աճ ապահովելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԳԿՄԿ առանձին ամբիոններ համագործակցում են եվրոպական համալսարանների հետ, իրականացնում հետազոտական ծրագրեր, որը նաև նպաստում է հետազոտության միջազգայնացմանը, սակայն այս գործընթացը նույնպես համատարած բնույթ չի կրում: Դրական է, որ ԳԿՄԿ-ն խրախուսում է իր դասախոսների տպագրվելու միջազգային ցիտվող ամսագրերում, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների հետ համատեղ տպագրվելու համար սահմանել է լրավճար, որը մոտիվացիայի աղբյուր կարող է հանդսանալ դասախոսների համար:

Կենտրոնի ամբիոնների զգալի մասում հետազոտության և կրթության կապն ապահովվում է մագիստրոսական թեզերի և ուսանողների՝ գիտական ղեկավարների հետազոտական աշխատանքների մեջ ներգրավվման միջոցով: Առանձին, մասնավորապես՝ բնագիտական մասնագիտությունների գծով, ուսանողներն ընդունվելուց անմիջապես հետո ներգրավվում են ամբիոնում գործող գիտական ծրագրերում, որոնց համապատասխան ընտրվում է թեզի թեման, և ուսանողն ուսումնառության ողջ ընթացքում սովորում է՝ գործնականում կիրառելով ստացած գիտելիքը: Սա Կենտրոնի ամենամեծ առավելությունն է:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԳԿՄԿ-ն որդեգրել է ուսանողներին՝ գիտական ծրագրերի և թեմաների մեջ ներգրավելու քաղաքականություն, սակայն այդ ներգրավվածության տոկոսը ներկայումս փոքր է և համատարած չէ բոլոր ուղղություններում, ինչը կարող է խոչընդոտել լավ փորձի տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ն ունի հետազոտական ոլորտում իր հավակնություններն արտահայտող ռազմավարական ուղղություններ, փորձում է ստեղծել նախադրյալներ հետազոտական գործունեության միջազգայնացման համար, խթանում է հետազոտության իրականացումը և դրա փոխկապակցումը ուսումնառության գործընթացի հետ, կատարվել են բարելավումներ հաշվի առնելով նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքներից ելնելով, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է 6-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ԳԿՄԿ ամբիոնների ճնշող մեծամասնությունը տեղակայված է ԳԱԱ համապատասխան ինտսիտուտներին կից և օգտվում են վերջիններիս գիտական և ենթակառուցվածքային բազայից: Կենտրոնի տրամադրության տակ է գտնվում ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, որը Հայաստանում երկրորդն է իր հագեցվածությամբ: Կենտրոնի ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու ոչ միայն Հիմնարար գիտական գրադարանից, այլև ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների գրադարաններից: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ միջազգային գիտական պարբերականների հասանելիությունը Կենտրոնում ինստիտուցիոնալ մակարդակում լուծված չէ, խնդիրը լուծվում է անհատական մակարդակում ուսանողների և դասախոսների անձնական կապերի միջոցով:

Կենտրոնում գործում են նաև Տնտեսագիտական լաբորատորիա, Հոգեբանական դիտարան, Իրավաբանական կլինիկա: Կենտրոնն ունի պատշաճ կահավորված լսարանային բազա, կան առարկայական կաբինետներ: Կենտրոնի լսարանները հագեցված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, ինչը դասավանդողներին և ուսումնառողներին հնարավորություն է տալիս ուսուցումը կազմակերպել նոր ժամանակների պահանջներին համապատասխան: Կենտրոնի բոլոր հարկերում կա անվճար WI-FI-ի հասանելիություն:

ՀՀ ԳԱԱ-ի տարբեր ինստիտուտներ և կառույցներ, որտեղ տեղակայված են ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնները, անդամակցում են միջազգային տարբեր գիտական կառույցների: Գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև նրանց լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ կատարելու համար կամ ստեղծվում են նոր լաբորատորիաներ:

Կենտրոնում առկա է հեռավար ուսուցման համար հատկացված առանձին լսարան՝ հագեցած հեռավար ձևաչափով դասընթացն անցկացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

Փորձագիտական այցի և ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ ինստիտուտներում առկա ռեսուրսային բազաները տարբերվում են իրենց թարմության աստիճանով: Մասնավորապես «Բնապահանություն և բնօգտագործում» կրթական ծրագիրն իրականացվում է ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի բազայի վրա և ուսանողներն օգտվում են ժամանակակից միկրոսկոպից, իրենց տրամադրության տակ ունեն հագեցած լաբորատորիա և այլն: «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ծրագիրը նույնպես իրականացվում է ժամանակակից համակարգիչներով հագեցած լսարաններում:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ԳԿՄԿ բյուջեն ձևավորվում է վարձավճարների, դրամաշնորհների հաշվին, ինչպես նաև վճարովի դասընթացներից ստացվող միջոցներով: Կենտրոնում մշակվել և հաստատվել է ԳԿՄԿ Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականություն և հաստատվել է ֆինանսական միջոցներին համապատասխան Կենտրոնի գործունեության պլանավորման և մշտադիտադիտարկման կարգը: Տվյալ քաղաքականությունը հիմք է հանդիսանում Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելու համար:

Համաձայն ինքնավերլուծության 2019 և 2020 թվականների տարեկան ծախսերի նախահաշիվներում հատուկ բյուջե է հատկացվել դասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման և գիտական հետազոտությունների խրախուսման համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ գործնական աշխատանքների համար հատկացվող միջոցները միշտ չէ, որ բավարարում են առկա կարիքները, մասնավորապես այն ոլորտներում, որոնք փորձեր իրականացնելու համար լրացուցիչ նյութերի կարիք ունեն:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության կենտրոնում մշակվել և ներդրվել է Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականությունը: Կենտրոնի ֆինանսական բաժինը բյուջեի միջոցների ծախսման նպատակայնության և արդյունավետության մշտադիտարկում է իրականացնում, որի արդյունքում անհրաժեշտության դեպքում ծախսային հոդվածների միջև վերաբաշխումներ են իրականացվում:

Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումները հանդիսանում են Կենտրոնի ֆինանսական պատասխանատվության կենտրոնները: Ստորաբաժանումների ղեկավարները յուրաքանչյուր տարի ֆինանսական բաժնին են ներկայացնում իրենց ղեկավարած ստորաբաժանման առաջիկա տարվա իրականացվելիք միջոցառումների իրականացման համար պահանջվող ապրանքների և նյութերի ծախսերը, դրանց հիմնավորումները և միջոցառումների վերջնարդյունքները: Ֆինանսական բաժինն ուսումնասիրում է ներկայացված պլանների կազմման ճշտությունը՝ դրանք համադրելով առաջիկա տարվա կանխատեսվող եկամուտների հետ, կատարում անհրաժեշտ ճշգրտումներ և լրամշակումներ, կազմում և Կենտրոնի տնօրենի հաստամանն է ներկայացնում Կենտրոնի տարեկան բյուջեն: Այս տարի ներդրվել է ֆինանսիստի հաստիք, ում հիմնական պարտականությունները բյուջեի ծախսերի մոնիթորինգն է և պլանավորումը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ըստ ինքնավերլուծության 2019 և 2020 թվականների տարեկան ծախսերի նախահաշիվներում առանձին հոդվածներով սահմանվել են կրթության որակի ապահովման գծով համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստման, հետազոտական աշխատանքների խրախուսման, գիտաժողովների մասնակցության գծով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կենտրոնում իրականացվում են կրթական ծրագրերին առնչվող կարիքների վերհանման գործընթացներ: Կրթական ծրագրերի իրականացման համար առկա են համապատասխան ռեսուրսներ, և տվյալ ռեսուրսային բազան ժամանակ առ ժամանակ թարմացվում է:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ ԳԿՄԿ-ում բարելավվել են փաստաթղթավորման գործընթացները: ԳԿՄԿ ստորաբաժանումներում գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Կենտրոնի գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգի համաձայն: Համաձայն ինքնավերլուծության՝ տվյալ կարգով կանոնակարգվում են Կենտրոնում թղթակցության վարման կարգը, դիմումների և փաստաթղթերի կազմումը, ձևակերպումը, փաստաթղթերի ընդունման և քննարկման ժամկետները, ԳԿՄԿ ելքի գրությունների թղթակցությունը և ձևակերպումը, ԳԿՄԿ ստացված փաստաթղթերի նկատմամբ վերահսկողությունը և փաստաթղթերի հետագա պահպանությունն ու արխիվացումը:

Ըստ ինքնավերլուծության կենտրոնում գործում է նաև ներքին տեղեկատվական էլեկտրոնային ցանց և էլեկտրոնային դեկանատ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դեռևս տվյալ համակարգը լիարժեք չի գործում:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համաձայն ինքնավերլուծության՝ կենտրոնի տարեկան ծախսերի նախահաշիվներում առանձին ծախսային հոդվածով ֆինանսական ռեսուրսներ են հատկացվում առողջության և անվտանգության միջոցառումների համար:

Ըստ ինքնավերլուծության՝ կենտրոնում առկա է Բուժկետ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այն լիարժեք չի գործարկվում:

Հիմնական աշխատողներն հնարավորություն ունեն օգտվելու սոցիալական փաթեթի հնարավորությունից, ինչպես նաև մատչելի պայմաններով օգտվել ԳԱԱ համակարգում առկա հանգստյան տներից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար որևէ հատուկ պայմաններ ստեղծված չեն. մասնաշենքերի զգալի մասում կան վերելակներ, սակայն մինչև վերելակ հասնելը կան աստիճաններ, որոնք չունեն թեքահարթակներ: Սակայն կենտրոնի որոշ մասնաշենքերում առկա են համապատասխան ռեսուրսներ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ լաբորատորիաներում առկա են օդափոխիչներ, ինչը նպաստում է անվտանգության կանոնների պահպանմանը՝ լաբորատոր փորձեր իրականացնելու ժամանակ: Ինչպես նաև կենտրոնում առկա է հակահրդեհային համակարգ:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող ամենաարդյունավետ մեխանիզմը՝ պարբերաբար վերջիններս շրջանում անցկացվող կրթական ծրագրից գոհունակության անանուն հարցումներն են, որն ապահովում է հստակ պատկերացում կազմել շահակիցների բավարարվածության աստիճանի վերաբերյալ: Ինչպես նաև կարևոր և գործուն մեխանիզմ են պարբերաբար կազմակերպվող քննարկումները և հանդիպումները:

Փորձագիտակային այցի ընթացքում և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ որ, ինչպես ուանողների, այնպես էլ դասախոսների զգալի մասը բավարարված է իրենց տրամադրվող ռեսուրսներից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ընդհանուր առմամբ ԳԿՄԿ-ում առկա են նյութական և ֆինանսական անհրաժեշտ

ռեսուրսներ, որը նպաստում է բուհի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը:

Թեև կենտրոնը հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ դասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման և գիտական հետազոտությունների խրախուսման համար, այնուամենայնիվ դասախոսներին և ուսումնաօժանդակ կազմին տրվող աշխատավարձերը դեռևս շարունակում են մնալ ցածր, ինչը կարող է ռիսկային լինել մրցունակ կադրերի ներգրավման համար:

Կենտրոնը փորձում է ապահովել համապատասխան ռեսուրսային բազա կրթական ծրագրերի իրականացման համար, ինչպես նաև կիրառելով ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ռեսուրսային բազան, ինչը հնարավորություն է տալիս ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար:

ԳԿՄԿ-ում բյուջեն ձևավորվում է մի քանի աղբյուրներից, ինչը դրական է ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացիայի տեսակետից: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ գիտական հետազոտությունների առևտրայնացումը կնպաստի ֆինանսական կայունությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ կենտրոնում բարելավել են փաստաթղթավորման գործընթացները: Ստեղծվել են տվյալների էլեկտրոնային բազաներ, սակայն տվյալ համակարգը դեռևս չի գործում հաղորդակցության նպատակով: Համակարգի լիարժեք կիրառումը կնպաստի աշխատանքների առավել համակարգվածությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ կենտրոնը փորձում է ստեղծել անվտանգ և ապահով միջավայր ուսանողների ուսումնառության համար: Կենտրոնը հագեցած է անհրաժեշտ միջոցներով, այնուամենայնիվ ԳԿՄԿ-ն դեռևս լիարժեք կահավորված չէ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ը, կիրառելով նաև ՀՀ ԳԱԱ-ի ռեսուսրները, ստեղծում է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջավայր, ունի անհրաժեշտ նյութական ռեսուսրներ, քայլեր են կատարվում ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, ներդրվել է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, գործում են ռեսուրսների հասանելիության և կիրառելիության գնահատման որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՄՈՒՀ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի կանոնադրությամբ: ՄՈՒՀ-ը իր գործունեության մասին յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԳԱԱ նախագահությանը: Տնօրենի տարեկան հաշվետվությունը կազմվում է առանձին ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հիման վրա, որոնք արտացոլում են ընթացիկ գործունեության արդյունքները: Տնօրենի և գիտական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները ներկայացվում են Գիտական խորհրդին:

Այցի ընթացքում իրականացված փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեց, որ վարից վեր հաշվետվողականությունը հիմնականում քանակական ցուցիչներ ու ցուցանիշներ է ներառում: Հաշվետվություններն ազատ ոճով են շարադրված, ռազմավարական պլանի, որակական ցուցանիշների, արդյունավետության գնահատման համատեքստում տվյալների վերլուծություն չի ներկայացվում: Հաշվետվությունների մեծ մասը հրապարակվում է կայքում: Այդուհանդերձ, հաշվետվողականության ապահովման մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն կա:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է պաշտոնական կայքում, որն ունի մատչելի կառուցվածք: Կայքում հասանելի են կենտրոնի գործունեությանն ուղղված բոլոր կարգերը, ընթացակարգերը, ընդունելության, քննությունների մասին համապարփակ տեղեկատվություն, կառուցվածքի, կրթական ծրագրերի, ամենատարբեր միջոցառումների, փոխհամագործակցությունների, միջազգային ծրագրերի և այլ գործընթացների մասին փաստաթղթեր:

ԳԿՄԿ-ին առնչվող միջոցառումները, նորությունները, իրադարձությունները, հայտարարությունները ներկայացվում են նաև Facebook, Youtube, Twitter սոցիալական հարթակներում:

Ստորաբաժանումների հաշվետվությունները հրապարակվում են կենտրոնի կայքում: Սակայն պետք է նշել, որ կայքում բացակայում են տնօրենի հաշվետվությունը, ֆինանսական հաշվետվությունները, գիտխորհրդի նիստերի արձանագրությունները, ամբիոնների հաշվետվությունները:

Կայքում հասանելի են ընդունելության հարցաշարերը, կրթական ծրագրերը, դասընթացների տեղեկագրքերը: Կայքը պարունակում է ԳԿՄԿ-ի մասնագիտությունների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն անգլերենով ու ռուսերենով, այնուամենայնիվ, արտասահմանցի ուսանողների ներգրավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրերի, օտար լեզվով դասավանդվող առարկաների վերաբերյալ

տեղեկատվությունը, ինչը դեռևս բացակայում է: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև, որ մասնագիտությունները և դրանց գրավչությունը ներկայացվեն սոցիալական հարթակներում, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում տեղակայված ԳԿՄԿ ամբիոններում կազմակերպվող միջոցառումները բավարար մակարդակով լուսաբանվեն:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԳԿՄԿ-ում հասարակության հետ կապերի ձևավորմամբ զբաղվում են հանրային կապերի և կարիերայի բաժինը,_արտաքին կապերի բաժինը և ԳԿՄԿ ամբիոնները:

Որպես հետադարձ կապի մեխանիզմ ԳԿՄԿ-ում առկա են հարցումներ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում: Կայքում, ինչպես նաև սոցիալական ցանցերում առկա են հետադարձ կապի միջոցներ: Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվում են նաև շահակիցների կողմից ներկայավող առաջարկությունների վերուծություններ:

Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը տեղի է ունենում նաև այն դասախոսների միջոցով, որոնք գործարար և հասարակական գործունեություն են ծավալում տարբեր մասնագիտական ոլորտներում և ապահովում հաստատության կապը տնտեսության, պետական հատվածի և աշխատաշուկայի հետ: Նման մոտեցումն առավել հեշտ ու արդյունավետ է դարձնում պրակտիկաների կազմակերպումը, համագործակցային նոր կապերի ստեղծումը, արտաքին շահակիցների ներգրավումը, ինչպես նաև նպաստում է մագիստրոսների՝ հետագայում աշխատաշուկայում աշխատանքի անցնելուն:

ԳԿՄԿ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստում են աշխատակից-ուսանող, ուսանող-դասախոս ոչ ֆորմալ շփումները, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում շրջանավարտների հետ անմիջական կապը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հասարակությանը գիտելիք փոխանցելու գործընթացը իրականացվում է ինչպես ԳԿՄԿ վարչական ստորաբաժանումների, այնպես էլ ԳԿՄԿ ամբիոնների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կենտրոնի կողմից կազմակերպվել են հեռավար ուսուցման վերաբերյալ վերապատրաստումներ՝ վերապատրաստման համապատասխան ծրագիրին համաձայն:

ԳԿՄԿ-ում գործում են հասարակությանը գիտելիքներ փոխանցելու տարբեր մեխանիզմներ, որոնցից են ձմեռային դպրոցները, տարաբնույթ դասընթացները: Կազմակերպված դասընթացներից, հանդիպումներից կարելի է նշել «Քաղաքական կառավարում» թեմայով դասընթացների շարքը, Իրավագիտական ամառային դպրոցը, քաղաքագիտական դասընթացների շարքը, «Հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ» բաց-դասախոսությունը, հանդիպում-դասընթացը՝ նվիրված էներգաարդյունավետության, էներգախնայողության և էներգետիկ համակարգի հիմնախնդիրներին և մարտահրավերներին, «Խորհրդարանական դիվանագիտություն» խորագրով դպրոցը, «Ես գիտեմ իմ իրավունքները» դասընթացը,

«Արդի տարածաշրջանային հիմնախնդիրներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով մասնագիտական դպրոցը:

ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայուն զարգացման ամբիոնը, որը Հանրապետության մոտ երեք տասնյակ դպրոցների հետ ունի գործընկերային հարաբերություններ, որի շրջանակներում դպրոցականները մասնակցում են էկոլոգիական դաստիարակության ու գրագիտության դասընթացների: Դասընթացները մշակվում են ինչպես ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի, այնպես էլ այլ գիտակրթական հաստատությունների մեթոդիստների կողմից:

Մյուս մեխանիզմներից է այն, որ ըստ ինքնավերլուծության առկա է ԶԼՄ-ների հետ մշտական համագործակցություն: Ուղիղ եթերների և տարատեսակ հեռուստառադիոհաղորդումների ընթացքում ԳԿՄԿ աշխատակիցների և դասախոսների մասնակցությամբ հասարակությանը ևս գիտելիք է փոխանցվում:

ԳԿՄԿ-ում տարեկան չորս անգամ հրատարակվում է «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի պարբերականը, որում զետեղվում են ինչպես ՊԴ համակազմի, այնպես էլ ասպիրանտների ու մագիստրոսների գիտական հոդվածները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ԳԿՄԿ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որը բնութագրվում է վարից վեր հաշվետվողականությամբ ու պարբերականությամբ, ամփոփվում տնօրենի տարեկան հաշվետվությամբ: Միևնույն ժամանակ, այս գործընթացը հիմնականում սահմանափակվում է քանակական տվյալների ներկայացմամբ, հաստատության ռազմավարական նպատակների, կրթական ծրագրերի կարիքների համատեքստում վերլուծությունների բացակայությամբ, ինչը կարող է խոչընդոտել խնդիրների դուրսբերմանը և հետագա բերելավումների պլանավորմանն ու իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԳԿՄԿ-ի գործունեության, մատուցվող ծառայությունների, կառուցվածքի, միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ինչպես պաշտոնական կայքում, այնպես էլ սոցիակալան մեդիայի հարթակներում: Սակայն միջազգայնացման տեսանկյունից կարևոր է, որ կայքի անգլերեն բաժնում օտար լեզվով ներկայացված լինեն կրթական ծրագրերը, ինչպես նաև առանձին դասավանդվող առարկաները, որը կնպաստի գրավչության բարձրացմանը և միջազգային ուսանողների ներգրավմանը:

Դրական է գնահատվում նաև այն, որ սկսվել է ամբիոնների, կրթական ծրագրերի գովազդումը և հարակության առավել լայն շերտերին իրազեկության ապահովումը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն փաստը, որ չկան բակալավրիական կրթական ծրագրեր՝ պետք է առավել մասշաբային դարձնել ամբիոնների կողմից թողարկվող կրթական ծրագրերի ներկայացումը սոցիակալան մեդիայի հարթակներում, ինչպես նաև կայքում մանրամասն ներկայացնել ամբիոնի գործունեությունը, պրոֆեսորադասախոսական կազմի մասին տվյալները, գիտահետազոտական ուղղությունները, ամբիոնային միջոցառումները: Այս ամենը կնպաստի հաստատության տեսանելիության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԳԿՄԿ-ում գործում են հասարակությանը գիտելիքներ փոխանցելու տարբեր մեխանիզմներ, որոնցից են ձմեռային դպրոցները, տարաբնույթ դասընթացները, սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ գործընթացների մասին տեղեկատվության տարածման մեխանիզմների լավարկումը կընդլայնի դրանցում ներգրավված շահակիցների շրջանակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳԿՄԿ-ում գործում են հաշվետվողականության մեխանիզմներ, կենտրոնը փորձում է ապահովել իր գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը պետության և հասարակության համար, հետադարձ կապի ապահովման նպատակով իրականացվում են քայլեր, գործում են հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է 8-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը ԳԿՄԿ-ի առաջնահերթ նպատակներից են և սահմանված են ինչպես 2014-2018թթ., այնպես էլ 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում:

Գործող ռազմավարական ծրագրում հռչակված միջազգայնացման հավակնոտ նպատակադրումները արտացոլված են առանձին Միջազգայնացման ռազմավարության փաստաթղթում, որը մշակվել է՝ հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման գործընթացի փորձագիտական խմբի խորհրդատվությունը:

ԳԿՄԿ-ի կրթական գործունեության միջազգայնացման խնդիրներն ու գործողությունները ներառում են մասնագիտական օտարալեզու դասընթացների պրակտիկայի ընդլայնումը (այդ թվում նաև հեռավար ձևաչափով), արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը: Գիտական գործունեության միջազգայնացման խնդիրներն ու գործողությունները ներառում են արտասահմանյան առաջատար համալարանների և գիտակրթական կենտրոնների հետ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակման խրախուսման մեխանիզմների մշակումն ու ներդրումը, միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:

Արտաքին կապերի և միջազգայնացման միջոցներն են միջազգային ծրագրերին մասնակցությունը, տարբեր գիտահետազոտական ինստիտուտների միջոցով համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի իրականացումը, միջազգային գիտաժողովների կազմակերպումն ու անցկացումը, արտերկրում կազմակերպված գիտաժողովներին մասնակցությունը, տեղական և արտերկրի բուհերի հետ համագործակցության հաստատումն ու դրանց իրականացումը և այլն:

Ըստ ինքնավերլուծությունում բերված և կից փաստաթղթերում ներկայացված տվյալների, ինչպես նաև փորձագիտական այցի արդյունքների, ի տարբերություն արտագնա շարժունության, ներգնա շարժունության ցուցանիշներն շատ չեն. կենտրոնը դեռևս գրավիչ չէ օտարազգի ուսանողների համար: Միջազգայնացմանն ուղղված գործընթացների արդյունավետության համալիր գնահատում դեռևս չի իրականացվում: Արտաքին կապերի բաժնի հաշվետվությունները ոչ միշտ են փոխկապակցվում ռազմավարությանը, ուստի պարզ չի դառնում, թե որքանով են իրագործվում նպատակներին կից գործողությունները, որքանով են ձեռքբերվում նախանշված վերջնարդյունքները: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարությունը հաստատվել է 2020թ. հունվարին և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետագայում հաշվետվության մեջ պլանավորվում է ռազմավարության ցուցանիշների ներառումը14:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԳԿՄԿ-ի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ գործունեությունը կազմակերպում է ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը, որի գործառույթները ներառում են ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև կապերի հաստատումը, ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչակազմի փոխանակման ծրագրերի մասնակցությանն առնչվող աշխատանքների կազմակերպումն ու կարգավորումը, այլ երկրներից ուսանողների հավաքագրմումը, դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների վերլուծումը, դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը և այլն: Ստորաբաժանման աշխատանքները համակարգում է բաժնի պետը, որը հաշվետու է ԳԿՄԿ տնօրենին:

Արտաքին կապերի բաժնից բացի գործում է ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների ցանց, որոնց հետ բաժինը ակտիվորեն համագործակցում է միջազգայնացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Այնուամենայնիվ, ամբիոնային միջազգայնացման պատասխատանուներն այդ աշխատանքը կատարում են առանց լրացուցիչ վարձատրության, և հիմնական մոտիվացիան է միջազգային ծրագրերի մասնակցությունը:

[14] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Արտաքին կապերի բաժնում աշխատում են երկու աշխատակից, որոնցից առաջատար մասնագետը համակարգում է վիզաների տրամադրման հետ կապված նախապատրաստական աշխատանքները: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ բաժնի գործառույթների հստակ իրականացման և միջազգայնացման գործընթացներում առավել մեծ ներգրավման համար ԳԿՄԿ-ը աշխատակիցների առավել մեծ թվի ընդգրկման կարիք ունի:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որոշ ամբիոններ ակտիվորեն ներգրավված են միջազգային տարբեր ծրագրերում: Համավարակով պայմանավորված՝ 2020թ.-ին չեղարկվել են շարժունության բոլոր ծրագրերի իրականացումը, սակայն բաժինը շարունակել է գործել՝ մշակելով կնքելով 17 նոր համագործակցության համաձայնագիր և հուշագիր, որ կազմում է ընդհանուր կնքված համաձայնագրերի և հուշագրերի 34%-ը:

Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում իրականացվում է նաև կարողությունների զարգացման ծրագիր՝ Էրազմուս+ Մենվիպրո՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» ծրագրի շրջանակներում, որի արդյունքում ԳԿՄԿ-ում տեղակայված է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա (ERLEP): ԳԿՄԿ-ն ընդգրկված է նաև ԵՄ Էրազմուս + ARMDOCT «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» ծրագրում:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Ըստ ինքնավերլուծության՝ ԳԿՄԿ-ն ունի շուրջ 50 պայմանագիր արտերկրյա տարբեր բուհերի և գիտակրթական կազմակերպությունների հետ: Վերջին 3 տարիներին դրանց թիվն ավելացել է (կամ վերականգնվել են) 25-ով: ԳԿՄԿ-ի համագործակից երկրների շարքում ներկայացվում են Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, ՈՒկրաինայի, Բելգիայի, Իտալիայի, Վրաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի շուրջ 20 բուհեր և հաստատություններ: Տուշայի համալսարանի հետ համագործակցության հաջողված փորձը տարածվել է մի շարք ամբիոններում:

Տեղական համագործակցության լավ օրինակ է 2017-2018 ուսումնական տարվանից «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի ներդրումը հեռավար ձևով՝ ԳԿՄԿ-ի և ՀՀ ՊԿԱ-ի հետ համատեղ դիպլոմի շնորհմամբ: Ծրագիրը մշակվել է՝ Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագրով՝ Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ:

ԳԿՄԿ-ում որոշ ՄԿԾ-ների գծով («Կառավարում», «Ֆինանսական վարչարարություն» և «Շուկայաբանություն և որակ») մեկնարկել են կրկնակի դիպլոմավորման գործընթացները, ԳԿՄԿ-ի ամբիոնները, ուսանողների շարժունության ժամանակ ուսումնական պլանների տարբերությունների հետ կապված խնդիրները

լուծելու համար իրականացնում են բենչմարքինգ, որի հիման վրա էլ փոփոխություններ են կատարվում կրթական ծրագրերում: Մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվել է ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» մագիստրոսական կրթական ծրագրի դասընթացների բենչմարքինգ գործընկեր համալսարանների դասընթացների հետ: Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը ակտիվորեն համագործակցում է Ֆրանսիայի Փոլ Սաբատիե (Թուլուզ 3) համալսարանի հետ և բենչմարքինգի համար ընտրված է այդ համալսարանը:

ԳԿՄԿ-ի դեպքում միջազգայանացումը կենտրրոնի առանցքային նպատակներից է, և միջազգայնացման ուղղությամբ կենտրոնը քայլեր իրականացնում է, սակայն, հարկ է նշել, որ ինքնավերլուծության մեջ ներկայացված ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության ցուցանիշներն այդքան էլ բավարար չեն և չեն համապատասխանում կենտրոնի ամբիցիաներին:

2017թ. արտաքին կապերի բաժինը իրականացնել է ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգայնացման գործընթացի և ծրագրերի մասին հարցում, որի վերաբերյալ ներկայացվել է ամփոփ հաշվետվություն, որտեղ նախանշված են գործողությունների պլանը յուրաքանչյուր գիտական կազմակերպության և դրանում տեղակայված ամբիոնի առումով: Միևնույն ժամանակ ԳԿՄԿ-ն չունի հստակ պարբերականությամբ իրականացվող համապատասխան վերլուծություն, որը կպարզեր և կամբողջացներ կենտրոնի միջազգայնացման համատեքստում յուրաքանչյուրի ամբիոնի ձեռքբերումները, ցուցանիշների բարձր չլինելու պատճառները և զարգացման միտումները:

Անգլերեն լեզվով դասավանդվող դասընթացների ցանկում ներառված են երկու մասնագիտական կրթական ծրագրի՝ «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն», և «Բնապահպանություն և բնօգտագործում» պարտադիր դասընթացների մեծամասնությունը[15]:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԳԿՄԿ-ն կարևորում է իր հետապնդած ռազմավարական նպատակներին հասնելու գործում օտար լեզուների իմացության բարձր մակարդակ ունեցող վարչական աշխատակիցների, դասախոսների, գիտաշխատողների և ուսանողների առկայությունը:

2017-18 ուստարում ՀՀ ԳԱԱ դասախոսական ու վարչական աշխատակազմի վերապատրաստման ծրագրի շրջանակներում օտար լեզուների ամբիոնի և ՈԱ բաժնի կողմից անցկացված հարցման արդյունքների հիման վրա անցկացվել է ՊԴ կազմի օտար լեզվի (անգլերեն) թեստավորում և այնուհետև վերապատրաստում:

ԳԿՄԿ-ն իրականացրել է թեստավորումներ՝ պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսանողական համակազմի շրջանում օտար լեզվի իմացության մակարդակն

[15] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ստուգելու նպատակով: Արդյունքում գրանցվել է և՛ ՊԴ, և՛ վարչական կազմերի անգլերեն լեզվի իմացության որոշակի աճ: Մասնավորապես՝ ՊԴ կազմի շրջանակներում A1 մակարդակի լեզվի տիրապետողների թիվը 2020թ.-ին 0% է 2018թ.-ի 7 հոգու հետ համեմատած, իսկ A2 մակարդակի տիրապետողների թիվը նվազել է 82.6%-ով՝ կազմելով 7 հոգի՝ ի տարբերություն 2018թ.-ի 23 հոգու: Առավել մեծ փոփոխություն գրանցվել է B2 մակարդակում՝ 1 հոգի նման մակարդակ է գրանցել 2018թ.-ին, իսկ 2020թ.-ին արդեն 30 հոգի: Լեզվի իմացության C1 մակարդակում նույնպես դրական աճ է գրանցվել՝ 20%-ի չափով: 2017թ.-ին ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ բացվել է Անգլիական ակումբը, որի հիմնական խնդիրներն են հաստատված ծրագրերով անգլերեն լեզվի բարձր որակավորում ունեցող դասախոսների միջոցով սկսնակ և ոչ սկսնակ ուսանողների հիմնական կրթական ծրագրերից դուրս վերոնշյալ բոլոր լեզուներով ուսուցանումը և բարձրագույն կրթություն ունեցող այլ մասնագետների վերապատրաստումը: Ուսանողների շրջանում օտար լեզուների տիրապետելու ցուցանիշները ըստ տարիների հետևյալն են. 2017-2018թթ.՝ 92,8 %, 2018-2019թթ.՝ 94%, 2019-2020թ.՝ 91 %: Այն ամբիոններում, որտեղ առկա են միջազգային շարժունության ծրագրեր, ներդրվել են օտար լեզվով դասավանդվող շուրջ 15 դասընթացներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում միջազգայնացման և արտաքին կապերի զարգացմանն ուղղված ԳԿՄԿ-ի կողմից իրականացված աշխատանքները: Մասնավորապես, նախորդ հավատարմագրումից հետո ԳԿՄԿ-ն կանոնակարգել է ոլորտի աշխատանքները՝ մշակելով զարգացման ռազմավարություն, որի հաջող իրականացումը կարող է նպաստել առավել թիրախավորված աշխատանքին: Նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունն ակտիվացրել է իր կապերը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ, որը նպաստել է կրթական ծրագրերում և տարբեր դասընթացներում միջազգային փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի միջազգայնացումը ԳԿՄԿ-ի կողմից իրականացվող ոչ բոլոր կրթական ծրագրերում է տարածված:

Դրական է, որ հաստատությունում ներդրվել են անգլերենով դասընթացներ, որոնց ակտիվացումը կնպաստի կրթական ծրագրերի միջազգայնացմանը, ուսանողների շարժունության մակարդակի բարձրացմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում այն ջանքերը, որը Արտաքին կապերի բաժինն իրականացնում է ամբողջ հաստատության միջազգայնացման և արտաքին կապերի ակտիվացման հետ կապված՝ նպաստելով դասախոսների միջև փոխանակման ծրագրերի ակտիվ մասնակցությանը և կարողություններիի զարգացմանը:

Դրական է, որ ԳԿՄԿ-ն ջանքեր է գործադրում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, ինչը վկայում է, որ վերջին տարիներին բարձրացել է դասախոսների շրջանում անգլերենի իմացությունը:

Դրական է այն, որ որոշ ՄԿԾ-ների գծով սկսվել են կրկնակի դիպլոմավորման գործընթացների նախապատրաստական աշխատանքներ, սակայն գործընթացն ակտիվացման կարիք ունի:

Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ Արտաքին կապերի բաժնի գործունեության արդյունավետության ցուցիչները հստակ և չափելի չեն, պարզաբանված չեն նաև՝ ինչպես են ամբիոնները և կառուցվածքային այլ ստորաբաժանումներն ընտրվում և մասնակցում միջազգայնացման գործընթացներին, որքանով է դա համարվում զարգացման գերակա ուղղություն:

Կարիք կա միջազգայնացման ակտիվ ցուցանիշներով ամբիոնների հաջողված փորձը տարածելու և ավելի շատ թվով ամբիոններ ներառելու միջազգային ծրագրերում, ինչը կնպաստի լավագույն փորձի տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո կենտրոնը կանոնակարգել է արտաքին կապերին և միջազգայնացմանն ուղղված գործընթացները, որոնք ազդել են նաև կրթական ծրագրերի ընթացիկ և կարողությունների զարգացման վրա, ավելացել է համագործակցությունը տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, քայլեր են կատարվել օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է 9-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ն իր ռազմավարությամբ կարևորել է Որակի ներքին ապահովման գործընթացների քաղաքականության, թափանցիկության ու հաշվետվողականության ապահովումը:

Ըստ կենտրոնի որակի ապահովման հայեցակարգի՝ կրթության որակը Կենտրոնի կողմից դիտարկվում է ոչ միայն որպես ռազմավարական նպատակ գիտելիքահենք հասարակության ստեղծման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար, այլև ներքին և արտաքին ազդակների և մրցակցային դաշտի պայմաններում՝ որպես ռազմավարական միջոց, կենտրոնի գործունեությունը միջազգային ասպարեզում զարգացնելու համար: Կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է Կենտրոնի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրին: Կենտրոնը կարևորում է այնպիսի կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների ստեղծումն ու տրամադրումը, որոնք ձևավորված են բավարարելու միջազգային, ազգային և հանրային կարիքները ՀՀ-ում և միջազգային մակարդակներում տնտեսության ու հանրության պահանջների փոփոխությունների կանխատեսմամբ:

2014թ.-ին հաստատված ԳԿՄԿ որակի ապահովման ձեռնարկը սահմանում է ՈԱ սկզբունքները, համակարգի նպատակներն ու խնդիրները, հիմնական ոլորտները, համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործընթացները, որակի շարունակական բարելավման մեխանիզմները և ՈԱ միտված բոլոր կանոնակարգերը, կարգերն ու ընթացակարգերը: Հարկ է նշել, որ 2014 թվականից որակի ապահովման ձեռնարկը չի վերանայվել:

ՈԱ գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ է իրականացրել Տուշայի համալսարանի և Թուլուզի Պոլ Սաբատիե համալսարանի օրինակներով:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԳԿՄԿ որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու նպատակով 2013թ.-ից ԳԿՄԿ-ում գործում է Կրթության որակի ապահովման բաժինը: Նախորդ հավատարմագրման արդյունքներից ելնելով՝ Որակի ապահովան բաժնի աշխատակազմը համալրվել է սոցիոլոգի հաստիքով: Համաձայն ինքնավերլուծության՝ հաշվի առնելով ԳԿՄԿ ամբիոնների տարածվածության աշխարհագրությունը՝ վերջին շրջանում ներդրվել է նաև որակի կառավարման նոր համակարգ՝ որակի ապահովման ամբիոնային պատասխանատուների (այսուհետ՝ ՈԱԱՊ) համակարգը, որը տարեցտարի դառնում է առավել գործուն և աշխատող մեխանիզմ: Փորձագիտական խմբի հետ կենտրոնի ներքին շահակիցների քննարկումները փաստում են, որ այս համակարգը նպաստում է առավել արդյունավետ հաղորդակցմանը ներքին շահակիցների շրջանում: Այդուհանդերձ, համագործակցության արդյունավետության աստիճանը նույնը չէ ԳԿՄԿ բոլոր ամբիոններում, և հաճախ պայմանավորված է տվյալ ամբիոնի վարիչի՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավվածությամբ:

Յուրաքանչյուր տարվա բյուջեի մեջ առանձին հոդվածով պլանավորված ընդհանուր ծախսերի առնվազն 2 տոկոսի չափով հատկացում է նախատեսվում կրթության որակի բարելավման միջոցառումների գծով: Այդ գումարն ուղղվում է որակի ապահովմանն ուղղված տարատեսակ վերապատարաստումների իրականացմանը: Ինչպես օրինակ վերապատրաստումներ են կազմակերպվել հետևյալ թեմաներով. «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջամբիոնային կապերի սերտացում և որակի ներբուհական համակարգի զարգացում» թեմայով ամբիոնների վարիչների հետ 3-օրյա սեմինար-վերապատրաստումը Ծաղկաձորում, 2020 թվականին՝ «Կրթական ծրագրերի և ներքին մոնիթորինգի կազմակերպում» թեմայով 2-օրյա վերապատրաստումը Երևանում:

Ըստ ինքնավերլուծության՝ 2014 թ.-ից նաև գործում է Որակի ապահովման մշտական հանձնաժողովը, որը պարբերական նիստեր է գումարում, որտեղ քննարկվում են բարելավման պլանի կատարման ընթացքը, ՈԱ ներբուհական խնդիրները, վերանայման ենթակա կանոնակարգերը, ընթացակարգերն ու մեխանիզմները և որակի ներքին կառավարման այլ հարցեր: Հանձնաժողովում ընդգրկված են վարչական, դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչներ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Համաձայն ինքնավերլուծության՝ կենտրոնը մշտապես կարևորում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Մասնավորապես, ներքին շահակիցները ընդգրկված են կրթության որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական ու դասախոսական ընթացիկ հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներին, որոնք ևս հնարավորություն են տալիս ընթացիկ խնդիրները վեր հանել: Ընդգրկված են ԳԽ կազմում, ինչպես նաև իրենց մասնակցությունն են ունենում ՈԱ գործընթացներում որպես ուսումնական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչներ: Ավագների խորհուրդը ևս իր դերակատարումն է ունենում որակի ապահովման գործընթացներում՝ թույլ տալով տարբեր խմբերի ուսանողներին իրենց խնդիրները միջնորդավորված ներկայացնել ավագների միջոցով:

Իսկ արտաքին շահակիցները ներգրավվում են կրթական ծրագրերի վերաբերյալ քննարկումներում, ատեստավորման հանձնաժողովներում, ինչպես նաև մասնակցում են մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներին: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ թեև արտաքին շահակիցների բավարարվածությունը ուսումնասիրվում է, սակայն տվյալ գործընթացները կանոնակարգված չեն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Համաձայն ինքնավերլուծության ՝ կենտրոնի ՈԱ գործընթացները իրականացվում են ՊԻԳԲ շրջափուլով: Գործող կարգերից, ընթացակարգերից և կանոնակարգերից շատերը վերանայվել, լրամշակվել և բարելավվել են 2015-2020 թվականներին՝ դրանց գործարկման ընթացքում: Այդուհանդերձ, փորձագիտական քննարկումները ցույց տվեցին, որ դրանց վերանայումն իրավիճակային է իրականացվում՝ կախված տվյալ պահին եղած անհրաժեշտությունից:

2020 թվականին ուսուցման՝ առցանց եղանակին անցնելու կապակցությամբ ստեղծվել են նոր կարգեր ուղղված ուսանողների և դասախոսների շրջանում առցանց դասավանդման որակից գոհունակության բացահայտմանը, ինչպես նաև կազմվել են հարցաթերթեր հետազոտության և ուսումնառության փոխկապակցվածության աստիճանից գոհունակության բացահայտան համար:

Որակի ապահովման մեխանիզմների կիրառմամբ ուսումնասիրվել են նաև հետազոտական և միջազգայնացմանն ուղղված կենտրոնի գործընթացները, այդուհանդերձ կենտրոնում կառավարմանն ու վարչարարությանն առնչվող գործընթացների ուսումնասիրման պակաս դեռևս կա: Նախորդ հավատարմագրման արդյունքները հաշվի առնելով՝ կենտրոնը նախատեսել է ներդնել նաև Ինքնագնահատման և գործընկերային գնահատման մեխանիզմներ, սակայն մեթոդական վրիպակների պատճառով գործընթացն իր ավարտին չի հասել և հնարավորություն չի եղել արդյունավետության գնահատման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առաջիկայում կենտրոնը քայլեր է նախատեսում այս գործընթացների համակողմանի իրականացման համար:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԳԿՄԿ-ն իր առաջին ինքնավերլուծությունն իրականացրել է 2014 թվականին: 2017թ.-ին Կենտրոնում հաստատվել է Թերությունների վերացման ծրագիրը, որը հիմնված է եղել ինքնավերլուծության և փորձագիտական խմբի զեկույցում տեղ գտած դիտողությունների վրա: Ծրագրի իրականացման մշտադիտարկման նպատակով բոլոր չափանիշների գծով միջնաժամկետ հաշվետվությունը ՈԱԱԿ է ներկայացվել 2018 թվականին: Այստեղ ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանում ԳԿՄԿ ստանձնած և իրականացված գործողությունները:

Կառուցվածքային բոլոր մակարդակներում առկա է հաշվետվողականության համակարգ: Հաշվետվություններն իրենց տեղն են գտնում նաև ԳԿՄԿ կայքում: Այդուհանդերձ, ներկայացված հաշվետվությունները և ԳԿՄԿ վերահավատարմագրման նպատակով իրականացված ինքնավերլուծությունը բավական նկարագրողական են, ներկայացնում են որոշ քանակական տվյալներ և արտաքին գնահատման համատեքստում փաստերի համակցման ու վերլուծության գործընթացի համար համակողմանի պատկերացում չեն տալիս:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳԿՄԿ պաշտոնական կայքում Որակի ապահովման բաժնի համար նախատեսված հատվածում ներկայացված են որակի ապահովմանն առչվող փաստաթղթերը՝ կանոնակարգեր, ընթացակարգեր, հաշվետվություններ և այլն: Նախորդ հավատարմագրումից հետո ներդրված մեխանիզմի համաձայն դասընթացներից գոհունակության հարցումները նախ ուղարկվում են ամբիոնների վարիչներին՝ ի գիտություն, ապա մեկ օր անց՝ նաև յուրաքանչյուր դասախոսին անհատական էլեկտրոնային նամակի միջոցով՝ անհատապես իր արդյունքներին ծանոթանալու համար: Բացի այդ, դասախոսների և ավագների հետ պարբերաբար հանդիպումներ են տեղի ունենում և քննարկվում են առաջացած խնդիրները: Այդուհանդերձ, տարբեր շահակիցների հետ ունեցած հանդիպումները փաստեցին, որ արդյունքների մասին տեղեկացվածությունը դեռևս բոլորի վրա չի տարածվում:

ԳԿՄԿ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ գործատուների կարծիքի ուսումնասիրումը և գնահատումը իրականացնելու նպատակով հաճախակի հանդիպումներ են անցկացվում վերջիններիս հետ: Ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, ուսանողները հարցումների արդյունքների մասին տեղեկանում են բանավոր կերպով՝ ՈԱ բաժնի աշխատակիցների հետ հանդիպումների ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կենտրոնում առկա են որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, հիմքեր են ստեղծվել դրանք բարելավելու և զարգացնելու ուղղությամբ:

Վերջին տարիներին ներդրվել է որակի ապահովման ամբիոնային պատասխանատուների համակարգը, ինչը ևս նպաստում է որակի ապահովման գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը՝ հաշվի առնելով կենտրոնի կառուցվածքը և ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում տարբեր ամբիոնների տեղակայված լինելը: Սակայն Առանձին ամբիոնների գծով ՈԱ պատասխանատուն ամբիոնի վարիչն է կամ տվյալ ծրագրի պատասխանատուն, որը միաժամանակ կարող է լինել նաև ԳԱԱ համապատասխան ինստիտուտի տնօրենը և միջազգայնացման պատասխանատուն: Նման գերբեռնվածությունը կարող է խոչընդոտել սահմանված նպատակների իրականացումը:

Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցները ներգրավվում են ՈԱ գործընթացներում, և նախորդ հավատարմագրումից ի վեր տվյալ գործընթացները բարելավվել են, մասնավորապես դրական միտում է նկատվում ներքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների ներդրման գործընթացում: Կենտրոնում ըստ պահանջի աշխատանքային խմբեր են կազմվում, ինչը թույլ է տալիս օպերատիվ լուծումներ տալ ծառացող խնդիրներին: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին շահակիցներին իրականացվող հարցումների արդյունքների վերաբերյալ առավել մեծ հասանելությունը կնպաստի ընթացիկ գործընթացների և գործող ընթացակարգերի առավել մանսրամասն ծանոթացմանը՝ շարունակական բարելավման հիմքեր ստեղծելով:

Դրական հանգամանք է գործատուների հետ հանդիպումների հաճախակի անցկացումը և նրանց կարծիքի ուսումնասիրությունը:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ կենտրոնն անհրաժեշտություն ունի անդրադառնալու կառավարման և վարչարարության գործընթացներին, տվյալներ հավաքագրելու կառավարչական որոշումների կայացման համար: Այս գործընթացների առավել կանոնակարգվածությունը կնպաստի արժանահավատ որոշումների կայացմանը և հաստատության կողմից նախանշված նպատակների իրագործմանը: 2014թ.-ին հաստատված ԳԿՄԿ որակի ապահովման ձեռնարկը ևս թարմացման կարիք ունի՝ հաշվի առնելով առկա մարտահրավերներն ու կենտրոնում կատարված փոփոխությունները:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև կենտրում ընթացող գործընթացների իրականացման համար որակի կառավարման ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլի կիրառումը, ինչի որոշ օրինակներ խմբի կողմից դիտարկվել են փորձագիտական գնահատման շրջանակներում: Այդուհանդերձ, անհրաժեշտություն կա նաև այս սկզբունքը կիրառելի դարձնել նաև կառավարմանը, մասնագիտության կրթական ծրագրերին և հաստատության մյուս տիրութներին առնչվող գործընթացների արդյունավետ իրականացման համար, որը կնպաստի ԳԿՄԿ բոլոր ոլորտներում որակի մշակույթի տարածմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԳԿՄԿ-ում առկա են տվյալների հավաքագրման որոշ մեխանիզմներ, սակայն դրանք բարելավման կարիք ունեն, քանի, որ հավաքագրված տվյալները հիմնականում քանակական բնույթ ունեն, և կենտրոնը կարող է դժվարություններ ունենալ դրանք հետագա բարելավման հիմքում դնելիս: Փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնը որակի ապահովման գործընթացների և կատարված աշխատանքների արդյունքների մասին տեղեկատվության տարածմանն ուղղված քայլեր իրականացնելու կարիք ունի, ինչը կնպաստի որակի

ապահովման համակարգի թափանցիկության բարձրացմանը և վստահության ավելացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո բարելավվել են որակի ներքին ապահավովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, տրամադրվել են համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ, ընդլայնվել է որակի ապահովման համակարգում ներգրավված ներքին և արտաքին շահակիցների շրջանակը, մի քանի գործընթացներ անցել են որակի կառավարման շրջափուլով, որոշ քայլեր են իրականացվել տեղեկատվության հասանելիության մակարդակի ավելացման ուղղությամբ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԳԿՄԿ-ն բավարարում է 10-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

Մենուա Սողոմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30 դեկտեմբերի 2021

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մենուա Սողոմոնյան՝ 2004 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրան: 2007-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 2007-2008 թթ. դասախոսել է Երևանի պետական բժշկական համալսարանի պատմության ամբիոնում: 2008-2015 եղել է ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասիստենտ, 2008-2011 թթ.-ին՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2019թթ.-ին՝ ԵՊՀ դիտական քարտուղար, 2019 թ.-ին՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2015 թ.-ից ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ է:

Մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Ժան-Մարկ Լոբակարո՝ 1987-1992 թթ. սովորել է Մոնպելյեի համալսարանում (բակալավր և մագիստրատուրա), ստացել է վերարտադրման և զարգացման ոլորտում դոկտորի կոչում: 1997թ.-ից Կլերմոն Օվերն համալսարանում մոլեկուլային ֆիզիոլոգիայի պրոֆեսոր է: 2004թ.-ից աշխատել է Ֆրանսիայի հետազոտությունների և միջազգային համագործակցության նախարարությունում, Իտալիայի՝ կրթության, համալսարանի և հետազոտության նախարարությունում՝ էնդոկրինոլոգիայի, քաղցկեղի, լիպիդների ուղղությամբ: 2012-2018թթ. աշխատել է քաղցկեղի դեմ հետազոտությունների ֆլամանդական հիմնադրամում: 2015-2019թթ. եղել է ֆրանս-իտալական համալսարանի գիտական խորհրդում: 2017թ.-ից Ֆրանսիայի Կլերմոն Օվերն համալսարանի Գենետիկայի, վերարտադրման և զարգացման ինստիտուտի Կենսաբանության ֆակուլտետի փոխդեկան է, իսկ 2018թ.-ից՝ Բարի համալսարանի ֆիզիլոգիայի ամբիոնի հրավիրված դասախոս է: 2019թ. մայիսից դարձել է Մոնղոլիայի ազգային համալսարանի առողջապահական գիտությունների և կյանքի դոկտորական դպրոցի միջազգային փորձագիտական խորհրդի անդամ: 2010թ. պարգևատրվել է Կլերմոն-Ֆերան քաղաքի բրոնզե մեդալով, 2017թ.՝ Ֆրանսիայի կրթության և հետազոտությունների նախարարության՝ «Ակադեմիական արմավենու ասպետ» շքանշանով:

Սոնա Տոնիկյան՝ 1994 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2002 թ.-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1994 թ.-ից առ այսօր դասախոսում է ԵՊՀ արաբագիտության ամբիոնում:1994-1997 թթ. եղել է ԵՊՀ, Արաբագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, 1997-2007 թթ. ԵՊՀ, Արաբագիտության ամբիոնի ասիստենտ, 2007-2009 թթ. ԵՊՀ, Արաբագիտության ամբիոնի դոցենտ, 2009-2016 թթ. ԵՊՀ, Արաբագիտության ամբիոնի ամբիոնի վարիչ, 2016-ից առ այսօր ԵՊՀ, Արաբագիտության ամբիոնի դոցենտ է:

Մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Վարազդատ Ավետիսյան՝ 2013 թվականին ավարտել է Գավառի պետական համալսարանի մագիստրատուրան «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ՝ Ճարտարագետի որակավորմամբ: 2016 թ.-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2013թ.-ից առ այսօր դասավանդում է Գավառի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում: 2017թ.-ից առ այսօր դասավանդում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Դասախոսների վերապատրաստման և շարունակական կրթության կենտրոնում: 2018 թ.-ից առ այսօր աշխատում է Գավառի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝ որպես ամբիոնի վարիչ և դասախոս: Ծրագրավորման, արհեստական բանականության գիտակարգերի անհատ խորհրդատու է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում: «Լուսին մոբայլ» ընկերության համահիմնադիրն ու տեխնոլոգիական տնօրենն է:

Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Սոնա Անտոնյան՝ 2015-2019 թթ. սովորել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 2019-2021 թթ. սովորել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում Քաղաքագիտություն (Ազգային անվտանգություն) մասնագիտության մագիստրատուրայում: ԵՊՀ «Կրթության կազմակերպում» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի և Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ է:

2021թ.-ին մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

13.09.2021 թ. - 16.09.2021 թ.

	13.09.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ԳԿՄԿ տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենների և գիտական քարտուղարի հետ	10:40	11:50	70 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:10	12:50	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում շրջանավարտների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

	14.09.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ՀՀ ԳԱԱ Նախագահության հետ	09:30	10:20	50 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Դասալսումներ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (10-12 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե

7	Հանդիպում Արտաքին կապերի, Հանրային կապերի և կարիերայի, Տեղեկատվական տեխնոլոգիաների, Ֆինանսատնտեսական, Անձնակազմի կառավարման, Ասպիրանտուրայի բաժինների ղեկավարների հետ	16:40	17:40	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	19:00	70 րոպե

	15.09.2021թ.			***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Արևելագիտություն՝ թուրքագիտություն» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» կրթական ծրագրի պատասխանատու/ներ/ի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Արևելագիտություն՝ թուրքագիտություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում ուսմասի ղեկավարի, դեկանի, գիտական ղեկավարի հետ			12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե

5	Հանդիպում «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Արևելագիտություն՝ թուրքագիտություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» կրթական ծրագրի ուսանողների հետ	14:20	15:20	60 րոպե
5	Բաց հանդիպում			15:30	16:30	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	19:00	150 րոպե

	16.09.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	09:30	11:30	120 րոպե
2	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	12:00	13:00	60 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:50	90 րոպե
6	Հանդիպում ԳԿՄԿ ղեկավար կազմի հետ	18:00	18:30	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Գործատուների ներգրավվածությամբ բարելավումների իրականացումը հաստատող փաստաթուղթ (ամբիոնային արձանագրություն կամ այլ հիմք)	1
2.	Ներքին աուդիտը հավաստող հիմքեր	2
3.	Գիտական ղեկավարի պաշտոնի անձնագիր	2
4.	Ուսանողների մասնակցությամբ վարչական աշխատակազմի նիստերի արձանագրություններ	2
5.	Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների կիրառման քաղաքականության ու ընթացակարգերի մշակման հիմքեր	2
6.	Մարտավարական պլանավորման փաստաթուղթ	2
7.	Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասախոսների և ուսանողների բավարարվածության գնահատման հարցումների արդյունքներ	2
8.	Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցումների արդյունքներ	2
9.	Կայքի վերաբերյալ զոհունակության հարցումների արդյունքներ	2
10.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
11.	Ամբիոնների հաշվետվություններ	2
12.	Նիստերի արձանագրություններ /վերջին երեք տարիների համար/	2
13.	Դասացուցակներ /2021-2022 ուսումնական տարվա համար/	3
14.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
15.	Ավարտական աշխատանքներ / վերջին երեք տարվա համար յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	3
16.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ /եթե կան, յուրաքանչյուր ամբիոնից՝ հինգական/	3
17.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
18.	Ուսումնական խորհրդատուների կազմ, խորհրդատվության թեմաներ և հաշվետվություններ	3
19.	Ուսումնական խորհրդատվատության իրականացման կարգ	3

20.	Ամբիոնի հաստիքացուցակը	3
21.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	3
22.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	3
23.	Վերապատրաստման փաթեթներ	3
24.	Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	3
25.	Գիտական սեմինարների անցկացման գրաֆիկ, արձանագրություններ	3
26.	Հարցումների վերլուծություններ, բարելավման պլաններ/վերջին երկու տարվա համար/	3
27.	Առարկայական նկարագրեր	3
28.	Մագիստրոսական թեզերի թեմաների ցանկեր	3
29.	Միջազգային ուսանողների և ասպիրանտների քանակը ցույց տվող հիմքեր	4
30.	Առկա, հեռակա և հեռավար համակարգերում կրթություն իրականացնելու հիմքեր	4
31.	Կրթական կարիքների բարելավմանն ուղղված գործողությունների պլաններ	4
32.	Կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվություններ, առկայության դեպքում՝ բարելավման պլաններ	4
33.	Դասավանդման որակի մասին քննարկումների արձանագրություններ	4
34.	Կուրատորների հաշվետվություններ	4
35.	Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբի գործունեության հաշվետվություն	4
36.	Վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգի համաձայն իրականացված նիստերի արձանագրություններ	4
37.	Ուսանողների/շրջանավարտների կողմից կազմված CV-ների, վիդեո CV-ների օրինակներ	4
38.	ՀՀ ԳԱԱ-ի գիտաշխատողների թեմատիկ ֆինանսավորմամբ դրամաշնորհների ցանկեր (մագիստրանտների և ասպիրանտների թվերը՝ առանձին)	4
39.	Դասախոսական կազմի պաշտոնների անձնագրեր	5
40.	Դասախոսի գնահատման ուսանողական հարցումների վերլուծություններ	5
41.	Հարցումներ-կարիքների բացահայտում-վերապատրաստման շղթայի մասին փաստող հաշվետվություններ	5

42.	Հետազոտության արդյունքների ապրանքայնացման հայեցակարգ	6
43.	«Ամարաս» վերլուծական ուղեղային կենտրոնի ստեղծման վերաբերյալ հիմքեր	6
44.	«Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկայի նկարագիր	6
45.	Մագիստրոսական թեմաների ցանկ՝ հաստատված շահառու կազմակերպությունների հետազոտական պատվերների արդյունքում	6
46.	Մագիստոսների, ասպիրանտների և հայցորդների կողմից հրատարակած աշխատանքների տվյալներ, այդ թվում՝ միջազգային գիտական ամսագրերում	6
47.	Տարեկան միջոցառումների ծրագիր, որի հիման վրա կազմվում է ԳԿՄԿ բյուջեն	7
48.	Բյուջեի կատարողական և համապատասխան հաշվետվություններ	7
49.	Հաստիքացուցակ	7
50.	Քննական տեղեկագրի օրինակներ	7
51.	Գիտական ղեկավարի՝ ամբիոնի վարիչին ներկայացված հաշվետվությունների օրինակներ	8
52.	Միջազգային շարժունության ծրագրով վերադառնալուց հետո ուսանողների ներկայացրած հաշվետվություններ՝ օտարերկրյա բուհում իրենց ուսումնառության գործընթացի մասին, նաև՝ ՊԴ և վարչական աշխատակազմի համար	9
53.	Դասախոսների և ուսանողների շարժունության վիճակագրություն՝ ըստ ամբիոնների կամ մասնագիտությունների	9
54.	Որակի ապահովման բաժնի հաստիքացուցակ	10
55.	Ամբիոնային ՈԱ պատասխանատուների հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում տեղակայված ԳԿՄԿ լսարաններ, լաբորատորիաներ, ստորաբաժանումներ,
2. ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն,
3. Լսարաններ,
4. Համակարգչային լսարաններ,
5. Լաբորատորիաներ,
6. Դահլիճ-կոնֆերանս սրահ,
7. Հեռավար կրթության դահլիճ,
8. Ստորաբաժանումներ,
9. Գրադարան,
10. Էլեկտրոնային գրադարան,
11. Ընթերցասրահ,
12. Ճաշարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԳԿՄԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱ-Գիտությունների ազգային ակադեմիա

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

ԳԿՄԿ-Գիտակրթական միջազգային կենտրոն

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ